891.715
O-32

Н 32/3
13а

ՅՈՒՐԻ ՈԼԵՇԱ

ՅԵՐԵՎՑ ՀԱՍՏԼԻԿՆԵՐ

233

ՀԱՅԿԱՅ
ԳԵՂԱՐՎԵՍՏ

Н арм. 3-1219а
2011-05
891.71
О-32

ՅՈՒՐԻ ՈԼԵՇԱ

ՅԵՐԵՔ ՀԱՍՏԼԻԿՆԵՐ

Թարգմանեց Մ. ԱՐՄԵՆ

Гос. публичная б-ка ПОГАШЕНО
4520

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935 ՄՈՍԿՎԱ

02 09. 2013

5582

Տեխ. խմբ. Հ. ՔԱՐԱՄՅԱՆ
Շապիկը՝ Լ. ԳԵՆՋԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Ական ССР
Ա. ԱՄ. Ա. Мясн.жяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
40654-67

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԼԱՐԱԽԱՂԱՑ ԹԻԲՈՒԼԸ

ԳԼՈՒԽ 1

ԴՈԿՏՈՐ ԳԱՍՊԱՐ ԱՐՆԵՐԻԻ ԱՆՇԱՆԳԻՍՏ ՈՐԸ

Կախարդների ժամանակն անցել է։ Ամենայն հավանականությամբ նրանք իրականում յերբեք էլ գոյություն չեն ունեցել։ Այդ ամենը հնարքներ ու հեքյաթներ են բոլորովին փոքր յերեխաների համար։ Գարզապես մի քանի ձեռնածուներ կարողացել են այնպես խաբել ամեն տեսակի դատարկապորտներին, վոր այդ ձեռնածուներին թովիչի ու կախարդի տեղ են ընդունել։

Այդպիսի մի դոկտոր կար։ Անվանում եյին նրան Գասպար Արներիի։ Միամիտ մարդը, տոնավաճառի դատարկաշրջիկը կամ կիսավարտ ուսանողը նրան կարող եյին կախարդի տեղ ընդունել։ Յեվ իրոք, այդ դոկտորն այնպիսի զարմանալի բաներ եր անում, վոր դրանք, իսկապես հրաշքի եյին նմանվում։ Ի հարկե, նա վոչ մի ընդհանուր բան չուներ կախարդների ու շարլատանների հետ, վորոնք հիմարացնում են չափազանց դյուրահավատ ժողովրդին։

Դոկտոր Գասպար Արներին գիտնական եր։ Կարելի յե ասել, վոր նա ուսումնասիրել եր հարյուր գիտություն։ Համենայն դեպս, յերբեք յերկրում չեր յեղել Գասպար Արներից իմաստուն և գիտնական մարդ։

ԳԼՈՒԽ 1

ԴՈԿՏՈՐ ԳԱՍՊԱՐ ԱՐՆԵՐԻԻ ԱՆՀԱՆԳԻՍՏ ՈՐԸ

Կախարդների ժամանակն անցել է։ Ամենայն հավանականությամբ նրանք իրականում յերբեք էլ գոյություն չեն ունեցել։ Այդ ամենը հնարքներ ու հեքյաթներ են բոլորովին փոքր յերեխաների համար։ Պարզապես մի քանի ձեռնածուներ կարողացել են այնպես խաբել ամեն տեսակի դատարկապորտներին, վոր այդ ձեռնածուներին թովիչի ու կախարդի տեղ են ընդունել։

Այդպիսի մի դոկտոր կար։ Անվանում եյին նրան Գասպար Արների։ Միամիտ մարդը, տոնավաճառի դատարկաշրջիկը կամ կիսավարտ ուսանողը նրան կարող եյին կախարդի տեղ ընդունել։ Յեվ իրոք, այդ դոկտորն այնպիսի զարմանալի բաներ եր անում, վոր դրանք, իսկապես հրաշքի եյին նմանվում։ Ի հարկե, նա վոչ մի ընդհանուր բան չուներ կախարդների ու շարլատանների հետ, վորոնք հիմարացնում են չափազանց դյուրահավատ ժողովրդին։

Դոկտոր Գասպար Արներին գիտնական եր։ Կարելի յե ասել, վոր նա ուսումնասիրել եր հարյուր գիտություն։ Համենայն դեպս, յերբեք յերկրում չեր յեղել Գասպար Արներից իմաստուն և գիտնական մարդ։

Նրա ուսումնականության մասին գիտեին բոլորը՝ — և՛ ջաղացպանը, և՛ գինվորը, և՛ կանայք, և՛ մինիխաները։ Իսկ դպրոցականները նրա մասին յերգում եյին մի ամբողջ յերգ, այսպիսի կրկնությամբ՝ —

Ի՞նչպես աստղերին հասնել,
Աղվեսի պոչից բռնել,
Շոգի դարձնել ամեն քար, —
Գիտե դոկտորը մեր Գասպար։

Մի անգամ, ամռանը, հունիսին, յերբ շատ լավ յեղանակ եր, Գասպար Արներին վորոշեց մի հեռու գյուղանք վատաբել, խոտերի ու բզեզների մի քանի տեսակներ հավաքելու համար։

Դոկտոր Գասպարը չահել մարդ չեր և դրա համար ել վախենում եր անձրևից ու քամուց։ Տանից դուրս գալով, նա վզին փաթաթեց մի հատ շարֆ, հագավ փոշուց պաշտպանող ակնոցներ, ձեռնափայտ վերցրեց՝ վորպեսզի չսայթաքվի և ընդհանրապես գյուղանքի պատրաստվեց մեծ նախազգուշությունների։

Այս անգամին, որը հիանալի յեր՝ արևը հենց մի գլուխ փայլում եր՝ խոտն այնքան կանաչ եր, վոր մարդու բերանում նույնիսկ քաղցրության զգացում եր առաջացնում՝ թռչում եյին խատուտիկները, սուլում եյին թռչունները, թեթև քամին ֆռֆռում եր, ինչպես պարահանդեսի ոդային զգեստ։

— Այ, սա լավ է, — ասաց դոկտորը՝ — միայն թե, համենայն դեպս պետք է թիկնոց վերցնել, վորովհետև ամառային յեղանակը խաբուսիկ է։ Անձրև կարող է գալ։

Բժիշկն իր տնտեսության մասին կարգադրություններ արավ, փչեց ակնոցների վրա, վերցրեց կանաչ կաշվե իր արկղը՝ վոր ճամբրուկի յեր նման և գնաց։

Ամենահետաքրքիր տեղերը քաղաքից դուրս եյին՝ այնտեղ, ուր գտնվում եր Յերեք Հասալիկների պալատը։ Դոկտորն ամենից շատ այդ տեղերն եր հաճախում։ Յերեք Հասալիկների պալատը կանգնած եր հսկայական ծառաստանի կենտրոնում։ Ծառաստանը շրջապատված եր խորը ջրանցքներով։ Ջրանցքների վրա կախված եյին յերկաթե սև կամուրջներ։ Կամուրջները պաշտպանվում եյին պալատական պահակազորի կողմից՝ — գվարդիականներ, վոր ունեյին դեղին փետուրներով սև մոմլաթե գլխարկներ։ Ծառաստանի շուրջը, մինչև հորիզոն ձգվում եյին ծաղկաշատ մարգագետիններ, պուրակներ ու լճակներ։ Դա շատ լավ տեղ եր. գյուղանքի համար։ Այնտեղ աճում եյին խոտերի ամենահետաքրքիր տեսակները, այնտեղ բզզում եյին ամենագեղեցիկ բզեզները և յերգում եյին ամենաճաշակավոր թռչունները։

«Բայց վոտքով գնալու համար հեռու յե։ Յես կհասնեմ մինչև քաղաքի հողապատնեշը և կառք կվարձեմ։ Նա կհասցնի ինձ մինչև պալատի ծառաստանը», — մտածում եր դոկտորը։

Քաղաքի հողապատնեշի մոտ ժողովուրդ ավելի շատ կար, քան միշտ։

«Մի՞թե այսոր կիրակի յե, — կասկածեց դոկտորը։ — Չեմ կարծում։ Այսոր յերեքշաբթի յե»։

Դոկտորն ավելի մոտեցավ։

Ամբողջ հրապարակը լեփլեցուն եր ժողովրդով։ Դոկտորը տեսավ արհեստավորներ՝ մոխրագույն մահուդե պին-

ջակներով, վորոնք ունեյին կանաչ ծալքեր, նավաստիներ՝ կավագույն դեմքերով, ունեվոր քաղաքացիներ՝ գունավոր ժիլեթներով և իրենց կանանց հետ, վորոնց շրջազգեստները նման եյին վարդի թփերի, առևտրականներ՝ սափորներով, թեփշիներով, պաղպաղակարաններով ու կրակարաններով, հրապարակային լղար դերասաններ՝ կանաչ, դեղին ու խայտաբղետ, կարծես վերմակից կարված, բոլորովին փոքր յերեխաներ՝ վոր քաշում եյին ուրախ, շեկ շների պոչերից։

Բոլորը հավաքվել եյին քաղաքի դարբասների դիմաց։

Վիթխարի, տան բարձրություն ունեցող յերկաթե դարբասները խուլ կերպով փակված եյին։

«Ինչու յեն դարբասները փակված», — զարմացավ դոկտորը։

Ամբոխն աղմկում եր, բոլորը խոսում եյին բարձր, բղավում եյին, հայհոյում, բայց վոչ մի կարգին բան չեր կարելի հասկանալ։

Դոկտորը մոտեցավ մի ջահել կնոջ, վորն իր ձեռքի վրա բռնել եր մի հաստ, մոխրագույն կատու, և հարցրեց։

— Բարի յեղեք բացատրել, ինչ է տեղի ունենում այստեղ։ Ինչու յե ժողովուրդն այսքան շատ, ինչն է նրա հուզմունքի պատճառը և ինչու յեն փակ քաղաքի դարբասները։

— Գվարդիականները մարդկանց դուրս չեն թողնում քաղաքից։

— Իսկ ինչու դուրս չեն թողնում...

— Վորպեսզի նրանք չոգնեն նրանց, ովքեր արդեն քաղաքից դուրս են յեկել և գնացել են դեպի Յերեք Հաստլիկների պալատը...

— Յես վոչինչ չեմ հասկանում, քաղաքացուհի, և խընդրում եմ ներել ինձ...

— Ախ, միթե դուք չգիտեք, վոր այսոր, զինագործ Պրոսպերոն և մարզիկ Թիբուլը ժողովրդին առաջնորդեցին Յերեք Հաստլիկների պալատը գրոհով վերցնելու։

— Զինագործ Պրոսպերոն...

— Այո, քաղաքացի... Հողապատնեշը բարձր է և այն կողմում նստել են գվարդիական նշանաձիգները։ Վոչ վոք դուրս չի գա քաղաքից և նրանց, ովքեր գնացել են զինագործ Պրոսպերոյի հետ, պալատի գվարդիան կջարդի։

Յեվ իրոք, վորոտացին մի քանի՝ շատ հեռու կրակոցներ։

Կինը վար գցեց հաստ կատվին։ Կատուն շրմփաց հում խմորի պես։ Ամբոխը վորոտաց։

«Նշանակում է, յես բաց եմ թողել այս նշանավոր դեպքը, — մտածեց դոկտորը։ — Ճիշտ է, յես ամբողջ ամիսը սենյակից դուրս չեմ յեկել։ Յես աշխատում եյի փակված։ Յես վոչինչ չգիտեյի»...

Այդ ժամանակ, ավելի հեռվում, մի քանի անգամ խփեց թնդանոթը։ Վորոտը թռավ ինչպես խաղագնդակ և քամու հետ գլորվեց։ Վոչ միայն դոկտորը վախեցավ և արագ յետ գնաց մի քանի քայլ, այլև վողջ ամբոխը յետ նետվեց ու խառնոտվեց։ Յերեխաները լացեցին, աղավնիները թռան՝ թևերը շխշկացնելով, շները նստեցին և սկսեցին վոռնալ։

Սկսվեց ուժեղ թնդանոթաձգություն։ Բարձրացավ անյերևակայելի աղմուկ։ Ամբոխը հուպ եր տալիս դարպասները և բղավում եր։

— Պրոսպերո! Պրոսպերո!

— Կորչեն Յերեք Հասալիկները!

Դոկտոր Գասպարն իրեն բոլորովին կորցրեց։ Ամբոխի մեջ նրան ճանաչեցին, վորովհետև շատերը նրան դիտեին դեմքից։ Մի քանիսը նեռվեցին դեպի նա, կարծես նրա մոտ պաշտպանություն փնտրելով։

Բայց դոկտորն ինքը, հագիվ լաց չեր լինում։

— Ի՞նչ ե կատարվում այնտեղ։ Ի՞նչպես իմանալ, թե ինչ ե կատարվում այնտեղ, դարբասների յետևում։ Գուցե ժողովուրդը հաղթում ե, բայց գուցե և բոլորին գնդակահար են արել։

Այդ ժամանակ տաս հոգի վազեցին այն կողմ, վորտեղ հրապարակից կլիսվում եյին յերեք նեղ փողոցներ։ Անկյունում կար մի տուն, բարձր, հին աշտարակով։ Մնացածների հետ միասին, բժիշկն ևս վճռեց բարձրանալ աշտարակի վրա։ Աշտարակի ցածի հարկում լվացքատուն կար, վոր նման եր բաղանիքի։ Այնտեղ մութն եր, ինչպես ներքնահարկում։ Դեպի վեր եր գնում պտուտակաձև սանդուխքը։ Նեղ լուսամուտներով թափանցում եր լույսը, բայց նա շատ քիչ եր և բոլորը բարձրանում եյին դանդաղ, մեծ դժվարությամբ, մանավանդ վոր, սանդուխքը ջարդոտված եր և կոտրված ճաղերով։ Դժվար չե պատկերացնել, թե վորքան աշխատանք ու հուզմունք հարկ յեղավ դոկտոր Գասպարին, ամենավերին հարկը բարձրանալու համար։ Համենայն դեպս, դեռ քսաներորդ աստիճանի վրա, խավարի մեջ, հնչեց նրա ձիչը։

— Ախ, իմ սիրտս տրաքվում ե և յես կորցրի իմ կոշիկիս կրունկը!

Դոկտորն իր թիկնոցը կորցրել եր դեռ հրապարակում, թնդանոթի տասերորդ կրակոցից հետո։

Աշտարակի ծայրին կար մի տափակ տարածություն, շրջապատված քարե ճաղերով։ Այդտեղից տեսարան եր բացվում առնվազն հիսուն կիլոմետր շրջապատով։ Բայց ժամանակ չկար տեսարանով հիանալու, թեև տեսարանն արժեր դրան։ Բոլորը նայում եյին այն կողմը, ուր տեղի յեր ունենում ճակատամարտը։

— Յես հեռադիտակ ունեմ։ Յես միշտ հետս մանեմ ածում հեռադիտակ ութ ապակիներով։ Ահա նա,— ասաց դոկտորը և փոկը քանդեց։

Հեռադիտակը ձեռքից ձեռք անցավ։

Դոկտոր Գասպարը կանաչ տարածության վրա տեսավ բազմաթիվ մարդկանց։ Նրանք վազում եյին դեպի քաղաք։ Նրանք փախչում եյին։ Հեռվից մարդիկ թվում եյին բազմագույն դրոշակներ։ Գվարդիականները ձիերին նստած՝ հալածում եյին ժողովրդին։

Դոկտոր Գասպարը մտածեց, վոր այդ ամենը նման ե մոգական լապտերի նկարի։ Արևը վառ լուսավորում եր, կանաչը փայլում եր։ Ռումբերը պատռտվում եյին, ինչպես բամբակի կտորներ, բոցը յերևում եր միայն մի վայրկյան, կարծես ինչ վոր մեկն ամբոխի վրա արևի ճառագայթներ եր գցում։ Ձիերն աշտանակվում եյին, ծառս եյին լինում և հոլի պես արագ փռռում։

Յերեք Հասալիկների ծառատանն ու պալատը պարուրված եյին սպիտակ, թափանցիկ ծխով։

— Նրանք փախչում են!

— Նրանք փախչում են... ժողովուրդը հաղթված ե!

Վազող մարդիկ մոտեցան քաղաքին։ Մարդկանց ամբողջ կույտեր ընկնում եյին ճանապարհի վրա։ Թվում եր, թե կանաչի վրա փռվում են բազմագույն փալասներ։

Ռումբը սուլեց հրապարակի վրա։

Ինչ վոր մեկը, վախեցած, հեռադիտակը վար գցեց։ Ռումբը պայթեց և բոլորը, ովքեր կային աշտարակի ծայրին նետվեցին յետ, ներքև, աշտարակի մեջ։

Մի փականագործ, իր կաշվե գոգնոցով կախ ընկավ ինչ վոր կեռից։ Նա նայեց, տեսավ ինչ վոր սարսափելի բան և բղավեց վողջ հրապարակով.

— Փախեք! Նրանք բռնեցին զինագործ Պրոսպերոյին։ Նրանք հիմա կմտնեն քաղաք...

Հրապարակի վրա սկսվեց խուճապը։ Ամբոխը յետ նետվեց դարբասներից և հրապարակից վազ տվեց դեպի փողոցները։ Բոլորը խլացել էին թնդանոթաձգությունից։

Դոկտոր Գասպարը և ելի մի յերկու մարդ կանգ առան աշտարակի յերրորդ հարկում։ Նրանք նայեցին նեղ լուսամուտից, վոր բացված եր հաստ պատի մեջ։

Միայն մեկը կարողացավ նայել ինչպես հարկն է։ Մյուսները նայում էին մեկական աչքով։ Դոկտորը նույնպես նայում եր մի աչքով։ Բայց նույնիսկ մի աչքի համար էլ՝ տեսարանը բավականաչափ սարսափելի յեր։

Վիթխարի յերկաթե դարպասները բացվեցին ամբողջ լայնությամբ։ Ցերեք հարյուր մարդ միանգամից նետվեցին դեպի դարբասները։ Այդ՝ արհեստավորներ էին մոխրագույն մահուդե պինջակներով, վոր ունեին կանաչ ծալվածքներ։ Նրանք ընկնում էին, արյունով վողողվելով։ Նրանց գլուխների վրայով սլանում էին դվարդիականները, վորոնք կտրրտում էին սուսերներով և կրակում էին հրացանները։ Դեղին փետուրները ցրվում էին, փայլում էին սև մոմլաթե գլխարկները, ձիերը բաց էին անում կարմիր յերախները, չռում էին աչքերը և փրփուր էին շաղ տալիս։

— Նայեցեք! Նայեցեք! Պրոսպերոն! — բղավեց դոկտորը։

Զինագործ Պրոսպերոյին տանում էին ողակը վիզն անցկացրած։ Նա քայլում եր, գլորվում և նորից բարձրանում։ Նա ուներ խճճված դեղին մազեր, արյունոտված դեմք, իսկ վիզը փաթաթված եր հաստ ողակով։

— Պրոսպերո! Նա գերի յե ընկել! — բղավեց դոկտորը։

Այդ ժամանակ ռումբը նետվեց լվացքատուն։ Աշտարակը թեքվեց, ճռճվեց, մի վայրկյան մնաց շեղ դիրքով և խորտակվեց։ Դոկտորը թավալգլոր թռավ, կորցնելով ևս մյուս կոշիկի կրունկը, ձեռնափայտը, չեմոդանն ու ակնոցները։

ԳԼՈՒԽ 2

ՏԱՍԸ ԿԱՌԱՓՆԱՏ

Դոկտորը վար ընկավ բախտավոր կերպով։ Նա իր գլուխը չջարդեց և վոտքերն ել վողջ մնացին։ Ի դեպ՝ այդ վոչինչ չի նշանակում։ Նույնիսկ բախտավոր անկումը ռմբակոծված աշտարակի հետ միասին՝ այնքան ել հաճելիչե, հատկապես այն մարդու համար, վորը ջահել չե, այլ ավելի շուտ ծեր ե, ինչպիսին ե դոկտոր Գասպար Արնելին։ Համենայն դեպս, հենց միայն վախից դոկտորն ուշագնաց յեղավ։

Յերբ նա ուշքի յեկավ, արդեն յերեկո յեր։ Դոկտորը շուրջը նայեց։

— Վորքան ցավալի յե։ Ակնոցներս, ի հարկե, ջարդվել են։ Յերբ յես նայում եմ առանց ակնոցների, հավանականորեն տեսնում եմ այնպես, ինչպես տեսնում ե կարճատես մարդը, յերբ ակնոց ե դնում։ Այդ շատ անախորժ ե։

Ապա նա մրթմրթաց կոտրված կրունկների մասին։

— Յես առանց այն ել բարձրահասակ չեմ, իսկ այժմ մի վերշոկով ավելի կարճ կլինեմ։ Կամ, գուցե յերկու վերշոկով, վորովհետև յերկու կրունկներս են պոկվել։ Չե, ի հարկե միայն մի վերշոկով։։։

Նա պառկել եր խճակույտի վրա։ Համարյա ամբողջ աշտարակը խորտակվել եր։ Պատի յերկար ու նեղ մի կտոր դուրս եր ցցվել ինչպես վոսկոր։ Շատ հեռվում նվագում

40654-67

Աշտարակը թեքվեց, ճռճվեց և խորտակվեց

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ի ՊՊՀ
Ա. Մ. Մասնայանի անվան

եր յերաժշտախումբը։ Ուրախ վայլոը թռչում եր քամու հետ, կորչում եր և չեր վերադառնում։ Դոկտորը գլուխը բարձրացրեց։ Վերևում, զանազան կողմերից կախվել եյին կոտրտված գերանները։ Իրիկնային կանաչավուն յերկնքի վրա փայլում եյին աստղերը։

— Այդ վոնրտեղ են նվագում, — զարմացավ դոկտորը։

Առանց թիկնոցի ցուրտ եր։ Վոչ մի ձայն չեր հնչում հրապարակի վրա։ Դոկտորը, տնքալով բարձրացավ մեկ մեկու վրա ընկած քարերի միջև։ Ճանապարհի վրա նա կպավ ինչ վոր մեկի մեծ սապոգին։ Փականագործը պառկել եր գերանին խաչաձև և նայում եր յերկնքին։ Դոկտորը շարժեց նրան։ Նա չեր ցանկանում վեր կենալ։

Դոկտորը ձեռքը բարձրացրեց, վոր գլխարկը հանի։ Փականագործը մեռել եր։

— Գլխարկս եկ եմ կորցրել։ Ո՞ւր գնամ յես։ — Նա հրապարակից գնաց։ Ճանապարհի վրա ընկած եյին մարդիկ։ Դոկտորը ցած եր կռանում յուրաքանչյուրի վրա և տեսնում եր թե ինչպես աստղերն արտացոլվել եյին նրանց լայն բաց արած աչքերում։ Նա ափը հպում եր նրանց ճակատներին։ Նրանք շատ սառն եյին և խոնավ եյին արյունից, վորը գիշերով սև եր թվում։

— Ահա, ահա, — շշնջում եր դոկտորը։ — Նշանակում է, ժողովուրդը հաղթված է։։։ Ի՞նչ կլինի այժմ։

Կես ժամ հետո նա հասավ մարդաշատ տեղեր։ Նա շատ եր հոգնել։ Նա ցանկանում եր ուտել և խմել։ Այստեղ քաղաքը սովորական տեսք ուներ։ Դոկտորը կանգնած փողոցների հանդուցյում, հանգստանում եր յերկար քայլելուց և մտածում։

«Ինչ տարորինակ է! Վառվում են բազմագույն կրակները, սլանում են կառքերը, զրնգում են ապակե դռները։

Կլոր լուսամուտները փայլում են վոսկե փայլով։ Այնտեղ, այունաշարքի յերկայնքով անցնում են զուլգերը։ Այնտեղ ուրախ պարահանդես է։ Զինական գունավոր լապտերներն որորվում են սև ջրերի վրա։ Մարդիկ ապրում են այնպես, ինչպես ապրում եյին յերեկ։ Մի՞թե նրանք չգիտեն այն մասին, ինչ վոր տեղի յե ունեցել այսոր առավոտյան։ Մի՞թե նրանք չեն լսել համազարկն ու հեծեծանքները։ Մի՞թե նրանք չգիտեն, վոր ժողովրդի ղեկավարը, զինագործ Պրոսպերոն գերի յե վերցված։ Գուցե և վոչինչ էլ չի՞ պատահել։ Գուցե յես սարսափելի յերա՞զ եմ տեսել»։

Անկյունում, ուր վառվում եր յերեք ունկանի լապտերը, մայթի յերկայնքով կանգնել եյին կառքերը։ Ծաղկավաճառուհիները վարդեր եյին վաճառում։ Կառապանները խոսակցում եյին ծաղկավաճառուհիների հետ։

— Նրան, ողակը վիզն անցկացրած քարշ տվեցին վողջ քաղաքով։ Դժբախտ!

— Այժմ նրան յերկաթե վանդակ են նստացրել։ Վանդակը կանգնած է Յերեք Հասալիկների պալատում, — ասաց կապույտ ցիլինդրավոր չաղ կառապանը։

Այդ բոպեյին, ծաղկավաճառուհիներին մոտեցավ մի կին, փոքրիկ աղջկա հետ, վարդ գնելու համար։

— Ո՞ւմ են վանդակում նստեցրել—հետաքրքրվեց նա։

— Զինագործ Պրոսպերոյին։ Գվարդիականները նրան գերի յեն վերցրել։

— Դե ուրեմն փառք աստծու, — ասաց կինը։

Աղջիկը հեկեկաց։

— Ինչո՞ւ յես լաց լինում, հիմար, զարմացավ կինը։ — Դու ցավո՞ւմ ես զինագործ Պրոսպերոյին։ Զգետք է նրան

ցավել։ Նա մեր վատն եր ուզում։ Նայիր, ինչ գեղեցիկ վարդեր են։։։

Մեծ վարդերը, ինչպես սագեր, լողում եյին դառնավուն ջրով ու տերևներով լի ամանի մեջ։

— Ահա քեզ յերեք վարդ։ Իսկ լաց լինելու կարիք չկա։ Նրանք խռովարարներ են։ Յեթե նրանց չնստեցնեն յերկաթե վանդակների մեջ, ապա նրանք կվերցնեն մեր տները, հագուստներն ու մեր վարդերը, իսկ մեզ՝ նրանք կմորթեն։

Այդ ժամանակ, մոտիկից վազեց մի տղա։ Նա ձիգ տվեց նախ կնոջ աստղագարդ թիկնոցից, իսկ հետո աղջկա մազերից։

— Վոչինչ, կոմսուհի, — բղավեց տղան։ — Զինագործ Պրոսպերոն վանդակումն է, բայց մարդիկ Թիբուլն ազատ է։

— Ախ, սրիկա!

Կինը վոտքը դետնին խփեց և պայուսակը վար գցեց։ Ծաղկավաճառուհիներն սկսեցին հնչուն ծիծաղել։ Չաղ կառապանն ոգտվեց խառնակությունից և առաջարկեց կնոջը՝ նստել կառք ու գնալ։

Կինն ու աղջիկը կառքով գնացին։

— Կաց, ցատկող! — կանչեց ծաղկավաճառուհին տղային։ — Մի յեկ այստեղ պատմիր, ինչ վոր գիտես։։։

Յերկու կառապան վար իջան իրենց տեղերից և իրենց շրջաթիկնոցների մեջ խճճվելով մոտեցան ծաղկավաճառուհիներին։

«Ա՜յ մտրակ, ինչ լավ մտրակ։ Դամչի», — մտածեց տղան, նայելով յերկար մտրակին, վոր կառապանը դես ու դեն եր շարժում։ Տղան շատ եր ուզում ունենալ այդպիսի մի մտրակ, բայց դա անհնար եր մի շարք պատճառներով։

— Ուրեմն ինչ կասես, — հարցրեց կառապանը բամբ ձայնով։ — Մարդիկ Թիբուլն ազա՞տ է։

— Այդպես են ասում։ Յեռ նավահանգստումն էլի…

— Մթթե գվարդիականները նրան չեն սպանել,— հարցրեց մի այլ կառապան, նույնպես բամբ ձայնով։

— Վոչ հայրիկ։ Գեղեցկուհի, ինձ մի վարդ նվիրիր!

— Սպասիր, հիմար։ Դու, ավելի լավ կլինի, վոր պատմես…

— Ուրեմն, նշանակում է, այսպես։ Սկզբում բոլորը կարծում էին, վոր նա սպանված է։ Հետո նրան փնտռեցին մեռածների մեջ և չգտան։

— Գուցե նրան ջրանցքն են գցել,— հարցրեց կառապանը։

Խոսակցությանը խառնվեց մի մուրացկան։

— Ու՞մ գցեն ջրանցքը,— հարցրեց նա։— Մարգիկ Թիբուլը կատվաձագ չէ։ Նրան չես խեղդի։ Մարգիկ Թիբուլը կենդանի է։ Նրան հաջողվել է փախչել։

— Ստում ես, ուղտ!— ասաց կառապանը։

— Մարգիկ Թիբուլը կենդանի է!— բղավեցին ծաղկավաճառուհիները վոգևորված։

Տղան մի վարդ քաշեց և սկսեց փախչել։ Թաց ծաղկի կաթիլները ցանվեցին դոկտորի վրա։ Դոկտորը դեմքի վրայից սրբեց արցունքի պես դառը կաթիլները և մոտ յեկավ, վորպեսզի լսի, թե ինչ կասի մուրացկանը։

Այստեղ, խոսակցությունը խանգարեց մի հանգամանք։ Փողոցում հայտնվեց մի արտակարգ յերթ։ Առջևից գնում էին յերկու ձիավորներ, ջահերով։ Ջահերը փողփողում էին, ինչպես հրե մորուքներ։ Յետևից դանդաղ գնում եր մի սև կառք, զինանշանով։

Իսկ նրանց յետևից գնում էին հյուսները։ Նրանք հարյուր հոգի էին։

Յետևից դանդաղ գնում եր մի սև կառք

Նրանք գնում էին վեր քշտած թևերով, աշխատանքի պատրաստ — գոգնոցներով, սղոցներով, ռանդաններով և թևերի տակ դրած արկղներով։ Ցերթի յերկու կողքերից գնում էին գվարդիականները։ Նրանք զսպում էին ձիերին, վորոնք ուզում էին սլանալ։

— Այս ինչ է, այս ինչ է, — հուզվեցին անցորդները։

Զինանշանով սև կառքում նստել էր Ցերեք Հաստլիկների խորհրդի պաշտոնյան։ Ծաղկավաճառուհիները վախեցան։ Ձեռները դեպի այտերը բարձրացնելով, նրանք նայում էին նրա գլխին, վոր յերևում էր ապակե դռնակից։ Փողոցը պայծառ լուսավորված էր։ Կեղծամ հագած սև գլուխն որորվում էր, ինչպես անկենդան։ Թվում էր, թե այնտեղ թռչուն է նստած։

— Հեռու քաշվեցեք, — բղավում էին գվարդիականները։

— Ո՞ւր են գնում հյուանները, — հարցրեց փոքրիկ ծաղկավաճառուհին սարսափելի գվարդիականին և գվարդիականը բղավեց հենց նրա յերեսին այնպես դաժան կերպով, վոր աղջկա մազերը ցից կանգնեցին, կարծես ցրտից։

— Հյուանները գնում են կառափնատներ շինելու! Հասկացա՞ր! Հյուանները պիտի շինեն տասը կառափնատ!

— Ա!

Ծաղկավաճառուհին ծաղկամանը վար գցեց։ Վարդերը կամպոտի պես թափվեցին։

— Նրանք գնում են կառափնատներ շինելու, — կրկնեց դոկտոր Գասպարը սարսափով։

— Կառափնատներ, — բղավեց գվարդիականը յետ շրջվելով և ատամները կրճատացնելով բեխերի տակ, վոր սապոգների եյին նման։ — Կառափնատներ բոլոր խռովարարներին։ Բոլորի գլուխները կկտրեն։ Բոլորի, ովքեր

համարձակվել են ապստամբվել Յերեք Հասալիկների իշխանության դեմ։

Դոկտորի գլուխը պտտվեց։ Նրան թվաց, թե ուշագնաց է լինում։

«Յես չափազանց շատ ապրեցի այսոր, — ասաց նա ինքնիրեն, — և, բացի դրանից, յես շատ սոված եմ ու շատ հոգնել եմ։ Պետք է տուն շտապել»։

Իրոք վոր, ժամանակն եր բժշկին հանգստանալու։ Նա այնքան եր հուզվել տեղի ունեցածով ու լսածով, վոր նույնիսկ կարևորություն չեր տալիս իր սեփական թռիչքին՝ աշտարակի հետ, գլխարկի, թիկնոցի, ձեռնափայտի և կրունկների բացակայությանը։ Ամենից վատ եր ի հարկե, առանց ակնոցների։

Նա կառք վարձեց և ուղևորվեց տուն։

ԳԼՈՒԽ 3

ԱՍՏՂԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Դոկտորը վերադառնում եր։ Նա գնում եր ասֆալտած ամենալայն փողոցներով, վորոնք լուսավորված եյին ավելի պայծառ, քան դահլիճները։ Լապտերների շղթան վազում եր նրա վերևում, բարձր յերկնքով։ Լապտերները նմանվում եյին ծայր աստիճան յեռացրած կաթով լի գնդերի։ Լապտերների շուրջը շաղ եյին յեկել, յերգում եյին ու վոչնչանում մոծակները։ Դոկտորը գնում եր ծովափով, քարե ցանկապատի յերկայնքով։ Այնտեղ, բրոնզե առյուծները ձեռքերում վահաններ եյին բռնել և դուրս եյին հանել յերկար լեզուները։ Ներքևում դանդաղ ու թանձր գնում եր ջուրը, սև ու փայլուն, ինչպես կուպը։ Քաղաքը շուռ եր յեկել ջրի մեջ, խեղդվում եր, ուզում եր լողալ բայց չեր կարողանում, այլ միայն լուծվում եր վոսկեգույն պուտերով։ Դոկտորը գնում եր կամուրջներով, վորոնք կոր եյին, ինչպես կամարներ։ Ներքևից կամ մյուս ափից նրանք թվում եյին կատուներ, վոր թռիչքից առաջ ծռել եյին իրենց յերկաթե մեջքերը։ Այստեղ, մուտքի մոտ, յուրաքանչյուր կամուրջի վրա պահակախումբ եր տեղավորված։ Զինվորները նստել եյին թմբուկների վրա, ծխամորճ եյին ծխում, թուղթ եյին խաղում և հորանջում եյին դեպի աստղերը։

Դոկտորը գնում էր, նայում էր ու լսում։

Փողոցից, տներից, պանդոկների բաց լուսամուտներից, զվարթ այգիների ցանկապատերի յետևից, գալիս էին հետևյալ յերգի առանձին հնչյունները։

Իր վիզը պարանի ողակում։
Բռնվեց Պրոսպերոն.
Նստել է յերկաթե վանդակում
Չինագործը հերոս։

Հարբած մի պճնամոլ այս քառյակը բերանը գցեց։ Նրա հորաքույրը, վոր ուներ շատ փոդ, ավելի շատ պեպեններ և վոչ մի ազգական, մեռել էր։ Պճնամոլը ժառանգություն էր ստացել իր հորաքրոջ բոլոր փոդերը։ Դրա համար էլ նա, ի հարկե, դժգոհ էր, վոր ժողովուրդը բարձրանում է հարուստների իշխանության դեմ։

Գաղտնանոցում մեծ ներկայացում էր գնում։ Բեմի վրա յերեք հաստ, թավամազ կապիկներ պատկերում էին Յերեք Հաստլիկներին։ Յերաժիշտը նվագում էր մանդոլինայի վրա։ Ծաղրածուն մոռագույն հագուստով, մեջքի վրա մի վոսկե արև և փորի վրա վոսկելուսին՝ յերաժշտության տակտի համաձայն բանաստեղծություն էր արտասանում։—

Ինչպես յերեք ցորնի պարկեր,
Փռվել են յերեք հաստլիկներ։
Նրանց համար կարևոր է՝
Հաստացնել իրենց փորը.
Եյ, հաստլիկներ, զգուշացեք,
Հասել է ձեր վերջին որը։

— Հասել է ձեր վերջին որը,— բղավում էին չորս կողմից մորուքավոր թութակները։ Բարձրանում էր անյերևակայելի աղմուկ։ Գաղտները զանազան վանդակների մեջ՝ սկսում էին հաչել, մռնչալ, կափկափել, սուլել։

Կապիկները թրևում էին բեմի վրա։ Չեր կարելի հասկանալ, թե ուր են նրանց ձեռքերը և ուր են վոտքերը։ Նրանք թռչում էին ժողովրդի մեջ և սկսում էին ծլկվել։ Ժողովրդի մեջ նույնպես, սկանդալ էր տեղի ունենում։ Հատկապես աղմկում էին նրանք, ովքեր ավելի հաստ էին։ Կարմրած դեմքերով հաստլիկները, կատաղությունից ցնցվելով, ծաղրածուի վրա էին նետում գլխարկներ ու հեռադիտակներ։ Մի հաստլիկ կին հովանոցն էր շարժում, վորը կպցնելով իր դրկցուհուն, պոկեց նրա գլխարկը։

— Ախ, ախ, ախ,— կռկռաց դրկցուհին և ձեռքերը վեր բարձրացրեց, վորովհետև գլխարկի հետ թռավ նաև կեղծամը։ Կապիկը, ծլկվելիս, թաթով խփեց կնոջ քաչալ գլխին։ Դրկցուհին ուշագնաց յեղավ։

— Հա՛, հա՛, հա՛։

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղում էր ժողովրդի մյուս մասը, ավելի լղար արտաքինով և ավելի վատ հագնված։— Բռավո, բռավո։ Տեղն է դրանց։ Կորչեն Յերեք Հաստլիկները։ Կեցցե Պրոսպերոն։ Կեցցե Թիբուլը։ Կեցցե ժողովուրդը։

Այդ ժամանակ, լսվեց ինչ վոր մեկի շատ ուժեղ ձայնը։

— Հրդեհ։ Քաղաքն այրվում է։։։

Մարդիկ, իրար տրորելով և նստարանները շուռ տալով, վազեցին դեպի դռները։ Ծառայողները բռնեցին փախչող կապիկներին։

Կառապանը, վոր տանում էր դոկտորին, շուռ յեկավ և մտրակով իր առջևը ցույց տալով, ասաց։

— Գվարդիականներն այրում են բանվորների թաղամասերը։ Նրանք ուզում են գտնել մարդիկ Թիբուլին։։։

Քաղաքի վրա, տների սև կույտի վրա, դողդողում էր վարդագույն բոցը։

Յերբ դոկտորի կառքը հայտնվեց քաղաքի գլխավոր հրապարակի մոտ, որն անվանվում էր «Աստղ», — պարզվեց, որ անցնելն անհնար էր։ Հրապարակի մուտքի մոտ կուտակվել էին ահագին կառքեր, ձիավորներ, հետիոտն մարդիկ։

— Ի՞նչ բան է, — հարցրեց դոկտորը։

Վոչ վոք վոչինչ չպատասխանեց, վորովհետև բոլորն զբաղված էին այն բանով, ինչ որ տեղի էր ունենում հրապարակում։ Կառապանն իր ամբողջ հասակով կանգնեց իր նստելատեղի վրա և սկսեց նույնպես նայել դեպի այն կողմ։

Այդ հրապարակն Աստղի հրապարակ էին անվանում հետևյալ պատճառով։ Նա շրջապատված էր նույն մեծության ու ձևի վիթխարի տներով և ծածկված էր ապակյա գմբեթով, որը նրան նմանեցնում էր հսկայական կրկեսի։ Գմբեթի կենտրոնում, սարսափելի բարձրության վրա, վառվում էր աշխարհի ամենամեծ լապտերը։ Դա զարմանալի մեծություն ունեցող լապտեր էր։ Յերկաթե ողակով շրջապատված, ուժեղ պարաններով կախված, նա նման էր Սատուրնին։ Նրա լույսն այնքան գեղեցիկ էր և այնքան նման չէր վորևե յերկրային լույսի, որ մարդիկ այդ լապտերին տվել էին հիանալի «Աստղ» անունը։ Սկսել էին այդպես անվանել նաև ողջ հրապարակը։

Վոչ հրապարակի վրա, վոչ տներում, վոչ շրջակա փողոցներում այլևս ուրիշ վոչ մի լույսի կարիք չէր զգացվում։ Աստղը լուսավորում էր հրապարակը քարե ողակով շրջապատած տների բոլոր խորշերը, բոլոր անկյուններն ու նկուղները։ Այստեղ մարդիկ յոլա էին գնում առանց լապտերի ու մոմերի։

Կառապանը նայում էր կառքերի, ձիասայլերի և կառապանների ցիլինդրների վրայով, որոնք նման էին դեղատան սրվակների գլխիկների։

— Ի՞նչ եք տեսնում դուք։ Ի՞նչ է տեղի ունենում այնտեղ, — հուզվում էր դոկտորը, կառապանի մեջքի յետևից նայելով։ Փոքրիկ դոկտորը վոչինչ տեսնել չէր կարող, մանավանդ որ, կարճատես էր։

Կառապանը հաղորդում էր, ինչ որ տեսնում էր։

Յեվ ահա թե նա ինչ էր տեսնում։

Հրապարակի վրա մեծ խլրտում կար։ Վիթխարի կլոր տարածությամբ մեկ ցրված, վազում էին մարդկանց բազմադույն կույտերը։ Թվում էր, թե հրապարակի շրջանակը պտտվում է, ինչպես կարուսել։ Մարդիկ վազվզում էին մի տեղից մյուսը, որպեսզի լավ տեսնեն, թե ինչ է տեղի ունենում վերևում։

Հրեշավոր լապտերը, որ բոցավառվում էր վերևում, արևի նման աչք էր կուրացնում։ Մարդիկ գլուխները վեր էին թեքում և ձեռքերն աչքերին դեմ էին պահում։

— Ահա նա։ Ահա նա։ — Աղմկում էին նրանք։

— Ահա, նայեցեք։ Այնտեղ։

— Ո՞ւր, ո՞ւր։

— Բարձրում։

— Թիբո՛ւլը։ Թիբո՛ւլը։

Հարյուրավոր ցուցամատեր ուղղվեցին դեպի ձախ։ Այնտեղ կանգնած էր մի սովորական տուն։ Բայց վեց հարկերում բաց էին արված բոլոր լուսամուտները։ Յուրաքանչյուր լուսամուտում գլուխներ էին ճոճվում։ Նրանք տարբեր տեսքի էին։ — մի քանիսը գիշերային ծոպավոր գլխարկներով, որ թեքված էին հում յերշիկի նմանվող

ծոծրակների վրա, ուրիշները՝ վարդագույն չեպչիկներով, նավթագույն խոպոպներով, յերրորդները՝ դլխացանցերով։ Վերևում, ուր ապրում եր չքավոր յերիտասարդությունը,— բանաստեղծներ, նկարիչներ, դերասանուհիներ,—նայում եյին անբեխ ուրախ դեմքեր՝ ծխախոտի ամպերի մեջ, և կանացի դեմքեր, վորոնք շրջապատված եյին վոսկեգույն մազերի այնպիսի փայլով, վոր թվում եր, թե նրանց ուսերի վրա թևեր կան։ Այդ տունն եր բաց արած ցանցապատ լուսամուտներով ու թռչունների պես դուրս կախված բազմագույն գլուխներով՝ նման եր պճնամոլ մարդկանցով լիքը մեծ վանդակների։ Բոլոր գլուխները, հարմար դիրք բռնելով և սպառնալով՝ իրենց յետևից դուրս քաշել իրենց տերերին, սպառնալով՝ բարձրունքից թռչել դեպի մայթերը,—աշխատում եյին դիտել մի ինչ վոր հետաքրքրական բան, վորը տեղի յեր ունենում կտուրի վրա։ Այդ նույնքան անհնար եր, վորքան վոր սեփական ականջները տեսնել առանց հայելու։ Այդ մարդկանց համար, վորոնք ուզում եյին սեփական տնից դիտել սեփական կտուրը, հայելու տեղ ծառայում եր հրապարակի վրա իրար խառնվող ամբոխը։ Ամբոխը տեսնում եր ամեն ինչ, բղավում եր, ձեռքերն եր շարժում։ Մի մասն արտահայտում եր հիացմունք, մյուսը՝ զայրույթ։

Այնտեղ, կտուրի վրայով, շարժվում եր մի փոքրիկ կերպարանք։ Նա դանդաղ, զգույշ և ինքնավստահ իջնում եր տան յեռանկյունի կտուրով։ Ցերկաթը վորոտում եր նրա վոտքերի տակ։ Նա ճոճում եր թիկնոցը, հավասարակշռություն պահպանելով, ինչպես լարախաղացը կրկեսում հավասարակշռություն է գտնում չինական դեղին հովանոցի ոգնությամբ։

Դա մարդիկ Թիբուլն եր։

Ժողովուրդը բղավում եր։

— Բռավո, բռավո, բռավո, Թիբուլ։

— Զգույշ կաց։ հիշիր, թե ինչպես եյիր քայլում պարանի վրայով, տոնավաճառում։։։

— Նա չի ընկնի։։։ Նա մեր յերկրի լավագույն մարդիկն է։։։

— Առաջին անգամը չի։ Մենք տեսել ենք, թե նա ինչքան լավ է քայլում պարանի վրայով։

— Բռավո, Թիբուլ։

— Վազիր, փրկիր, ազատիր Պրոսպերոյին։

Մյուսները վրդովված եյին։ Նրանք բռունցքներ եյին ճոճում։

— Վոչ մի տեղ չես փախչի, վոդորմելի ոյինբազ։

— Անդգամ։

— Խռովարար, քեզ կգնդակահարեն, ինչպես նապաստակի։։։

— Զգույշ կաց, մենք քեզ կտուրից կառափնատ քարշ կտանք։ Վաղը պատրաստ կլինի տասը կառափնատ։

Թիբուլը շարունակում եր իր սարսափելի ուղին։

— Նա վոր տեղից հայտնվեց,—հարցնում եյին մարդիկ։—Նա ինչպես հայտնվեց այս հրապարակում։ Նա ինչպես է ընկել կտուրի վրա։

— Նա փախել է գվարդիականների ձեռքից,—պատասխանում եյին մյուսները։ Նա փախել եր, անհետացել, հետո նրան տեսել եյին քաղաքի տարբեր մասերում—նա անցնում եր կտուրներով։ Նա ճարպիկ է, ինչպես կատու։ Նրա արվեստը նրան պետք յեկավ։ Իզուր չէ, վոր նրա փառքը տարածվել է ամբողջ յերկրում։

Հրապարակի վրա յերևացին գվարդիականներ։ Պարապ դիտողները վազեցին դեպի կողքի փողոցները։ Թիբուլը կտուրի ցանկապատի վրայից անցավ և կանգնեց կարնիզի վրա։ Նա մեկնեց ձեռքը, վոր փաթաթված եր թիկնոցով։ Կանաչ թիկնոցը ծածանվում եր դրոշակի պես։

Հենց այդ թիկնոցով և դեղին ու սև յեռանկյունիներ ունեցող հենց այդ մարդագլխարով եր, վոր ժողովուրդը վարժվել եր տեսնել նրան տոնավաճառների և կիրակնորյա զբոսանքների ժամանակ տրվող ներկայացումներում։

Այժմ բարձր, ապակե գմբեթի տակ, փոքրիկ, նիհար ու շերտավոր, նա նման եր տան սպիտակ պատի վրայով սողացող բոռի։ Յերբ թիկնոցն ուռչում եր, թվում եր, թե նա բաց է անում իր կանաչ, փայլուն թևերը։

— Դու հիմա վար կգլորվես, հրապարակային անզգամ,— բղավում եր հարբած պճնամոլը, վոր պեպենավոր հոլաքույրից ժառանգություն եր ստացել։

Գվարդիականները հարմար դիրք ընտրեցին։ Սպան վազվզում եր ծայրահեղ մտահոգված։ Նա ձեռքում բռնել եր ատրճանակը։ Նրա շպրտներն այնպես յերկար եյին, ինչպես կեռ փայտաձողեր։

Տիրեց լիակատար լռություն։ Դոկտորը բռնեց սիրտը, վոր թռչկոտում եր, ինչպես ձուն յեռացրած ջրում։

Թիբուլը մի վայրկյան կանգ առավ կարնիզի վրա։ Նրան հարկավոր եր անցնել հրապարակի հակառակ կողմը։ Այդ դեպքում, նա կկարողանար Աստղի հրապարակից փախչել դեպի բանվորական թաղամասերի կողմը։

Սպան կանգնեց հրապարակի մեջտեղում, դեղին ու կապույտ ծաղիկներ ունեցող ծաղկանոցի մեջ։ Այստեղ կար

ավազան և շատրվան, վոր ցայտում եր կլոր քարե գուռի միջից։

— Կանգնեցեք, — ասաց սպան զինվորներին։ — յես ինքս նրան կգնդակահարեմ։ Յես գնդի ամենալավ նշանաձիգն եմ։ Սովորեցեք, թե ինչպես պետք է կրակել։

Շուրջանակի կանգնած ինքը տներից, դեպի գմբեթի կենտրոնը, դեպի աստղն եյին ձգվում ինն պողպատե պարանները (այնպես հաստ, ինչպես ծովային թոկ, յերկաթալար)։

Թվում եր, թե լապտերից, բոցավառ փառահեղ աստղից, հրապարակի վրա տարածվել եյին ինքը յերկար, սև ճառագայթներ։

Հայտնի չե, թե այդ բոպեին ինչի մասին եր մտածում Թիմբուլը։ Բայց հավանաբար, նա վորոշել եր այսպես։

«Յես կանցնեմ հրապարակի վրայով այս թոկով, ինչպես քայլում եյի պարանի վրա, տոնավաճառի ժամանակ։ Յես չեմ ընկնի։ Մի պողպատալարը ձգվում է դեպի լապտերը, իսկ մյուսը՝ լապտերից դեպի դիմացի տունը։ Կանցնեմ յերկու պողպատալարերը, կհասնեմ դիմացի կտուրին և կազատվեմ»։

Սպան ատրճանակը բարձրացրեց և սկսեց նշան բռնել։ Թիբուլը հասավ կարնիզի այն տեղին, վորտեղից սկսվում եր պողպատալարը։ Անջատվեց պատից և պողպատալարի վրայով շարժվեց դեպի լապտերը։

Ամբոխը հոգոց հանեց։

Նա քայլում եր մերթ շատ դանդաղ, մերթ, հանկարծ, համարյա վազում եր, արագ և զգույշ քայլերը փոխելով, որորվելով, ձեռքերը տարածելով։ Յուրաքանչյուր բոպե

թվում էր, թե նա կընկնի։ Այժմ յերևաց նրա ստվերը պատի վրա։ Վորքան ավելի նա մոտենում էր լապտերին, այնքան ավելի ցած էր իջնում նրա ստվերը պատի վրայով և այնքան դառնում էր մեծ ու գունատ։

Ներքևում անդունդ էր։

Յեվ յերբ նա լապտերի կես ճանապարհի վրա յեր, լիակատար լռության մեջ լսվեց սպայի ձայնը։

— Հիմա յես կկրակեմ։ Նա ուղիղ կընկնի ավազանի մեջ։ Մեկ, յերկու, յերեք։

Կրակոցը շրխկաց։

Թիբուլը շարունակեց քայլելը, իսկ սպան, չգիտես թե ինչու, գլորվեց ուղղակի ավազանի մեջ։

Նա սպանված էր։

Գվարդիականներից մեկը ձեռքում բռնել էր ատրճանակը, վորը ծխում էր։ Նա յեր գնդակահարել սպային։

— Շուն, — ասաց գվարդիականը, — դու ուզում էիր խփել ժողովրդի բարեկամին։ Յես խանգարեցի դրան։ Կեցցե ժողովուրդը։

— Կեցցե ժողովուրդը, — ձայնակցեցին նրան մյուս գվարդիականները։

— Կեցցեն Յերեք հաստլիկները, — բղավում էին նրանց հակառակորդները։ Նրանք ցրվեցին զանազան կողմեր և համազարկ բաց արին այն մարդու վրա, վորը գնում էր պողպատալարով։

Նա արդեն լապտերից յերկու քայլի վրա յեր։ Թիկնոցը դես ու դեն թափահարելով, նա փայլից պաշտպանում էր իր աչքերը։ Գնդակներն անցնում էին նրա կողքով։ Ամբոխը վռնում էր վոգևորությունից։

— Թրախկ։



— Թրախկ։

— Զդիպավ։

— Ուռա՛, կողքովը անցավ։

Թիբուլը բարձրացավ լապտերը շրջապատող ողակի վրա։

— Վոչինչ,—բղավեցին դվարդիականները։—Նա պիտի անցնի մյուս կողմը։։։ Նա պիտի քայլի մյուս պողպատա-լարով։ Այնտեղից մենք նրան կիջեցնենք։

Այդտեղ, տեղի ունեցավ մի բան, վորին վոչ վոք չեր սպասում։ Շերտավոր կերպարանքը, վոր լապտերի փայլի տակ դարձել եր սև, նստեց յերկաթե ողակի վրա, շուռ տվեց մի ինչ վոր ռիչագ, ինչ վոր բան շրխկաց, զնգաց,— և լապտերը վայրկյանապես հանգեց։

Վոչ վոք չկարողացավ մի խոսք ասել։ Դարձավ սարսափելի մութ և սարսափելի լուռ, ինչպես անդունդի մեջ։

Իսկ հետևյալ րոպեյին, բարձրում, շատ բարձրում, նորից ինչ վոր բան շխկաց ու զնգաց։ Մութ գմբեթի վրա բացվեց մի գունատ քառակուսի։ Բոլորը տեսան յերկնքի մի կտոր, յերկու փոքրիկ աստղերով։ Հետո, յերկնքի ֆոնի վրա, այդ քառակուսու մեջ մտավ մի կերպարանք և լսելի յեղավ, թե ինչպես մեկն արագ փախավ ապակե գմբեթով։

Մարդիկ Թիբուլն ազատվեց Աստղի հրապարակից ողանցքի միջոցով։

Ձիերը վախեցան կրակոցներից և հանկարծակի մթությունից։

Դոկտորի կառքը հազիվ շուռ չեկավ։ Կառապանը կրտրուկ յետ շրջվեց և դոկտորին տարավ զարտուղի ճանապարհով։

Այդպիսով, ունենալով մի արտակարգ որ և արտակարգ գիշեր, դոկտոր Գասպար Արնելին վերջապես վերադար-

ձավ տուն։ Նրա տնտեսուհին, Հանիմեդ մորաքույրը, հանդիպեց նրան շեմքի մոտ։ Նա չափազանց հուզված եր։ Յեվ իրոք, — դոկտորն այնքան յերկար եր բացակայել։

Հանիմեդ մորաքույրը ձեռքերն իրար խփեց, հառաչեց և գլուխը շարժեց։

— Վ՞ռրտեղ են ձեր ակնոցները։ Նրանք չարդվե՞լ են։ Ախ, դոկտոր, դոկտոր։։։ Վ՞ռրտեղ է ձեր թիկնոցը։ Դուք կորցրե՞լ եք։ Ախ, ախ, ախ։։։

— Հանիմեդ մորաքույր, բացի դրանից, յես կոտրել եմ յերկու կրունկներս։։։

— Ախ, ինչ դժբախտություն։։։

— Այսոր պատահել է ավելի մեծ դժբախտություն, Հանիմեդ մորաքույր։ Զինագործ Պրոսպերոն գերի յե ընկել։ Նրան յերկաթե վանդակ են նստացրել։

Հանիմեդ մորաքույրը վոչինչ չդիտեր այն մասին, թե ինչ եր տեղի ունեցել ցերեկը։ Նա լսել եր թնդանոթաձգության ձայնը, նա տեսել եր բոցը շենքերի վրա։ Դրրկցուհին պատմել եր նրան այն մասին, վոր հարյուր հյուսներ դատի հրապարակի վրա կառափնատներ են կառուցում խռովարարների համար։

— Յես սկսեցի սարսափել։ Յես փակեցի լուսամուտի փեղկերը և վորոշեցի վոչ մի տեղ դուրս չգնալ։ Յես յուրաքանչյուր բոպե ձեզ եյի սպասում։ Յես շատ եյի հուզվել։ Ճաշը սառեց։ Ընթրիքը սառեց, — իսկ դուք դեռ չկաք։։։

Գիշերը վերջացավ։ Դոկտորն սկսեց քնելու պատրաստություն տեսնել։

Նրա ուսումնասիրած հարյուր գիտությունների մեջ կար նաև պատմությունը։ Նա ուներ մի մեծ գիրք կաշվե

կազմով և այդ գրքում նա գրի յեր առնում իր դատողությունները կարևոր դեպքերի մասին։

— Պետք է ճշտապահ լինել, — ասաց դոկտորը, մատը բարձրացնելով։ Յեվ չնայած հոգնածությանը, դոկտորը վերցրեց իր կաշվեպատ գիրքը, նստեց սեղանի մոտ և սկսեց գրել։

«Արհեստավորները, հանքափորները, նավաստիները, — քաղաքի վողջ չքավոր բանվոր մարդիկ բարձրացան Յերեք հաստալիկների իշխանության դեմ։ Գվարդիականները հաղթեցին։ Զինագործ Պրոսպերոն գերի վերցվեց, իսկ մարդիկ Թիբուլը փախավ։ Հենց նոր, Աստղի հրապարակում, գվարդիականը գնդակահարեց իր սպային։ Դա նշանակում է, վոր շուտով զինվորները կհրաժարվեն ժողովրդի դեմ կռվել և Յերեք հաստալիկներին պաշտպանել։ Այնուամենայնիվ, պետք է վախենալ Թիբուլի ճակատագրի համար»։։։

Այստեղ, դոկտորն իր յեռևում աղմուկ լսեց։ Նա յեռ նայեց։ Այնտեղ պատի ոճախն եր։ Ոճախից դուրս սողաց մի մարդ, կանաչ թիկնոցով։ Դա մարդիկ Թիբուլն եր։

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 4

ՈԴԱՊԱՐԻԿ ԾԱԽՈՂԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Հետևյալ որը, դատի հրապարակում յեռում եր աշխատանքը։ Հյուսները կառուցել եյին տասը կառափնատ։ Գվարդիականների հեծելազորը հսկում եր աշխատանքներին։ Հյուսներն իրենց աշխատանքը կատարում եյին առանց վորևե բավականության։

— Մենք չենք ուզում կառափնատներ կառուցել արհեստավորների և հանքափորների համար, — վրդովվում եյին նրանք։

— Նրանք մեր յեղբայրներն են։

— Նրանք դեպի մահն եյին գնում, վորպեսզի ազատեյին բոլոր նրանց, ովքեր չարչարվում են։

— Լռել, — բղավում եր հեծելազորի պետն այնքան սարսափելի ձայնով, վոր կառուցման համար դարսված տախտակները վար եյին թափվում։ — Լռել, ապա թե վոչ յես կհրամայեմ մտրակով ձեզ ձաղկել։

Առավոտվանից, ժողովրդի խմբերը տարբեր կողմերից դիմում եյին դեպի դատի հրապարակը։

Փչում եր ուժեղ քամի, թռչում եր փոշին, ցուցանակները ճռճվում եյին և շխկշխկում, գլխարկները պոկվում եյին գլուխներից և գլորվում եյին թռչկոտող կառքերի անիվների տակ։

Մի տեղում, քամու պատճառով տեղի ունեցավ բոլորովին անհավանական մի դեպք։ — յերեխայական ոդապարիկներ ծախողն իր ոդապարիկներով բարձրացավ ոդի մեջ։

— Ուռռա, ուռռա։ — բղավում եյին յերեխաները, դիտելով գերբնական թռիչքը։

Նրանք ծափ եյին տալիս։ — Նախ և առաջ, տեսարանը հետաքրքիր եր ինքնին, իսկ յերկրորդ՝ յերեխաների վորոշ բավականությունը կայանում եր թռիչք գործող ոդապարիկներ ծախողի անբավականության մեջ։ Յերեխաները միշտ նախանձում եյին նրան։ Նախանձը — վատ զգացմունք է։ Բայց ինչ արած։ ոդապարիկները՝ կարմիր, կապույտ, դեղին, — փառահեղ եյին թվում։ Ցուրաքանչյուրն ուզում եր այդպիսի մի ոդապարիկ ունենալ։ Ոդապարիկները ծախողն ուներ մի ամբողջ կույտ ոդապարիկներ, բայց հրաշքներ տեղի չեն ունենում։ — վոչ մի տղայի, նույնիսկ ամենախելոքին, վոչ մի աղջկա, նույնիսկ ամենաուշադիրին, ծախողն իր կյանքում վոչ մի անգամ վոչ մի ոդապարիկ չեր նվիրել։ — վոչ կարմիր, վոչ կապույտ, վոչ դեղին։

Այժմ բաղդը նրան պատժում եր նրա քարասրտության համար։ Նա թռչում եր քաղաքի վրա, կախված այն պարանից, վորից ամրացված եյին ոդապարիկները։ Բարձր, պայծառ յերկնքում նրանք նմանվում եյին թռչող բազմագույն խաղողի վողկույզի։

— Ոգնեցեք, — բղավում եր ոդապարիկներ ծախողը, վոչ մի բանի վրա հույս չդնելով և վոտքերը շարժելով։ Նա հագել եր ծղոտե կոշիկներ, վոր իր վոտքերով լայն եյին։ Քանի դեռ նա քայլում եր յերկրի վրայով, ամեն ինչ կարգին եր։ Վորպեսզի կոշիկները դուրս չգային, նա վոտքերը քստքստացնում եր մայթերին, ինչպես թուլամորթ։

Իսկ այժմ, գտնվելով ոդի մեջ, նա այլևս չեր կարող նույն ձևին դիմել։

— Սատանան տանի։

Վոտքերը ճռճվում եյին այնպես, կարծես սերուցք եյին հարում։

— Սատանան տանի։

Ոդապարիկների կույտը, դալարվելով ու չթչթալով պտտվում եր քամու հետ։

Այնուամենայնիվ, մի կոշիկն ընկավ։

— Նայիր։ Չինական ընկույզ։ Չինական ընկույզ։ — Բղավում եյին յերեխաները, ներքևում վազելով։

Իրոք վոր, ընկնող կոշիկը նման եր չինական ընկույզի։

Այդ ժամանակ փողոցով անցնում եր պարի ուսուցիչը։ Նա շատ պերճ եր յերևում։ Նա յերկարահասակ եր, փոքրիկ, կլոր գլխով, բարակ տոտիկներով, — նման եր՝ վոչ ասեմ ջութակի, վոչ ասեմ ճպուռի։ Նրա նուրբ լսողությունը, վոր սովոր եր ֆլեյտայի վշտոտ ձայնին և պարողների քնքուշ խոսքերին, չեր կարող տանել յերեխաների ամուր, սրբախ կանչերը։

— Դադարեցեք բղավելուց, — բարկանում եր նա։ — Մթթե կարելի յե այդքան բարձր բղավել։ Հիացմունքը պետք է արտահայտել գեղեցիկ, քաղցրահնչյուն արտահայտություններով... Նու, որինակ...

Նա դիրք բռնեց, բայց չկարողացավ որինակ բերել։ Ինչպես բոլոր պարի ուսուցիչները, նա ևս, սովորություն ուներ նայել գլխավորապես ներքև, վոտքերի մոտ։ Ավաղ, նա չեր տեսնում այն, ինչ կատարվում եր վերևում։

Ոդապարիկները ծախողի կոշիկն ընկավ նրա գլխի վրա։ Նրա գլուխը փոքր եր։ Յեվ մեծ, ծղոտե կոշիկը

նրա գլխի վրա ամենահիանալի ձևով նստեց, իբրև գլխարկ։

Այստեղ, հենց ինքը, պարերի պերճաշուք ուսուցիչն էլ բղավեց, ինչպես ծույլ գոմեշներ արածացնող հոտաղ։ Կոշիկը նրա դեմքի կեսը ծածկեց։

Ցերեխաները փորները բռնեցին։

— Հա՜-հա՜-հա՜։

— Հա՜-հա՜-հա՜։

Պարի ուսուցիչ Մինյերկույեվը
Սովորաբար յերբեք չեր նայում վերը
Առնետի նման միշտ ծվծվում եր
Մի քիթ ուներ, վոր միշտ յերկարում եր
Յեվ ահա, հենց նրա քթի դոշին
Բուսեց ծղոտե մի կոշիկ։

Այդպես եյին յերգում յերեխաները՝ նստած ցանկապատի վրա և պատրաստ յուրաքանչյուր բոպե վար գլորվել մյուս կողմ ու ծլկվել։

— Ախ, — հեծեծում եր պարի ուսուցիչը։ — Ախ, ինչպես եմ տանջվում։ Գոնե պարահանդեսի կոշիկ լիներ, վոչ թե սրա նման զզվելի, կոպիտ կոշիկ։

Վերջացավ նրանով, վոր պարի ուսուցչին ձերբակալեցին։

— Սիրելիս, — ասացին նրան, — ձեր տեսքը սարսափ է առաջացնում։ Դուք խանգարում եք հասարակական անդորրը։ Այդպիսի բան չպետք է անել յերբեք և մանավանդ այսպիսի տագնապալի ժամանակ։

Պարի ուսուցիչը ձեռքերն եր կոտրատում։

— Վորպիսի՜ սուտ, — հեկեկում եր նա։ — Վորպիսի կպչնովի բան։ Յես մի մարդ եմ, վորն ապրում է վայլ-

սերի ու ժպիտների մեջ, յես, վորի կերպարանքը ջուրթակի բանալու յե նման, մի՞թե յես կարող եմ խանգարել հասարակական անդորրը։ Ո՜ւ։

Հետո ինչ տեղի ունեցավ պարի ուսուցչի հետ՝ հայտնի չե։ Յեվ վերջապես՝ հետաքրքիր եվ չե։ Ավելի կարևոր ե իմանալ, թե ինչ պատահեց թռիչք կատարող ոդապարիկներ ծախողի հետ։

Նա թռչում եր, իբրև ընտիր խատուտիկ։

— Այդ զայրացուցիչ ե, — բողոքում եր ոդապարիկներ ծախողը։ — Յես չեմ ուզում թռչել։ Յես, պարզապես չգիտեմ թռչել։։։

Ամեն ինչ անոգուտ եր։ Քամին ուժեղանում եր։ Ոդապարիկների կույտը բարձրանում եր ավելի և ավելի վերև։ Քամին քշում եր նրանց քաղաքից դուրս, դեպի Յերեք հասալիկների պալատի կողմը։

Յերբեմն ոդապարիկներ ծախողին հաջողվում եր նայել ներքև։ Այդ ժամանակ նա տեսնում եր կտուրներ, կըղմինտրներ, վորոնք նման եյին կեղտոտ յեղունգների, թաղամասեր, կապույտ, նեղ ջուր, դաճաճ մարդկանց, և այդինների կանաչ ապուրը։ Քաղաքը շուռ եր գալիս նրա տակը, կարծես քորոցի վրա անցկացրած։

Գործը վատ կերպարանք եր ստանում։

«Մի քիչ եվ, և ահա, յես կընկնեմ Յերեք հասալիկների ծառաստանը», սարսափում եր ծախողը։

Իսկ հետևյալ րոպեյին, նա դանդաղ, հանդիսավոր ու գեղեցիկ լողում եր ծառաստանի վրա, հետզհետե ավելի և ավելի ներքև իջնելով։ Քամին հանդարտվում եր։

«Կարելի յե ասել վոր հիմա յես կնստեմ գետնի վրա։ Ինձ կբռնեն, նախ հիմնավորապես կծեծեն, իսկ հետո բանտ կդնեն, կամ, վորպեսզի հոգսի տակ չընկնեն, միանգամից գլուխս կկտրեն»։

Նրան վոչ վոք չեր տեսնում։ Միայն մի ծառի վրայից, չորս կողմ թռան վախեցած թռչունները։ Թռչող ոդապարիկների բաղմագույն կույտից ընկավ թեթև, ոդային ստվեր, նման ամպի ստվերի։ Ճաճանչելով իր ուրախ, ծիածանային ներկերով, նա սահեց ճանապարհի վրայով, վորը սիրուած եր խոշոր ավազով, ծաղկաթմբի վրայով, սագ հեծած տղայի արձանի վրայով, և գվարդիականի վրայով, վորը քնել եր իր պահակատեղիում։ Յեվ դրա հետևանքով, գվարդիականի դեմքի հետ տեղի ունեցան հիանալի փոփոխություններ։ Անմիջապես նրա քիթը դառավ կապույտ, ինչպես մեռածինը, հետո կանաչ, ինչպես ֆոկուսնիկինը և վերջապես կարմիր՝ ինչպես հարբածինը։ Այսպես, փոխելով իրենց յերանգը, շողշողում են ապակիները կալեյդոսկոպի մեջ։

Մոտենում եր ճակատագրական րոպեն, թռիչքն ուղղվում եր դեպի պալատի բաց լուսամուտները։ Ոդապարիկներ ծախողը չեր կասկածում, վոր իսկույն ներս կնետվի նրանցից մեկով, ինչպես փետուրիկ՝ վորը նախագուշակում ե, թե նամակ պիտի ստանան։

Այդպես եվ պատահեց։

Ոդապարիկներ ծախողը թռավ լուսամուտի միջով։ Յեվ լուսամուտը դուրս յեկավ պալատի խոհանոցի լուսամուտը։ Դա՝ անուշեղենների բաժանմունքն եր։

Այդ որը, Յերեք հասալիկների պալատում նախատեսվում եր հանդիսավոր նախաճաշ՝ նախորդ որվա խռովությունը հաջողությամբ ճնշելու առթիվ։ Նախաճաշից հետո, Յերեք հասալիկները, ամբողջ պետական խորհուրդը, շքա-

խումբն ու պատվավոր հյուրերը պետք է գնային դատի հրապարակը։

Իմ սիրելի բարեկամներ։ Ընկնել պալատի խոհանոցը՝ դրավիչ բան է։ Հասալիկները գիտեին իրենց բերանի համը։ Բացի դրանից, դեպքն էլ արտակարգ էր։ Հանդիսավոր նախաճաշ։ Կարող եք պատկերացնել թե ինչպիսի հետաքրքիր աշխատանք էին անում այդ որը պալատի խոհարարները ու անուշագործները։

Թռչելով անուշարանից ներս, ոդապարիկները ծախողը միաժամանակ զգաց և սարսափ, և հիացմունք։ Այդպես, հավանականաբար սարսափում և հիանում է բուը, որը թռչում է անփույթ մնտեսուհու ձեռքով լուսամուտում ցուցադրված տորտի վրա։

Նա միայն մի բոպե թռավ, նա չկարողացավ ինչպես հարկն է շուրջը նայել։ Սկզբում նրան թվաց, որ նա ընկավ մի զարմանալի թռչնաբուն, որտեղ յերգով ու ծուլոցով, շվոցով ու շառաչով պատույտ էին գալիս հարավային յերկրների բազմագույն ու թանկագին թռչունները։ Իսկ հետևյալ վայրկյանին նա մտածեց, որ դա թռչնաբուն չե, այլ մրգի խանութ, լցված արևադարձային մրգերով, որ ճզմվել էին, որ հյութաքամ էին լինում, որ վողողվում էին սեփական հյութով։ Գլխապտույտ առաջացնող քաղցր բույրը խփում էր նրա քթին։ տոթն ու տապը փակել էին նրա կոկորդը։

Այստեղ արդեն, ամեն ինչ խառնվեց։ — և զարմանալի թռչնաբունը, և մրգի խանութը։

Ոդապարիկները ծախողն ամբողջ թափով նստեց ինչ որ փափուկ ու տաք բանի վրա։ Ոդապարիկները, նա ձեռքից բաց չթողեց։ Նա ամուր բռնել էլ պարանը։

Ոդապարիկները անշարժ կանգ առան նրա գլխավերևում։

Նա աչքերը փակեց և վճռեց վոչ մի գնով բաց չանել։

«Այժմ յես ամեն ինչ հասկանում եմ, — մտածեց նա։ — սա վոչ թռչնաբուն է, վոչ էլ մրգի խանութ։ Սա՝ անուշարան է։ Իսկ յես նստել եմ տորտի մեջ»։

Հենց այդպես էլ էր։

Նա նստել էր շոկոլադի, նարինջների, նուռերի, կրեմի, շաքարած մրգի, շաքարափոշու և մուրաբայի թագավորության մեջ ու նստել էր դահի վրա, իբրև հոտավետ, վարդագույն թագավորության տեր։ Նրա դահը տորտն էր։

Նա աչքերը բաց չէր անում։ Նա սպասում էր անհերևակայելի սկանդալի և պատրաստ էր ամեն ինչի համար։ Բայց պատահեց մի բան, որին նա բոլորովին չէր սպասում։

— Տորտը փչացավ, — ասաց կրտսեր անուշագործը, դաժան ու վշտոտ։

Հետո տիրեց լռություն։ Միայն պայթում էին փուչիկները յեփվող շոկոլադի մեջ։

«Ի՞նչ պիտի լինի», — շշնջում էր ոդապարիկներ ծախողը, սարսափից խեղդվելով և ցավեցնելու աստիճան կոպերը սեղմելով։ Նրա սիրտը թռչկոտում էր, ինչպես կոպեկանոցը դանձանակի մեջ։

— Դատարկ բան է։ — ասաց ավագ անուշագործը, նույնպես դաժանաբար։ — Դահլիճում յերկրորդ տեսակը կերել են։ Քսան բոպե հետո պետք է տորտը մատուցել։ Բազմագույն ոդապարիկները ու թռչող սրիկայի հիմար ուրախը հիանալի զարդարանք կհանդիսանան տոնական տորտի համար։

Յեվ այս ասելով, անուշագործը վորոտաց։

— Տվեք կրեմը։

Յեվ իսկապես, ավեցին կրեմը։ Այդ ինչ բան եր։։։

Յերեք անուշագործ և քսան աշկերտներ նետվեցին դեպի ծախողն այնպիսի թափով, վորը պատիվ կբերեր Յերեք հասալիկներից ամենահասալիկին։

Մի բոպեյում նրան բոլոր կողմերից կրեմով ծեփեցին։ Նա նստել եր փակ աչքերով, նա վոչինչ չեր տեսնում, բայց տեսարանը հրեշավոր եր։ Նրան ամբողջովին ծեփեցին։ Գլուխն ու կլոր ռեխը, վոր նման եր մարգարտածաղիկներով նախշած թեյամանի՝ մնացին դուրս։ Մնացյալը ծածկված եր սպիտակ կրեմով, վորն ուներ հաճելի վարդագույն յերանգ։ Ոդապարիկներ ծախողը նման եր ամեն ինչի, բայց ինքն իր հետ նմանությունը կորցրել եր, ինչպես կորցրել եր իր ծղոտե կոշիկը։

Բանաստեղծն այժմ նրան կարող եր ընդունել սպիտակ փետրավորված կարապի տեղ, այգեպանը՝ մարմարե արձանի, լվացարարուհին՝ սապնափրփուրի բլուրի, իսկ չարաճճին՝ ձյունամարդու։

Վերևում, կախվել եյին ոդապարիկները։ Զարդարանքը խելքից-մտքից դուրս բան դարձավ, բայց, այնուամենայնիվ, ամբողջը միասին բավական հետաքրքիր պատկեր եյին կազմում։

— Այսպես,— ասաց գլխավոր անուշագործը՝ իր սեփական նկարով հիացող նկարչի տոնով։

Յեվ հետո, նրա ձայնը, ինչպես առաջին անգամին, դարձավ դաժան և նա բղավեց։

— Շաքարած մրգեր։

Հայտնվեցին շաքարած մրգեր։ Ամեն տեսակի, ամեն տեսքի, ամեն ձևի։— դառնահամ, վանիլային, թթվաշ, յերանկյունի, աստղաձև, կլոր, կիսալուսին, վարդեր։

Աշկերտները աշխատում էին վողջ յեռանդով։ Գլխավոր անուշագործը դեռ յերեք անգամ ձեռները իրար չխփած՝ խկուլն ամբողջ տորտը,— կրեմի վողջ կույտը,— տնկոտվեց շաքարած մրգերով։

— Պատրաստ է,— ասաց գլխավոր անուշագործը։— Այժմ, կարող եմ ասել, վոր հարկավոր է տորտը վառարան մտցնել, վորպեսզի մի քիչ կարմրի։

«Վառարան»— սարսափեց ոդապարիկները ծախողը։ Ի՞նչ։ Վո՞ր վառարանը։ Ի՞նձ՝ վառարանը»։

Այստեղ, անուշարան ներս վազեց ծառաներից մեկը։

— Տորտ, տորտ,— բղավեց նա։— Անմիջապես տորտը։ Դահլիճում անուշ բան են սպասում։

— Պատրաստ է,— պատասխանեց գլխավոր անուշագործը։

«Դե փառք աստծու»,— մտածեց ծախողը։ Այժմ նա աչքերը մի քիչ բաց արեց։

Վեց ծառա, կապույտ համազգեստները հագներին, վերցրին վիթխարի պնակը, վորի վրա նա նստած եր։ Նրան տարան։ Արդեն հեռանալով, նա լսեց, թե ինչպես ծիծաղում էին իր վրա խոհարարները։

Լայն սանդուղքով նրան վերև տարան։ Այնտեղ բացվում եր դահլիճը։ Ոդապարիկները ծախողը նորից մի ըոպե մռայլվեց։ Դահլիճն ազմկոտ եր և ուրախ։ Հնչում էին բազմաթիվ ձայներ, վորոտում եր ծիծաղը, շրխկում էին ծափահարությունները։ Բոլոր նշաններից յերևում եր, վոր հանդիսավոր նախաճաշը հիանալի հաջողվել եր։

Ոդապարիկները ծախողին, կամ ավելի ճիշտ՝ տորտը,— բերեցին և դրեցին սեղանի վրա։

Այդ ժամանակ, ոդապարիկները ծախողն աչքերը բաց արեց։

Յեվ հենց այդտեղ նա տեսավ Յերեք հասալիկներին։

Նրանք այնքան հաստ եյին, վոր ոդապարիկներ ծախողի բերանը բաց մնաց։

«Պետք է անմիջապես բերանս փակել, — իսկույն մտածեց նա։ — իմ դրության մեջ ավելի լավ է կենդանության նշաններ ցույց չտալ»։

Բայց ավաղ, — բերանը չեր փակվում։ Այդպես շարունակվեց յերկու րոպե։ Հետո ոդապարիկներ ծախողի զարմանքը պակասեց։ Ճիգ գործ դնելով, նա բերանը փակեց։ Բայց այդ ժամանակ, իսկույն դուրս չռվեցին աչքերը։ Մեծ դժվարությամբ, հերթով փակելով մեկ բերանը, մեկ աչքերը, նա վերջնականապես հաղթեց իր զարմանքը։

Հասալիկները նստել եյին գլխավոր տեղերում, մյուս հասարակությունից ավելի բարձր։

Նրանք ուտում եյին բոլորից շատ։ Մեկը նույնիսկ սկսեց անձեռոցիկն ուտել։

Այդ ժամանակ, մյուսն ասաց։

— Դուք անձեռոցիկն եք ուտում...

— Մի՞թե։ Յես այնքան տարվել եյի...

Նա անձեռոցիկը թողեց և հենց այդտեղ սկսեց ծամել յերրորդ հասալիկի ականջը։

Բոլորը ծիծաղից գլորվեցին։

— Թողնենք կատակները, — ասաց յերկրորդ հասալիկը, պատառաքաղը բարձրացնելով։ — Գործը լուրջ ընթացք է առնում։ Տորտը բերեցին։

— Ուռա...

Բարձրացավ ընդհանուր աշխուժություն։

«Ի՞նչ պիտի լինի, — տանջվում եր ոդապարիկներ ծախողը։ — Ի՞նչ պիտի լինի։ Նրանք ինձ կուտեն»։

Այդ ժամանակ խփեց ժամի յերկուսը։

— Մի ժամ հետո դատի հրապարակում կսկսվի մահապատիժը, — ասաց առաջին հասալիկը։

— Առաջին հերթին, ի հարկե կգլխատեն գինագործ Պրոսպերոյին, — հարցրեց պատվավոր հյուրերից մեկը։

— Նրան այսոր չեն գլխատելու, — պատասխանեց պետական կանցլերը։

— Ի՞նչպես։ Ի՞նչպես։ Ի՞նչու։

— Մենք առայժմ պահպանում ենք նրա կյանքը։ Մենք ուզում ենք նրանից իմանալ խռովարարների ծրագրերը, դավադրության ղեկավարների անունները։

— Վո՞ր տեղ է նա այժմ։

Վողջ հասարակությունը չափազանց հետաքրքրված եր։ Նույնիսկ մոռացել եյին տորտի մասին։

— Նա առաջվա պես նստած է յերկաթե վանդակում։ Վանդակը գտնվում է այստեղ, թագաժառանգ Տուրթիի զազանանոցում։

— Կանչեցեք...

— Բերեցեք նրան այստեղ, — բղավեցին հյուրերը։

— Ճիշտ վոր, — ասաց առաջին հասալիկը։ — Թող մեր հյուրերն այդ զազանին մոտիկից դիտեն։ Յես կառաջարկեյի բոլորին՝ գնալ զազանանոց։ Բայց այնտեղ վոռնոց է, հաչոց, հոտ։ Դա գավաթների գնգոցից ու պտուղների բույրից շատ ավելի վատ է...

— Ի հարկե, ի հարկե։ Զարժե գնալ զազանանոց...

— Թող Պրոսպերոյին բերեն այստեղ։ Մենք տորտ կուտենք և կնայենք այդ հրեշին։

Այդ ժամանակ, ոդապարիկներ ծախողն աչքերը բաց արեց։

Յեվ հենց այդտեղ նա տեսավ Յերեք հասալիկներին։

Նրանք այնքան հաստ էին, վոր ոդապարիկներ ծախողի բերանը բաց մնաց։

«Պետք է անմիջապես բերանս փակել, — խսկույն մտածեց նա։ — իմ դրության մեջ ավելի լավ է կենդանության նշաններ ցույց չտալ»։

Բայց ավաղ, — բերանը չեր փակվում։ Այդպես շարունակվեց յերկու րոպե։ Հետո ոդապարիկներ ծախողի դարմանքը պակասեց։ Ճիգ գործ դնելով, նա բերանը փակեց։ Բայց այդ ժամանակ, խսկույն դուրս չռվեցին աչքերը։ Մեծ դժվարությամբ, հերթով փակելով մեկ բերանը, մեկ աչքերը, նա վերջնականապես հաղթեց իր դարմանքը։

Հասալիկները նստել էին գլխավոր տեղերում, մյուս հասարակությունից ավելի բարձր։

Նրանք ուտում էին բոլորից շատ։ Մեկը նույնիսկ սկսեց անձեռոցիկն ուտել։

Այդ ժամանակ, մյուսն ասաց։

— Դուք անձեռոցիկն եք ուտում...

— Մի՞թե։ Յես այնքան տարվել էի...

Նա անձեռոցիկը թողեց և հենց այդտեղ սկսեց ծամել յերրորդ հասալիկի ականջը։

Բոլորը ծիծաղից գլորվեցին։

— Թողնենք կատակները, — ասաց յերկրորդ հասալիկը, պատառաքաղը բարձրացնելով։ — Գործը լուրջ ընթացք է ստանում։ Տորտը բերեցին։

— Ուռա...

Բարձրացավ ընդհանուր աշխուժություն։

«Ի՞նչ պիտի լինի, — տանջվում եր ոդապարիկներ ծախողը։ — Ի՞նչ պիտի լինի։ Նրանք ինձ կուտեն»։

Այդ ժամանակ խփեց ժամի յերկուսը։

— Մի ժամ հետո դատի հրապարակում կսկսվի մահապատիժը, — ասաց առաջին հասալիկը։

— Առաջին հերթին, ի հարկե կգլխատեն գինագործ Պրոսպերոյին, — հարցրեց պատվավոր հյուրերից մեկը։

— Նրան այսոր չեն գլխատելու, — պատասխանեց պետական կանցլերը։

— Ի՞նչպես։ Ի՞նչպես։ Ի՞նչու։

— Մենք առայժմ պահպանում ենք նրա կյանքը։ Մենք ուզում ենք նրանից իմանալ խռովարարների ծրագրերը, դավադրության ղեկավարների անունները։

— Վո՞ր տեղ է նա այժմ։

Վողջ հասարակությունը չափազանց հետաքրքրված եր։ Նույնիսկ մոռացել էին տորտի մասին։

— Նա առաջվա պես նստած է յերկաթե վանդակում։ Վանդակը գտնվում է այստեղ, թագաժառանգ Տուլթիի գաղտնանոցում։

— Կանչեցեք...

— Բերեցեք նրան այստեղ, — բղավեցին հյուրերը։

— Ճիշտ վոր, — ասաց առաջին հասալիկը։ — Թող մեր հյուրերն այդ գաղտնի մոտիկից դիտեն։ Յես կառաջարկեի բոլորին՝ գնալ գաղտնանոց։ Բայց այնտեղ վոնոց է, հաչոց, հոտ։ Դա դավաթների գնդոցից ու պտուղների բույրից շատ ավելի վատ է...

— Ի հարկե, ի հարկե։ Զարժե գնալ գաղտնանոց...

— Թող Պրոսպերոյին բերեն այստեղ։ Մենք տորտ կուտենք և կնայենք այդ հրեշին։

«Նոքից տորտը, — վախեցավ ոդապարիկներ ծախողը։— Դուր է յեկել նրանց այդ տորտը։ Վորկրամոլներ»։

— Բերեցեք Պրոսպերոյին, — ասաց առաջին հասարակը։

Պետական կանցլերը դուրս գնաց։ Ծառաները, վոր կանգնել եյին միջանցքի պես, ճանապարհ տվեցին ու խոնարհվեցին։ Միջանցքը կրկնակի ցածրացավ։

Վորկրամոլները լռեցին։

— Նա շատ սարսափելի յե, — ասաց յերկրորդ հասարակը։ — Նա ամենից ուժեղ է։ Նա առյուծից ուժեղ է։ Աստվածությունը քոցավառել է նրա աչքերը։ Մարդու ուժը չի պատի՝ նայել նրանց։

— Նա սարսափելի գլուխ ունի, — ասաց պետական խորհրդի քարտուղարը։ — Նրա գլուխը վիթխարի յե։ Նա ունի շեկ մազեր։ Նրա գլուխը նման է ոյան խոյակի։ Կարելի յե կարծել, վոր նրա գլուխը պատած է քոցով։

Այժմ, յերբ խոսք բացվեց զինագործ Պրոսպերոյի մասին, վորկրամոլների հետ փոփոխություն տեղի ունեցավ։ Նրանք դատարեցին ուտել, կատակել, աղմկել, փորները հավաքեցին, մի քանիսը նույնիսկ գունատվեցին։ Արդեն շատերը դժգոհ եյին, վոր ցանկացել եյին նրան տեսնել։

Յերեք հասարակները, լռեցան և կարծես մի թեթև լղարեցին։

Հանկարծ բոլորը լռեցին։ Տիրեց լիակատար լռություն։ Հասարակներից յուրաքանչյուրն այնպիսի մի շարժում արեց, կարծես ցանկանում եր թաղնվել մյուսի յետևում։

Դահլիճ բերեցին զինագործ Պրոսպերոյին։

Առջևից գալիս եր պետական կանցլերը։ Կողքերից՝ գվարդիականները։ Նրանք մտան, առանց հանելու իրենց

սև գլխարկները, մերկ թրերը բռնած։ Զրնգում եր շղթան։ Զինագործի թևերը շղթայված եյին։ Նրան մոտեցրին սեղանին։ Նա կանգնեց հասալիկներից մի քանի քայլ հեռավորության վրա։

Զինագործ Պրոսպերոն կանգնել եր, գլուխը քաշ արած։ Գերին գունատ եր։ Արյունը՝ չորացել եր նրա ճակատի և քունքի վրա, խճճված շեկ մազերի տակ։

Նա գլուխը բարձրացրեց և նայեց հասալիկներին։ Բոլոր մոտիկ նստողները յետ նետվեցին։

— Դուք ինչու՞ նրան բերեցիք,—լսվեց հյուրերից մեկի ձիչը։ Դա յերկրի ամենահարուստ Ջրաղացատերն եր։— Յես նրանից վախենում եմ։

Յեվ Ջրաղացատերն ուշադնաց յեղավ, քիթը թաղելով կիսելի մեջ։ Հյուրերից վոմանք նետվեցին դեպի դռները։ Այժմ արդեն, տորտի ժամանակ չեր։

— Ի՞նչ եք ուզում ինձանից,—հարցրեց զինագործը։

Առաջին հասալիկը սիրտ առավ։

— Մենք ցանկանում եյինք նայել քեզ,—ասաց նա։— Իսկ մի՞թե քեզ հետաքրքիր չե տեսնել նրանց, ում ձեռքում դու գտնվում ես։

— Յես զզվում եմ ձեզ տեսնելուց։

— Շուտով մենք քո գլուխդ կկտրենք։ Այդպիսով մենք կոգնենք քեզ, վոր մեզ չտեսնես։

— Յես չեմ վախենում։ Իմ գլուխս՝ մի հատ է։ Ժողովուրդն ունի հարյուր հազար գլուխներ։ Դուք նրանց չեք կարող կտրել։

— Այսոր դատի հրապարակի վրա մահապատիժ կա։ Այնտեղ դահիճները քու ընկերներիդ հաշիվն են մաքրում։

ՀԱՅԿ-ՍՍՌ Ա. Մեսրոպյանի անվան գրադարան

Վորկրամոնները մի քիչ հանդստացան։ Զրաղացատերն ուշքի յեկավ և նույնիսկ սկսեց լիզել կիսելի վարդերն իր այտերի վրայից։

— Ձեր ուղեղը ճարպակալվել է,—ասաց Պրոսպերոն։— դուք ձեր ստամոքսից այն կողմ վոչինչ չեք տեսնում։։։

— Ասացեք խնդրեմ,—վիրավորվեց յերկրորդ հասատլիկը։—Իսկ ինչ պետք է մենք տեսնեյինք։

— Հարցրեք ձեր մինիստրներին։ Նրանք գիտեն, թե յերկրում ինչ է կատարվում։

Պետական կանցլերն անորոշ մռմռաց։ Մինիստրներն սկսեցին մատներով ափսեները թմբկահարել։

— Հարցրեք նրանց,—շարունակեց Պրոսպերոն,— նրանք ձեզ կպատմեն։։։

Նա ընդհատեց։ Բոլորն սպասողական նայեցին։

— Նրանք ձեզ կպատմեն այն մասին, վոր գյուղացիները, վորոնցից դուք խլում եք հացը, ծանր աշխատանքով ծեծկված՝ յելնում են կալվածատերերի դեմ։ Նրանք այրում են նրանց պալատները, նրանք վռնդում են նրանց իրենց հողերից։ Հանքափորները չեն ուզում քարածուխ հանել, վորպեսզի դուք տիրանաք նրան։ Բանվորները չարդում են մեքենաները, վորպեսզի չաշխատեն հանուն ձեր հարստանալու։ Նավատիները ձեր բեռները ծովն են նետում։ Զինվորները հրաժարվում են ծառայել ձեզ։ Գիտնականները, պաշտոնյաները, դատավորները, դերասանները՝ անցնում են ժողովրդի կողմը։ Բոլորը, ովքեր առաջ աշխատում էյին ձեր ոգին և դրա համար գրոշներ էյին ստանում, իսկ մինչ այդ դուք ճարպակալում էյիք, բոլոր դժբաղդները, անպատսպարները, սովածները, նիհարած վորբերը, խեղանդամները, աղքատները—բոլորը պատերազմի յեն յելնում ձեր դեմ, ընդդեմ ճարպոտների, հարուստների, վոր սիրտը քարով են փոխարինել։։։

— Ինձ թվում է, վոր նա ավելորդ բաներ է խոսում,— միջամտեց պետական կանցլերը։

Բայց Պրոսպերոն շարունակեց խոսել։

— Տասնհինգ տարի յես ժողովրդին սովորեցրի առել ձեզ և ձեր իշխանությունը։ Ո, ինչքան վախուց է, վոր հավաքում ենք մեր ուժերը։ այժմ հասել է ձեր վերջին ժամը։

— Բավական է,—ճղճղաց յերրորդ հասատլիկը։

— Պետք է նրան նորից վանդակ նստացնել,—առաջարկեց յերկրորդը։

Իսկ առաջինն ասաց։

— Դու կնստես քո վանդակում այնքան, մինչև վոր մենք բռնենք մարդիկ Թիբուլին։ Մենք ձեզ կգլխատենք միասին։ Ժողովուրդը կտեսնի ձեր դիակները։ Յերկար ժամանակով նա այլևս ցանկություն չի ունենա կռվել մեր դեմ։

Պրոսպերոն լուռ եր։ Նա նորից գլուխը քաշ արեց։

Հասատլիկը շարունակեց։

— Դու մոռացել ես, թե ում հետ ես ուզում կռվել։ Մենք, Յերեք հասատլիկներս, ուժեղ ենք ու զորեղ։ Ամեն ինչ պատկանում է մեզ։ Յես, առաջին հասատլիկս, տիրում եմ այն վողջ հացին, վոր ծնում է մեր հողը։ Յերկրորդ հասատլիկին պատկանում է քարածուխը, իսկ յերրորդը գնել է վողջ յերկաթը։ Մենք ամենից հարուստ ենք։ Յերկրի ամենահարուստ մարդը մեզանից հարյուր անգամ աղքատ է։ Մեր վոսկով մենք կարող ենք անել այն ամենը, ինչ վոր ցանկանանք։

Այստեղ, վորկրամոլները կատաղության հասան։ Հասարակի խոսքերը նրանց քաջություն ներշնչեցին։

— Վանդակ դրեք նրան, վանդակ,— սկսեցին բղավել նրանք։

— Գաղանանոց։

— Վանդակ։

— Խռովարար։

— Վանդակ։

Պրոսպերոյին տարան։

— Իսկ այժմ, մենք տորտը կուտենք,— ասաց առաջին հասարակը։

«Վերջ»,— վճռեց ոդապարիկներ ծախողը։

Բոլոր հայացքները սևեռվեցին նրա վրա։ Նա աչքերը փակեց։ Վորկրամոլներն ուրախացան։

— Հո՜-հո՜-հո՜։

— Հա՜-հա՜-հա՜։ Ինչ հիանալի տորտ է։ Նայեցեք այս ոդապարիկներին։

— Նրանք հիանալի յեն։

— Նայեցեք այս ռեխին։

— Նա սքանչելի յե։

Բոլորը շարժվեցին դեպի տորտը։

— Իսկ ի՞նչ կա այս ծիծաղելի խրտվիլակի ներսում,— հարցրեց ինչ-վոր մեկը և ուժեղ շրխկացրեց ծախողի ճակատին։

Պետք է վոր կոնֆետներ լինեն։

— Կամ շամպայն։

— Շատ հետաքրքիր է։ Շատ հետաքրքիր է։

— Յեկեք նախ կտրենք այս գլուխը և տեսնենք թե ինչ դուրս կգա...

— Վա՛յ։

Ոդապարիկներ ծախողը չկարողացավ իրեն զսպել և ասաց չափազանց հստակ։

— Վա՛յ,— և աչքերը բաց արեց։

Հետաքրքրվողները յետ նետվեցին։ Յեվ հենց այդ բոպեին, սրահում լսվեց մանկական ուժեղ ճիչ։

— Տիկնիկս, իմ տիկնիկս։

Բոլորն ականջ դրեցին։ Հատկապես հուզվեցին Յերեք հասարակները և պետական կանցլերը։

Ճիչը փոխարկվեց լացի։ Սրահում լաց եր լինում վշտացած տղան։

— Ի՞նչ բան է,— հարցրեց առաջին հասարակը։— Այդ լալիս է թագաժառանգ Տուրթին։

— Այդ լալիս է թագաժառանգ Տուրթին։— միաձայն կրկնեցին յերկրորդ ու յերրորդ հասարակները։ Նրանք յերեքն ել զունատվեցին։ Նրանք չափազանց վախեցած եյին։

Պետական կանցլերը, մի քանի մինիստրներ և ծառաները նետվեցին դեպի սրահի դուռը։

— Ի՞նչ բան է, ի՞նչ բան է,— շշունջներով աղմկում եր դահլիճը։

Տղան վազեց դահլիճ։ Նա դես ու դեն հրեց մինիստրներին ու ծառաներին։

Նա վազեց դեպի հասարակները, մազերը ցնցելով և լաքած կիսակոշիկները փայլեցնելով։ Հեծկլտալով, նա բղավում եր առանձին բառեր, վորոնք վոչ վոք չեր հասկանում։

«Այդ տղան ինձ կտեսնի,— անհանգստացավ ոդապարիկներ ծախողը։— Անիծված կրեմը, վորը խանգարում է ինձ շնչել և թեկուզ մատս շարժել, ի հարկե, շատ դուր

կգա տղային։ Վորպեսզի նա լաց չլինի, նրա համար, ի հարկե, կկարեն մի կտոր տորտ, իմ կրունկի հետ միասին»։

Բայց տղան նույնիսկ չէր նայում տորտին։ Նույնիսկ հիանալի ոդապարիկները, վոր կախվել էին ծախողի կլոր գլխի վերևում, չէին գրավում նրա ուշադրությունը։

Նա դառն լալիս էր։

— Ինչումն է բանը — հարցրեց առաջին հասալիկը։

— Ի՞նչու յե լաց լինում Թագաժառանգ Տուլթթին, — հարցրեց յերկրորդը։

Իսկ յերրորդը, թշներն ուռցրեց։

Թագաժառանգ Տուլթթին տասնմեկ տարեկան էր։ Նա դասախարակվել էր Յերեք հասալիկների պալատում։ Նա մեծացել էր, իբրև փոքրիկ արքայազն։ Հասալիկներն ուզում էին ժառանգ ունենալ։ Նրանք յերեխաներ չունեին։ Յերեք հասալիկների ամբողջ հարստությունը և յերկրի կառավարումը պետք է անցներ Թագաժառանգ Տուլթթին։

Թագաժառանգ Տուլթթի արցունքները հասալիկներին ներշնչեցին ավելի շատ սարսափ, քան դինապորձ Պրոսպերոյի խոսքերը։

Տղան սեղմել էր բռունցքները, ճոճում էր դրանք և վոտները գետնին էր խփում։

Նրա ցասումին ու վիրավորանքին սահման չկար։

Վոչ վոք պատճառը չգիտեր։

Դասախարակները նայում էին այունների յեռևից, վախենալով դահլիճ մտնել։ Այդ դասախարակները սև հագուստներով ու սև կեղծամերով՝ նման էին լամպի մրոտված ապակիների։

Վերջիվերջո, մի քիչ հանգստանալով, տղան պատմեց, թե ինչումն է բանը։

— Իմ տիկնիկս, իմ հիանալի տիկնիկս կոտրվեց։։։ Իմ տիկնիկս փչացրին։ Գվարդիականները իմ տիկնիկս թրերով խողխողեցին։

Նա նորից հեկեկաց։ Փոքրիկ բռունցքներով նա սրբեց աչքերը և արցունքները քսեց այտերին։

— Ի՞նչ, — բղավեցին հասալիկները։

— Ի՞նչ։։։

— Գվարդիականները։

— Խողխողեցին։

— Թրերով։

— Թագաժառանգ Տուլթթի տիկնիկը։

Յեվ ամբողջ դահլիճը, կարծես հառաչելով, ասաց։

— Այդ չի կարող պատահել։

Պետական կանցլերը գլուխը բռնեց։ Նույն նյարդային ջրաղացաքարը նորից ուշագնաց յեղավ, բայց իսկույն ուշքի յեկավ առաջին հասալիկի սարսափելի ճիչից։

— Ընդհատել հանդեսը։ Հետաձգել բոլոր գործերը։ Հավաքել խորհուրդը։ Բոլոր պաշտոնյաներին։ Բոլոր դատավորներին։ Բոլոր մինիստրներին։ Բոլոր դահիճներին։ Այսորվա մահապատիժները հետաձգել։ Պալատում դավաճանություն։

Բարձրացավ ժխոր։ Մի բոպե անց, պալատական կառքերը սլանում էին դեպի բոլոր կողմերը։ Հինգ բոպե անց, բոլոր կողմերից դեպի պալատ էին սլանում դատավորները, խորհրդականները, դահիճները։ Ամբոխը, վոր դատի հրապարակում սպասում էր խռովարարների գլխատմանը, պետք է ցրվեր։ Մունետիկները, կանգնելով սալահատակի վրա, հայտնեցին այդ ամբոխին, վոր գլխատումը հետաձգվում է հետևյալ որը, չափազանց կարևոր դեպքերի պատճառով։

Ոդապարիկները ծախողին տորտի հետ դահլիճից դուրս տարան։ Վորկրամոլները վայրկյանապես զգաստացան։

Բոլորը շրջապատեցին թագաժառանգ Տութթիին և լսեցին։

— Յես նստել եյի ծառաստանում, խոտի վրա և տիկնիկը նստել եր իմ կողքին։ Մենք ուզում եյինք, վոր արևի խավարում տեղի ունենար։ Դա շատ հետաքրքիր է։ Յերեկ յես կարդացի գրքում։ Յերբ խավարում է տեղի ունենում, ցերեկով հայտնվում են աստղերը։

Նա բերանը լիքը լցրեց արցունքով և չեր կարողանում խոսել։ Յեվ նրա փոխարեն, վողջ պատմությունը պատմեց դաստիարակը։ Սա ևս, խոսում եր դժվարությամբ, վորովհետև սարսափից դողում եր։

— Յես գտնվում եյի թագաժառանգ Տութթիից և նրա տիկնիկից վոչ հեռու։ Յես նստել եյի արևի տակ, քիթս վեր բարձրացրած։ Իմ քթիս վրա պղտիկ կա և յես կարվել այդ տգեղ պղուկից։ Յեվ հանկարծ, հայտնվեցին գվարդիականները։ Նրանք տասներկու հոգի եյին։ Նրանք ինչ վոր բանի մասին բորբոքված խոսում եյին։ Հավասարվելով մեզ, նրանք կանգ առան։ Նրանք ունեյին սպառնալկան տեսք։ Նրանցից մեկը, ցույց տալով թագաժառանգ Տութթիին, ասաց։ «Ահա նստել է դայլուկը։ Յերեք ճարպոտ խոզերի մոտ մեծանում է դայլուկը։ Ավաղ, յես հասկացա, թե ինչ եյին նշանակում այդ խոսքերը։

— Իսկ ովքե՞ր են այդ յերեք ճարպոտ խոզերը,— հարցրեց առաջին հասարակը։

Մյուս յերկուսը թունդ կարմրեցին։ Այդ ժամանակ, կարմրեց նաև առաջինը։ Յերեքն էլ փնչում եյին այնքան ուժեղ, վոր վերնատանը բացվում ու փակվում եր ապակե դուռը։

— Նրանք ողակաձև շրջապատեցին թագաժառանգ Տութթիին,— շարունակեց դաստիարակը։— Նրանք ասեցին։ «Յերեք խոզերը դաստիարակում են յերկաթե դայլուկին։ Թագաժառանգ Տութթի,— հարցրին նրանք,— վո՞ր կողմն է քո սիրտը»։ «Նրա սիրտը հանել են։ Նա պետք է մեծանա չար, անգութ, դաժան, ատելությամբ լի՝ դեպի մարդկանց»։ «Յերբ յերեք խոզերը սատկեն, չար դայլը կբռնի նրանց տեղը»։

— Իսկ ինչո՞ւ դուք չընդհատեցիք այդ սարսափելի խոսքերը,— բղավեց պետական կանցլերը, դաստիարակի ուսը ցնցելով։— Միթե դուք չգուշակեցիք, վոր դրանք դավաճաններ են, վորոնք անցել են ժողովրդի կողմը։

Դաստիարակը սարսափահար եր յեղել։ Նա թոթովեց։

— Յես այդ տեսնում եյի, բայց վախենում եյի նրանցից։ Նրանք չափազանց բորբոքված եյին։ Իսկ յես վոչ մի զենք չունեյի, բացի պղուկից։ Նրանք բռնել եյին թրերի կոթերից, ամեն ինչի պատրաստ։ «Նայեցեք,— ասաց նրանցից մեկը,— ահա խրտվիլակը։ Ահա տիկնիկը։ Դայլուկը խաղում է տիկնիկի հետ։ Խրտվիլակը, զսպանակով տիկնիկը, նրան ընկեր են տվել»։ Այդ ժամանակ, մյուսը բղավեց։ «Յես գյուղում թողել եմ յերեխայիս ու կնոջս։ Իմ աղան, պարսատիկը ֆռռացնելով, պատահաբար քարը կպցրեց կալվածատիրոջ ծառաստանում ծառից կախված տանձին։ Կալվածատերը հրամայեց ձաղկել աղայիս ճիպոտի հատվածներով, հարուստների իշխանությանը վիրավորելու համար, իսկ նրա ծառաներն իմ կնոջս կապեցին անարգանքի այունից»։ Գվարդիականներն սկսեցին

բղավել և հարձակվել թագաժառանգ Տուբթիի վրա։ Նա, վորը պատմել եր իր տղայի մասին, թուրը քաշեց և ծակեց նրա տիկնիկը։ Մյուսները ևս, նույնն արեցին...

Պատմությանն այս մասում թագաժառանգ Տուբթին արցունքոտվեց։

— «... Առ քեզ, գայլուկ» — ասեցին նրանք։ — Հետագայում մենք քո ճարպոտ խոզերի հախից էլ կգանք»։

— Վ.ո՞րտեղ են այդ դավաճանները,—վորոտացին հաստալիկները։

— Նրանք նետեցին տիկնիկը և վազեցին ծառաստանի խորքը։ Նրանք բղավում էին» «Կեցցե զինագործ Պրոպերոն, կեցցե մարդիկ Թիբուլը։ Կորչեն Յերեք հաստալիկները»։

— Իսկ ինչո՞ւ պահակները չէին կրակում նրանց վրա,—վրդովվեց դահլիճը։

Յեվ այդ ժամանակ, դաստիարակը մի սարսափելի բան հաղորդեց»

— Պահակները նրանց հանդեպ գլխարկներ էին ճոճում։ Յես տեսա պատվարի յետևից, թե ինչպես պահակները հրաժեշտ էին տալիս նրանց։ Նրանք ասում էին» «Ընկերներ գնացեք ժողովրդի մոտ և ասացեք, վոր շուտով բոլոր գորքերը նրա կողմը կանցնեն»...

Ահա ինչ եր պատահել ծառաստանում։ Սկսվեց տագնապը։ Պալատական գվարդիայի ամենահուսալի գորամասերը պոստի կանգնեցին պալատում, ծառաստանում, մուտքերի ու յելքերի մոտ, կամուրջների վրա և դեպի քաղաքի դարբասները տանող ճանապարհներին։

Պետական խորհուրդը հավաքվեց խորհրդակցության։ Հյուրերը ցրվեցին։ Յերեք հաստալիկները պալատի գլխա-

վոր բժշկի կշեռքի վրա կշռվեցին։ Պարզվեց, վոր, չնայած հուզմունքին, նրանք վոչ մի կաթիլ ճարպ չեյին կորցրել։ Գլխավոր բժիշկը կալանքի տակ առնվեց, ցամաք հացով ու ջրով։

Թագաժառանգ Տուլթթի տիկնիկը գտան ծառաստանում, խոտերի վրա։ Նա մեռել եր, չսպասելով արևի խավարմանը։ Նա անհույս կերպով փչացել եր։

Թագաժառանգ Տուլթին վոչ մի կերպ չեր կարող հանդըստանալ։ Նա գրկել եր կոտրված տիկնիկին և հեկեկում եր։ Տիկնիկն աղջկա տեսք ուներ։ Նա նույն տարիքին եր, ինչ վոր Տուլթին։ Թանգարժեք, ճաշակով սարքված տիկնիկ, վոր արտաքինից վոչնչով չեր տարբերվում կենդանի, փոքրիկ աղջկանից։

Այժմ նրա հագուստը պատռված եր և նրա կրծքի վրա սևին եյին տալիս թրերի հարվածների անցքերը։

Դեռ մի ժամ առաջ նա գիտեր նստել, կանգնել, ժըպտալ, պարել։ Այժմ նա դարձել եր հասարակ խրտվիլակ, փալաս։ Ինչ վոր տեղ նրա կոկորդում և կրծքում, վարդագույն մետաքսի տակ, խռխռում եր կոտրված զսպանակը, ինչպես խռխռում է հին ժամացույցը, նախքան ժամը խփելը։

— Նա մեռել է, — գանգատվեց Թագաժառանգ Տուլթին։ — Ինչպիսի վիշտ։ Նա մեռել է։

Փոքրիկ Տուլթին գայլուկ չեր։

— Այդ տիկնիկը պետք է նորոգել։

Այսպես ասաց պետական կանցլերը պետական խորհրդակցության ժամանակ։

— Թագաժառանգ Տուլթիի վիշտը սահման չունի։ Ինչ գնով ուզում է լինի, տիկնիկը պետք է նորոգել։

— Պետք է մի ուրիշը գնել, — առաջարկեցին մինիստրները։

— Թագաժառանգ Տուբթին ուրիշ տիկնիկ չի ուզում։ Նա ուզում է, որ այդ տիկնիկը հարություն առնի։

— Բայց ո՞վ կարող է նրան նորոգել։

— Ցես գիտեմ, — ասաց ժողովրդական լուսավորության մինիստրը։

— Ի՞նչ։։։

— Մենք մոռացել ենք, պարոնայք, որ քաղաքում ապրում է դոկտոր Գասպար Արներին։ Նա կնորոգի թագաժառանգ Տուբթիի տիկնիկը։

Ծայր առավ ընդհանուր հիացմունք։

— Բռավո, բռավո։

Ցեվ ամբողջ պետական խորհուրդը, հիշելով դոկտոր Գասպարի մասին, խմբովին յերգեց։

Ի՞նչպես աստղերին հասնել,
Ադվեսի պոչից բռնել,
Շոգի դարձնել ամեն քար,
Գիտե դոկտորը մեր Գասպար։

Հենց այդտեղ էլ կազմեցին հրամանը, ուղղված դոկտոր Գասպարին։ —

«Պարոն դոկտոր Գասպար Արներին։

Սրան կից ուղարկելով թագաժառանգ Տուբթիի փլասված տիկնիկը, Ցերեք հասալիկների կառավարության պետական խորհուրդը հրամայում է ձեզ՝ մինչև վաղը նորոգել այս տիկնիկը։ Այն դեպքում, յեթե տիկնիկն ստանա իր նախկին առողջ ու կենդանի տեսքը, ձեզ կտրվի ձեր ցանկացած նվերը։ Հակառակ դեպքում՝ ձեզ սպառնում է խիստ պատիժ։

Պետական խորհրդի նախագահ պետական կանցլեր»։։։

Ցեվ այս տեղում կանցլերն ստորագրեց։ Հենց այդտեղ էլ, դրոշմեցին պետական մեծ կնիքը։ Նա կլոր էր, լիք լցրած պարկի նկարով։

Պալատական գվարդիայի կապիտան գրաֆ Բոնավենտուրան, յերկու գվարդիականների ուղեկցությամբ ուղևորվեց քաղաք, որպեսզի գտնի Գասպար Արներին և հանձնի նրան պետական խորհրդի հրամանը։

Նրանք սլանում էին ձիերին նստած, իսկ յետևից գնում էր կառքը։ Այնտեղ նստել էր պալատական պաշտոնյան։ Նա ծնկների վրա դրել էր տիկնիկը։ Տիկնիկը վշտահար հենել էր նրա ուսին իր կտրված մազերով հիանալի գլուխը։

Թագաժառանգ Տուբթին դադարել էր լաց լինելուց։ Նա հավատում էր, որ հետևյալ օրը, կբերեն հարություն առած, առողջ տիկնիկին։

Այսպես տագնապալի անցավ օրը պալատում։

Բայց ինչքվ վերջացան թռչող ոդապարիկներ ծախողի արկածները։

Նրան դահլիճից դուրս տարան, — այդ մենք գիտենք։

Նա նորից հայտնվեց անուշարանում։

Ցեվ այստեղ, ազատ տեղի ունեցավ։

Տորտը տանող ծառաներից մեկը վոտքը դրեց նարնջի կեղևի վրա։

— Ամուր կաց, — բղավեցին ծառաները։

— Ոգնեցեք, — բղավեց ոդապարիկներ ծախողը, զգալով, որ իր գահը ճոճվում է։

Բայց հիմարը չդիմացավ։ Նա շրմփաց կոշտ շքաղյուսի վրա։ Նա չուեց յերկար վոտները և սկսեց յերկար ու ձիգ վոռնալ։

— Ուռա, — գոռացին ծառաները հիացմունքից։

— Սատանաներ, — ասաց ոդապարիկները ծախողն անհույս վշտով, ծառայի յետևից, պնակի ու տորտի հետ միասին դեռին ընկնելով։

Պնակը ջարդ ու փշուր յեղավ։ Կրեմը ձայն կույտերով թռավ չորս կողմը։ Ծառան վեր ցատկեց ու ծլկվեց։

Աշկերտները թռչկոտում եյին, պարում ու բղավում։

Ոդապարիկները ծախողը նստել եր հատակի վրա, բեկորների միջև, մորու ոշարակի լճում և ֆրանսիական լավագույն կրեմի ամպերում, վորոնք տխուր հալչում եյին տորտի ավերակների վրա։

Ոդապարիկները ծախողը թեթևացած շունչ քաշելով նկատեց, վոր անուշարանում միայն աշկերտներն են, իսկ գլխավոր անուշագործները չկան։

«Աշկերտների հետ յես առուտուրի մեջ կմտնեմ և նրանք կոգնեն ինձ՝ փախչել, — վճռեց նա։ — Իմ ոդապարիկները ինձ փրկանք կդառնան»։

Նա ամուր բռնել եր ոդապարիկների պարանը։ Աշկերտները չորս կողմից նրան շրջապատեցին։ Նրանց աչքերից նա տեսավ, վոր ոդապարիկները, — դա դանձ է։ Ունենալ գոնե մի ոդապարիկ՝ դա աշկերտների համար ցնորք եր և յերջանկություն։

Նա ասաց։

— Ինձ չափազանց ձանձրացրին այս արկածները։ Յես վոչ փոքր տղա յեմ, վոչ ել հերոս։ Յես չեմ սիրում թռչել և վախենում եմ Յերեք հասալիկներից, յես չեմ կարող զարդարել տոնական տորտերը։ Յես չափազանց ուզում եմ ազատել պալատն իմ ներկայությունից։

Աշկերտները դադարեցին ծիծաղելուց։ Ոդապարիկները ճոճվում եյին, պտտվում։ Այդ շարժումից, արևի լույսը բոցկլտում եր նրանց մեջ մեկ կապույտ, մեկ դեղին, մեկ կարմիր բոցով։ Դրանք սքանչելի ոդապարիկներ եյին։

— Դուք կարող եք արդյոք հարմարեցնել իմ փախուստը, հարցրեց ոդապարիկներ ծախողը, պարանը ձգելով։

— Կարող ենք, — ասաց աշկերտներից մեկը կամացուկ։

Յեվ ավելացրեց։

— Տվեք մեզ ձեր ոդապարիկները։

Ոդապարիկներ ծախողը հաղթեց։

— Լավ, — ասաց նա անտարբեր տոնով։ — համաձայն եմ։ Ոդապարիկները շատ թանգ արժեն։ Այս ոդապարիկներն ինձ շատ հարկավոր են, բայց յես համաձայն եմ։ Դուք ինձ դուր եք գալիս։ Դուք ունեք այնպիսի ուրախ, բաց դեմքեր և հնչուն ձայներ։

«Սատանան ձեզ տաներ», — ավելացրեց նա մրմնջելով։

— Գլխավոր անուշագործն այժմ պահեստումն է, — ասաց աշկերտը։ — Նա յերեկոյան թեյի կարկանդակի համար մթերք է կշռում։ Մենք պետք է շտապենք մինչև նրա վերադարձը։

— Ճիշտ է, — համաձայնվեց ոդապարիկներ ծախողը։ — չարժե դանդաղել։

— Իսկույն։ Յես մի գաղտնիք գիտեմ։

Այս խոսքերով, աշկերտը մոտեցավ պղնձե մեծ կաթսային, վոր կանգնած եր շքաղյուսե խորանարդի վրա։ Հետո նա կափարիչը բաց արեց։

— Ոդապարիկները տվեք, — պահանջեց նա։

— Դու գժվել ես, — բարկացավ ոդապարիկները ծաղրողը։ — Իմ ինչիս է պետք քո կաթսան։ Ես ուզում եմ փախչել։ Ի՞նչ, ուզում ես վոր մտնեմ կաթսան, ինչ է։

— Հենց այդպես։

— Կաթսան։

— Իսկ հետո։

— Այնտեղ կտեսնենք։ Մտեք կաթսան։ Դա փախուստի ամենալավ միջոցն է։

Կաթսան այնպես ծավալուն էր, վոր նրա մեջ կարող էր մտնել վոչ միայն լղար ոդապարիկները ծախողը, այլև Ձերեք հասալիկներից ամենահասը։

— Մտեք խկուն, յեթե ցանկանում եք ժամանակ չկորցնել։

Ոդապարիկները ծախողը նայեց կաթսայի մեջ։ Նա տակ չուներ։ Նա տեսավ սև անցք, ինչպես ջրհորում։

— Լավ, — հառաչեց նա։ — կաթսա յե՝ թող կաթսա լինի։ Դա ոդային թռիչքից ու կրեմի վաննայից վատ չե։ Ձեվ այսպես, ցտեսություն, փոքրիկ ավազակներ։ Ստացեք իմ աղատության գինը։

Նա քանդեց կապը և ոդապարիկները բաժանեց աշակերտներին։ Բոլորին ել հասավ։ — ուղիղ քսան հատ, յուրաքանչյուրին առանձին պարանով։

Հետո, իրեն հատուկ անճկունությամբ նա մտավ կաթսան, նախ այնտեղ մցնելով վոտքերը։ Աշկերտը կափարիչը փակեց։

— Ոդապարիկներ, ոդապարիկներ, — բղավեցին աշկերտները հիացմունքով։

Նրանք անուշարանից վազեցին ներքև, դեպի ծառաստանի մարգագետինը, անուշարանի լուսամուտների տակ։

Այստեղ, բաց ոդի մեջ ավելի հետաքրքիր եր՝ խաղալ ոդապարիկների հետ։

Ձեվ հանկարծ, անուշարանի յերեք լուսամուտներում յերևացին յերեք անուշագործները։

— Ի՞նչ, — վորոտաց նրանցից յուրաքանչյուրը։ — Սա ինչ բան է։ Ինչպիսի անկարգապահություն։ Մարշ դեպի յես։

Աշկերտներն այնքան վախեցել եյին նրանց ձայներից, վոր պարանները բաց թողեցին։

Ցերջանկությունը վերջացավ։

Քսան ոդապարիկներ արագ թռան վերև, փայլող կապույտ յերկինքը։ Իսկ աշկերտները կանգնել եյին ներքևում, խոտի վրա, հոտավետ սիսեռների մեջ, բերանները բաց արած և գլուխները սպիտակ գլխանոցների մեջ խրած։

ԳԼՈՒԽ 5

ՆԵԳՐՆ ՈՒ ԿԱՂԱՄԲԻ ԳԼՈՒԽԸ

Դուք կհիշեք, վոր դոկտորի տագնապալի գիշերը վերջացավ պատի ոճախից լարախաղաց ու մարդիկ Թիբուլի հայտնվելով։

Ի՞նչ եյին անում նրանք յերկուսով, արևածագին, դոկտոր Գասպարի արհեստանոցում, հայտնի չի։ Հանիմեդ մորաքույրը, հուզմունքից դոկտորին յերկար սպասելուց հոգնած՝ ամուր քնել եր և յերազում հավ եր տեսնում։

Հետևյալ որը, նշանակում է՝ ճիշտ այն որը, յերբ մանկական ոդապարիկներ ծախողը թռավ Յերեք հատուկների պալատը և գվարդիականները խողխողեցին թագաժառանգ Տուբթիի տիկնիկը,— Հանիմեդ մորաքույրի հետ անախորժություն պատահեց։ Նա մկանը թակարդից բաց թողեց։ Այդ մուկը նախորդ գիշերը քաղցրավենիք եր կերել։ Ավելի առաջ, ուրբաթից լույս շաբաթ գիշերը նա շուռ եր տվել մեխակների բաժակը։ Բաժակը ջարդվել եր, իսկ մեխակը, չգիտես ինչու ստացել եր վալերյան կաթիլների հոտ։

Տագնապալի գիշերը մուկը բռնվել եր։

Վաղ առավոտյան վեր կենալով, Հանիմեդ մորաքույրը թակարդը վեր բարձրացրեց։ Մուկը նստել եր չափազանց անտարբեր տեսքով, կարծես նա առաջին անգամը չե, վոր բանտարկվում եր։ Նա ձևացնում եր։

— Մյուս անգամ քաղցրավենիք չես ուտի, յեթե դա քեզ չի պատկանում,— ասաց Հանիմեդ մորաքույրը, թակարդը դնելով մի աչքի ընկնող տեղ։

Հագնվելով, Հանիմեդ մորաքույրը գնաց արհեստանոց, դոկտոր Գասպարի մոտ։ Նա ուզում եր իր ուրախությունը բաժանել նրա հետ։ Նախորդ առավոտյան դոկտոր Գասպարը նրան ցավակցություն եր հայտնել քաղցրավենիքի վոչնչացման առթիվ։

— Մուկը քաղցրավենիք սիրում է, վորովհետև նրա մեջ շատ թթվածին կա,— ասել եր նա։ Այդ մխիթարել եր Հանիմեդ մորաքույրին։

— Մուկը սիրում է իմ թթվածինս, տեսնենք թակարդս ել սիրում է թե չե։

Հանիմեդ մորաքույրը մոտեցավ արհեստանոցի դռանը։ Նա ձեռքում բռնել եր թակարդը։

Վաղ առավոտ եր։ Կանաչը փայլում եր բաց լուսամուտից։

Քամին, վոր այդ առավոտյան տարել եր ոդապարիկներ ծախողին, դեռ չեր սկսվել։

Դռան յետևում շարժումի ձայն լսվեց։

«Թշվառ,— մտածեց Հանիմեդ մորաքույրը։— Մի թե նա ամբողջ գիշերը չի քնել»։

Նա դուռը թակեց։

Դոկտորն ինչ վոր բան ասաց, բայց նա չլսեց։

Դուռը բացվեց։ Շեմքի վրա կանգնել եր դոկտոր Գասպարը։ Արհեստանոցից ինչ վոր հոտ եր գալիս, վոր նման եր այրված խցանի հոտի։ Անկյունում առկայծում եր հալոցքի կարմիր, հանգչող կրակը։

Ըստ յերևույթին, դոկտոր Գասպարը գիշերվա մեջ զբաղված եր ինչ վոր սովորական աշխատանքով։

— Բարի լույս, — ասաց ուրախ կերպով դոկտորը։

Հանիմեդ մորաքույրը թակարդը վեր բարձրացրեց։ Մուկը հոտհոտում էր, քիթը շարժելով։

— Յեռ մուկ եմ բռնել։

— Ո՞, — դոկտորը շատ դոհ էր։ — Ապա ցույց տվեք։

Հանիմեդ մորաքույրը քայլեց դեպի լուսամուտը։

— Ահա նա։

Մորաքույրը թակարդը մեկնեց։ Յեվ հանկարծ նա տեսավ նեգրին։ Լուսամուտի մոտ, «զգույշ» մակագրությամբ մի արկղի վրա նստել էր գեղեցիկ նեգրը։

Նեգրը մերկ էր։

Նեգրը հագել էր կարմիր, կարճ վարտիկ։

Նեգրը սև էր, մանիշակագույն, սրճագույն, փայլուն։

Նեգրը ծխամորճ էր ծխում։

Հանիմեդ մորաքույրն այնպես ուժեղ ասաց «ախ», վոր հազիվ յերկու մասի չկիսվեց։ Նա հոլի նման ֆռռաց ու թևերը տարածեց, ինչպես բանջարանոցի խրտվիլակ։ Դրա հետ միասին նա արագ ինչ վոր անհարմար շարժում, թակարդի փականքը զնդաց, բացվեց և մուկն ընկավ, չգիտես թե ուր անհետանալով։

Այդքան մեծ էր Հանիմեդ մորաքույրի սարսափը։

Նեգրը բարձր ծիծաղեց, մեկնելով յերկար, մերկ վոտքերը կարմիր կիսակոշիկներով, վոր նման էին կարմիր պղպեղի հսկայական պատիճների։

Ծխամորճը նրա ատամների միջև թռչկոտեց, ինչպես ճյուղը փոթորկի պոռթկման ժամանակ։ Իսկ դոկտորի մոտ, կայծկլտելով թռչկոտում էին ակնոցները։ Նա ևս ծիծաղում էր։

Հանիմեդ մորաքույրը սենյակից դուրս նետվեց մի խոկական մրրիկի արագությամբ։

— Մուկը, — աղաղակեց նա։ — Մուկը, քաղցրավենիքը, նեգրը։

Դոկտոր Գասպարը հասավ նրա յետևից։

— Հանիմեդ մորաքույր, — հանգստացրեց նա նրան։ — Դուք իզուր եք հուզվում։ Յես մոռացել եյի ձեզ նախազգուշացնել իմ նոր փորձի մասին։ Բայց դուք այդ բանը կարող եյիք սպասել։ Ձե՞զ վոր յես գիտնական եմ, յես զանազան գիտությունների դոկտոր եմ, յես զանազան պիտելիքների վարպետ եմ։ Յես կատարում եմ ամեն տեսակ փորձեր։ Ինձ մոտ, արհեստանոցում կարելի յե տեսնել վոչ միայն նեգր, այլև փիղ։ Հանիմեդ մորաքույր... Հանիմեդ մորաքույր... Նեգրը՝ դա մի բան ե, իսկ ձվածեղը՝ մի այլ բան... Մենք սպասում ենք նախաճաշի։ Իմ նեգրս սիրում ե շատ ձվածեղ...

— Մուկը սիրում ե թթվածին, — սարսափահար շշընջաց Հանիմեդ մորաքույրը, — իսկ նեգրը սիրում ե ձվածեղ...

— Ճիշտ այդպես։ Ձվածեղը հիմա, իսկ մուկը՝ գիշերը։ Գիշերով նա կրոնվի, Հանիմեդ մորաքույր։ Նա այլևս վոչինչ չունի անելու աղատության մեջ։ Քաղցրավենիքը կերված ե միանգամ ընդմիշտ։

Հանիմեդ մորաքույրը լաց եր լինում, աղի հետ միասին արցունքներն ել ավելացնելով ձվածեղի վրա։ Արցունքները այնքան դառն եյին, վոր նուշնիկ փոխարինում եյին պղպեղին։

— Լավ ե, վոր պղպեղը շատ ե։ Շատ համեղ ե, — գովում եր նեգրը, ձվածեղը լափելով։

Հանիմեդ մորաքույրն ընդունեց վալերյան կաթիլներ, վորոնք այժմ, իրենց հերթին, մեխակի հոտ ունեին։ Հավանականաբար՝ արցունքից։

Հետո նա լուսամուտից տեսավ, ինչպես դոկտոր Գասպարն անցավ փողոցով։ Ամեն ինչ կարգին եր։ — նոր շարֆ, նոր ցուպ, նոր (թեև հին) կոշիկներ, գեղեցիկ ու վողջ կրունկներով։

Բայց նրա կողքով գնում եր նեգրը։

Հանիմեդ մորաքույրն աչքերը կկոցեց ու նստեց հատակի վրա։ Ավելի ճիշտ՝ վոչ թե հատակի, այլ կատվի վրա։ Կատուն սարսափից յերգեց։ Հանիմեդ մորաքույրը, համբերությունից յելած, ծեծեց կատվին։ — նախ և առաջ նրա համար, վոր նա պտտվում է մարդու վոտքերի տակ և յերկրորդ, նրա համար, վոր նա չկարողացավ ժամանակին բռնել մկանը։

Իսկ մուկը, դոկտոր Գասպարի արհեստանոցից անցնելով Հանիմեդ մորաքույրի պահարանը, ուտում եր նշի կլեպներ, քնքշորեն հիշելով քաղցրավենիքը։ Մուկը սիրում է թթվածին և չի վախենում նեգրից։

Դոկտոր Գասպար Արներին ապրում եր Սավերի փողոցում։ Շրջվելով այդ փողոցից դեպի ձախ, դուք կընկնեք մի նրբանցք, վոր կրում է Այրի Լիզավետտա անունը, իսկ այնտեղից, կտրելով այն փողոցը, վորը հռչակված է կայծակնահար յեղած իր կաղնի ծառով, ևս հինգ րոպեի ճանապարհ անցնելով կարելի յե հայտնվել Տանչորսյերորդ Շուկայում։

Դոկտոր Գասպարն ու նեգրն ուղեվորվեցին այդ կողմ։ Արդեն բարձրանում եր քամին։ Այլանդակված կաղնի ծառը ճռնչում եր, ինչպես ճոճ։ Աֆիշաներ փակցնողը վոչ մի

կերպ չեր կարող փակցնել պատին այն թերթը, վորը պատրաստել եր փակցնելու։ Հեռվից թվում եր, թե նա սպիտակ անձեռոցիկով իր յերեսն է մաքրում։

Վերջապես նրան հաջողվեց աֆիշը շտմփացնել ցանկապատին։

Դոկտոր Գասպարը կարդաց։

«Քաղաքացիներ, քաղաքացիներ, քաղաքացիներ։

Այսոր Յերեք հաստլիկների կառավարությունը ժողովրդի համար տոնախմբություն է պատրաստում։ Շտապեցեք դեպի Տասնչորսյերորդ Շուկա։ Շտապեցեք։ Այնտեղ կլինեն տեսարաններ, զվարճություններ, ներկայացումներ։ Շտապեցեք»։

— Ահա, — ասաց դոկտոր Գասպարը։ — Ամեն ինչ պարզ է։ Այսոր դատի հրապարակում լինելու յե խռովարարների գլխատումը։ Յերեք հաստլիկների դահիճները պիտի կտրեն նրանց գլուխները, ովքեր բարձրացել եյին հարուստների և վորկրամոլների իշխանության դեմ։ Յերեք հաստլիկները ցանկանում են խաբել ժողովրդին։ Նրանք վախենում են, վոր ժողովուրդը հավաքվելով դատի հրապարակի վրա, կփշրի կառափնատները, կսպանի դահիճներին և կազատի մահվան դատապարտված իր յեղբայրներին։ Դրա համար էլ նրանք զվարճություններ են սարքում ժողովրդի համար։ Նրանք ցանկանում են հեռացնել նրա ուշադրությունն այսորվա գլխատությունից։

Դոկտոր Գասպարն ու նրա սև ուղեկիցը յեկան շուկայի հրապարակը։ Բալագանների մոտ խռնվել եր ժողովուրդը։ Վոչ մի ֆրանտի, վոչ մի կնոջ՝ վոր հագած լիներ վոսկի ձկան կամ խաղողի դույնի հագուստ, վոչ մի անվանի ծերունու՝ վոր նստած լիներ վոսկենկար պատգամի

բակի վրա, վոչ մի վաճառականի՝ վոր հսկայական կաշվե դրամապանակ ունենար կողքից կախ արած,—դրանցից վոչ մեկին չտեսավ դոկտոր Գասպարը հավաքվածների մեջ։

Այստեղ եյին ծայրամասերի աղքատ բնակիչները,—արհեստավորներ, վարպետներ, հաճարե թխված ծախողներ, որավարձով աշխատողներ, պառավներ, աղքատներ, բեռնակիրներ, խեղանդամներ։ Գորշ, հին, պատառոտված հագուստները յերբեմն զարդարված եյին կամ կանաչ դարսվածքով, կամ խայտաբղետ թիկնոցով, կամ բազմագույն ժապավեններով։

Քամին ուռցնում եր պառավի սպիտակած մազերը, վոր նման եյին թաղիքի, աչք եր այրում, պոկում եր աղքատների սրճագույն ցնցոտիները։

Բոլորի դեմքերը կնճռոտված եյին։ Բոլորն ել լավ բանի չեյին սպասում։

— Դատի հրապարակի վրա գլխատություն կա,—ասում եյին մարդիկ։—Այնտեղ պիտի ընկնեն մեր ընկերների գլուխները, իսկ այստեղ պետք է ծամածռվեն խեղկատակները, վորոնց Յերեք հաստլիկները շատ վոսկի յեն վճարել։

— Գնանք դատի հրապարակը,—լսվեցին կանչեր։

— Մենք գենք չունենք։ Մենք չունենք ատրճանակներ ու սուսերներ։ Իսկ դատի հրապարակը շրջապատված է գվարդիականների յեռակի ողակով։

— Զինվորները դեռևս ծառայում են նրանց։ Նրանք մեզ վրա կրակեցին։ Վոչինչ։ Այսոր չե՝ վաղը նրանք մեզ հետ միասին կգնան իրենց պետերի դեմ։

— Արդեն այսոր գիշեր Աստղի հրապարակում գվարդիականը գնդակահարեց իր սպային։ Դրանով նա փրկեց մարդիկ Թիբուլի կյանքը։

— Իսկ ո՞ւր է Թիբուլը։ Նրան հաջողվե՞ց փախչել։

— Հայտնի չէ։ Վողջ գիշերն ու արշալույսին գվարդիականները հրդեհում էին բանվորական թաղամասերը։ Նրանք ցանկանում էին գտնել նրան։

Դոկտոր Գասպարն ու նեգրը մոտեցան բալագաններին։ Ներկայացումը դեռ չեր սկսվել։

Վարագույրների, միջնորմների յետևից լսվում էին ձայներ, զնգզնգում էին բոժոժներ, յերգում էին ֆլեյտաներ, ինչ վոր բան ֆշշում եր, շրշում, մռնչում։ Այնտեղ դերասանները պատրաստվում էին ներկայացման։

Վարագույրները յետ շարժվեցին և մի ռեխ յերևաց։ Նա խպանացի յեր, ատրճանակի հիանալի նշանաձիգ։ Նրա բեխերը չռվել էին, իսկ մի աչքը փռռում եր։

— Ա՜, — ասաց նա, տեսնելով նեգրին։ — Դու նույնպե՞ս մասնակցում ես ներկայացմանը։ Քեզ ինչքան են վճարել։

Նեգրը լռում եր։

— Յես ստացա տասը վոսկեդրամ, — հպարտացավ խպանացին։ Նա նեգրին դերասանի տեղ եր դնում։

— Ապա, յեկ այստեղ, — ասաց նա շշուկով, խորհրդավոր արտահայտությունը դեմքին։

Նեգրը բարձրացավ վարագույրների մոտ։ Խպանացին նրան մի գաղտնիք պատմեց։ Պարզվեց, վոր Յերեք հաստալիկները հարյուր դերասաններ էին վարձել, վորպեսզի նրանք այսոր ներկայացումներ տային շուկաներում և իրենց խաղով ամեն կերպ գովաբանեին հարուստների ու վորկրամոլների իշխանությունը, և, դրա հետ միասին, վարկաբեկեին խռովարարներին, գինագործ Պրոսպերոյին և մարդիկ Թիբուլին։

— Նրանք հավաքել են մի ամբողջ խումբ։ — ձեռնածուներ, սանձահարողներ, խեղկատակներ, հեծյալուհիներ, ատամոքսախոսներ, պարողներ։։։ Բոլորին փող տրվեց։։։

— Մի՞թե բոլոր դերասանները համաձայնվեցին գովաբանել Ձերեք. հասալիկներին, — հարցրեց դոկտոր Գասպարը։

Իսպանացին ֆշշաց։

— Սսս։։։ — նա մատը մոտեցրեց շրթունքներին։ — Այդ մասին չի կարելի բարձր խոսել։ Շատերը հրաժարվեցին։ Նրանց ձերբակալեցին։

Նեգրն իր հոգու խորքում թքեց։

Այդ բոպեյին նվագեց յերաժշտախումբը։ Մի քանի բալագաններում սկսվեց ներկայացումը։ Ամբոխի միջով խլրտում անցավ։

— Քաղաքացիներ, — աքլորի ձայնով բղավեց խեղկատակը տախտակե բարձրության վրայից։ — Քաղաքացիներ, թույլ տվեք ձեզ ողջունել։։։

Նա կանգ առավ, սպասելով, որ լռություն հաստատվի։ Նրա դեմքից այլուր եր շաղ գալիս։։։

— Քաղաքացիներ, թույլ տվեք ձեզ ողջունել հեռևյալ ուրախ պատահարով։ Այսոր մեր սիրելի, վարդագույն, չաղլիկ Ձերեք հասալիկների դահիճը կկտրի ատոր խռովարարների գլուխները։։։

Նա խոսքը չվերջացրեց։ Վարպետը դեպի նա նետեց իր վերջին թխվածքը, որը փակեց նրա բերանը։

— Ըմմմմմմմմմ։։։ — խեղկատակը բառաչում եր, բայց վոչինչ չեր ոգնում։ Վատ յեփած, կիսահում խմորը փակել եր նրա բերանը։ Նա ձեռքերն եր շարժում, դեմքը ծամածռում։

— Այդպես, ճիշտ ե, — բղավում եյին ամբոխի միջից։։։

Խեղկատակը ծլկվեց ցանկապատի յետևում։

— Սրիկա, նա ծախվել ե Ձերեք հասալիկներին։ Փողի համար նա պարսավում ե նրանց, ովքեր դեպի մահն են գնացել հանուն մեր ազատության։

Նվագախումբն ավելի բարձր նվագեց։ Նրանց միացան ևս մի քանի նվագախմբեր։ — ինքը սրինգ, յերեք ֆանֆար, յերեք թուրքական թմբուկ և մի ջութակ, վորի հընչյուններն ատամնացավ եյին առաջացնում։

Բալագանների տերերն աշխատում եյին այդ նվագով խլացնել ամբոխի աղմուկը։

— Կարելի յե ասել, վոր մեր դերասանները վախենում են այդ թխվածքներից, ասաց նրանցից մեկը։ — Պետք ե այնպես ձևացնել, թե վոչինչ չի պատահել։

— Համեցեք, համեցեք, ներկայացումն սկսվում ե։։։

Մյուս բալագանը կոչվում եր «Տրոյանական նժույգ»։

Վարագույրի յետևից դուրս յեկավ վարիչը։ Նրա գլխին դրված եր մի չափազանց բարձր գլխարկ կանաչ մահուդից, կրծքի վրա պղնձե կլոր կոճակներ, այտերի վրա՝ ուշադիր կերպով նկարած գեղեցիկ խալեր։

— Լռություն, — ասաց նա այնպես, կարծես գերմաներեն եր խոսում։ — Լռություն, մեր ներկայացումն արժե ձեր ուշադրությանը։

Վորոշ ուշադրություն ստեղծվեց։

— Այսորվա տոնի առթիվ մենք հրավիրել ենք ըմբիշ Լափիթուփին։

— Թա-թի-թու-թի, — կրկնեց ֆանֆարը։

Ճոճռակները պատկերում եյին ծափահարության նման մի բան։

— Ըմբիշ Լափիթուփը ձեզ ցույց կտա իր ուժի հրաշալիքները։։։

Նվագախումբը վորոտաց։ Վարագույրը բացվեց։ Տախտակամածի վրա ցատկեց ըմբիշ Լափիթուփը։ Իրոք վոր, այդ վիթխարին իր վարդագույն մարզազգեստով՝ թվում եր չափազանց ուժեղ։

Նա փնչաց և գլուխը յեզի պես թեքեց։ Նրա մկանները շարժվում եյին մորթի տակ, ինչպես ճագարներ, վորոնց կուլ ե տվել վիշապ ոձը։

Ծառայողները բերեցին կշռաքարեր և դցեցին տախտակամածի վրա։ Տախտակները հազիվ չդարդվեցին։ Փոշին ու թեփը այան պես վերև բարձրացան։ Դղրդը տարածվեց ամբողջ շուկայով։

Ըմբիշն սկսեց ցույց տալ իր արվեստը։ Նա յուրաքանչյուր ձեռքում բռնեց մի կշռաքար, նետեց կշռաքարերն իբրև խաղագնդակներ, բռնեց, ապա վողջ թափով խփեց մեկը մյուսին։։։ Թռան կայծեր։

— Ահա, — ասաց նա։ — Ցերեք հասալիկներն այսպես կփշրեն գինագործ Պրոսպերոյի և մարգիկ Թիբուլի ճակատները։

Այդ ըմբիշն ևս, կաշառված եր Ցերեք հասալիկների վոսկով։

— Հա՜-հա՜-հա՜, — քրքջաց նա, ուրախանալով, իր կատակի վրա։ Նա գիտեր, վոր վոչ վոք չի համարձակվի իր վրա թիվածքներ նետել։ Բոլորը տեսնում եյին նրա ուժը։

Վերահաս լռության մեջ վորոշակի հնչեց նեգրի ձայնը։

Գլուխների մի վողջ բանջարանոց շուռ յեկավ դեպի նրա կողմը։

— Այդ ինչ ես խոսում, — հարցրեց նեգրը, վոտքն աստիճանի վրա դնելով։

— Ցես ասում եմ, վոր այսպես, ճակատ ճակատի, Ցերեք հասալիկները կփշրեն գինագործ Պրոսպերոյի և մարգիկ Թիբուլի գլուխները։

— Լռիր։

Նեգրը խոսում եր հանգիստ, խիստ և վոչ բարձրաձայն։

— Իսկ դու ով ես, սև պատկեր, — բարկացավ ըմբիշը։ Նա կշռաքարերը նետեց և ձեռքերը կանթեց մեջքին։

Նեգրը բարձրացավ տախտակամածի վրա։

— Դու շատ ուժեղ ես, բայց նույնքան ել ստոր ես։ Ո՞վ ե քեզ իրավունք տվել ծիծաղել ժողովրդի վրա։ Ցես քեզ գիտեմ։ Դու մուրճահարի տղա յես։ Քու քրոջն անվանում են Ելի։ Նա լվացարարուհի յե։ Նա լվանում ե հարուստների սպիտակեղենը։ Կարող ե պատահել, վոր գվարդիականները յերեկ նրան գնդակահարել են։ Իսկ դու՝ դավաճան ես։

Ըմբիշը զարմացած յետ գնաց։ Նեգրը, իսկապես վոր, ասում եր ճշմարտությունը։ Ըմբիշը վոչինչ չեր հասկանում։

— Դուրս կորիր, — բղավեց նեգրը։

Ըմբիշն ուշքը հավաքեց։ Նրա դեմքն արյունով լցվեց։ Նա սեղմեց բռունցքները։

— Դուք իրավունք չունեք ինձ հրամայելու, — դժվարությամբ ասաց նա։ — Ցես քեզ չգիտեմ։ Դու՝ դև ես։

— Դուրս կորիր։ Ցես կհաշվեմ մինչև յերեքը։ Մեկ։

Ամբոխը քարացավ։ Նեգրը մի գլխով ցածր եր Լափիթուփից և նրանից յերեք անգամ բարակ։ Այնուամենայնիվ

նիվ վոչ վոք չեր կասկածում, վոր կռվելու դեպքում, նեգրը կհաղթի։ Այնքան վճռական, խիստ և վստահ եր նրա կերպարանքը։

— Յերկու։

Ըմբիշը գլուխը ներս քաշեց։

— Սատանա, — շշնջաց նա։

— Յերեք։

Ըմբիշն անհետացավ։ Շատերն աչքերը կկոցեցին, սպասելով սարսափելի հարվածի, բայց յերբ բաց արեցին, ըմբիշն այլևս չկար։ Նա վայրկյանապես անհետացել եր միջնորմի յետևում։

— Ահա ժողովուրդն այսպես կվռնդի Յերեք հասալիկներին, — ուրախ ասաց նեգրը, ձեռքերը բարձրացնելով։

Ամբոխը մոլեգնում եր հիացմունքից։ Մարդիկ ծափ եյին զարկում և գլխարկները նետում եյին ոդի մեջ։

— Կեցցե ժողովուրդը։

— Բռավո, բռավո։

Միայն դոկտոր Գասպարն եր՝ անբավական կերպով գլուխը շարժում։։։ Ինչից եր նա դժգոհ՝ անհայտ է։

— Ո՞վ է սա։ Ո՞վ է սա։ Ո՞վ է այս նեգրը, — հետաքրքրվում եյին հանդիսատեսները։

— Սա նո՞ւյնպես դերասան է։

— Մենք յերբեք նրան չենք տեսել։

— Ո՞վ ես դու։

— Ինչո՞ւ դու վեր կացար մեզ պաշտպանելու։

— Թույլ տվեք, թույլ տվեք։

Ինչ վոր ցնցոտիավոր, խցկվելով անցավ ամբոխի միջից։ Դա նույն մուրացկանն եր, վորը նախորդ յերեկոյան

խոսակցել եր ծաղկավաճառուհիների և կառապանների հետ։ Դոկտոր Գասպարը նրան ճանաչեց։

— Թույլ տվեք, — հուզվեց մուրացկանը։ — Մի՞թե դուք չեք տեսնում, վոր մեզ խաբում են։ Այս նեգրը նույնպիսի դերասան է, ինչպես և ըմբիշ Լափիթուփը։ Բոլորը մի վոհմակ են։ Նա ևս, փող է ստացել Յերեք հասալիկներից։

Նեգրը բռունցքները սեղմեց։

Ամբոխի հիացմունքը փոխվեց զայրույթի։

— Ի հարկե։ Մի սրիկան վռնդեց մյուսին։

— Նա վախենում եր, թե մենք կծեծենք նրա ընկերոջը և դրա համար ել այդ կատակը խաղաց։

— Դուրս։

— Սրիկա։

— Դավաճան։

Դոկտոր Գասպարն ուզում եր ինչվոր բան ասել, ամբոխին յետ պահել, բայց արդեն ուշ եր։ Տասներկու մարդ, վազ տալով դեպի տախտակամածը, նեգրին շրջապատեցին։

— Ծեծեք նրան, — ղժժում եր մի պառավ։

Նեգրը ձեռքերը մեկնեց։ Նա հանգիստ եր։

— Կանգ առեք։

Նրա ձայնը ծածկեց կանչերին, աղմուկին ու սուլոցներին։ Դարձավ լուռ և լռության մեջ, հանգիստ ու պարզ հնչեցին նեգրի բառերը։

— Յես մարդիկ Թիբուլն եմ։

Տեղի ունեցավ խառնաշփոթություն։

Հարձակվողների ոդակը ցրվեց։

— Ախ, — հառաչեց ամբոխը։

Հարյուրավոր մարդիկ ցնցվեցին ու քարացան։

Յեվ միայն ինչ վոր մեկը ցրված հարցրեց։

— Իսկ ինչո՞ւ դու սև ես։

— Այդ մասին հարցրեք դոկտոր Գասպար Արներին։։։

Յեվ ժպտալով, նեգրը ցույց տվեց դոկտորին։

— Ի՞հարկե դա նա յե։

— Թիբուլ։

— Ուռա։ Թիբուլը վողջ ե։ Թիբուլը կենդանի յե։ Թիբուլը մեզ հետ ե։

— Կեցցե։։։

Բայց կանչն ընդհատվեց։ Տեղի ունեցավ մի չնախատեսնված և անհասկանալի բան։ Յեռևի շարքերը խառնոտվեցին։ Մարդիկ ցրվեցին զանազան կողմեր։

— Լռություն։ Լռություն։

— Փախիր, Թիբուլ։ Ազատվիր։

Հրապարակի վրա յերևացին յերեք ձիավորներ ու կառք։

Դա պալատական գվարդիայի կապիտան գրաֆ Բոնավենտուրան եր, յերկու գվարդիականների ուղեկցությամբ։ Կառքով գնում եր պալատական պաշտոնյան, թագաժանգ Տուլթիի կոտրված տիկնիկի հետ միասին։ Տիկնիկը վշտահարհենել եր նրա ուսին իր կոտրված խոպոպներով հիանալի գլուխը։

Նրանք փնտրում եյին դոկտոր Գասպարին։

— Գվարդիականները, — բղավեց ինչվոր մեկը։ Մի քանի մարդիկ նետվեցին միջնորմից այն կողմը։

Սև կառքը կանգ առավ։ Ձիերը գլուխները շարժեցին։ Ձիասարքը զրնգաց և կայծկլատաց։

Քամին քրքրում եր գլխարկների կապույտ փետուրները։ Ձիավորները կառքը շրջապատեցին։

Կապիտան Բոնավենտուրան սարսափելի ձայն ուներ։ Յեթե ջուրակն ատամի ցավ եր առաջացնում, ապա այդ ձայնից ստացվում եր ջարդված ատամի տպավորություն։

Նա բարձրացավ ասպանդակների վրա և հարցրեց։

— Վո՞րտեղ ե դոկտոր Գասպար Արներիի տունը։

Նա սանձը ձգեց։ Նրա ձեռքերի վրա կային կաշվե կոպիտ ձեռնոցներ, լայն թևնոցներով։

Պառավը, վորի վրա այդ հարցումն ընկավ իբրև գնդաձև կայծակ, վախեցած շարժեց ձեռքն անորոշ ուղղությամբ։

Վո՞րտեղ, — կրկնեց կապիտանը։ Այժմ նրա ձայնն արդեն հնչում եր այնպես, վոր թվում եր, թե փշրված ե վոչ թե մի ատամ, այլ ամբողջ ծնոտը։

— Յես այստեղ եմ։ Ո՞վ ե ինձ հարցնում։

Մարդիկ ճանապարհ բաց արեցին։ Դոկտոր Գասպարը, կանոնավոր քայլերով, մոտեցավ կառքին։

— Դուք եք դոկտոր Գասպար Արներին։

— Յես եմ դոկտոր Գասպար Արներին։

Կառքի դռնակը բացվեց։

— Անմիջապես նստեցեք կառք։ Ձեզ կտանեն ձեր տունը և այնտեղ դուք կիմանաք, թե ինչումն ե բանը։

Կառքի ծառան իջավ կառքի աստիճանից և ոգնեց դոկտորին ներս մտնել։ Դռնակը փակվեց։

Յերթն առաջ շարժվեց, պայթեցնելով չոր հողը։ Մի բոպե հետո բոլորը ծածկվեցին անկյունի յետևում։

Վոչ կապիտան Բոնավենտուրան, վոչ գվարդիականները, ամբոխի յետևում չտեսան մարդիկ Թիբուլին։ Կարելի յե ասել, վոր տեսնելով նեգրին, նրանք չեյին էլ ճանաչի նրա մեջ այն մարդուն, վորի յետևից վորսի եյին յելել նախորդ գիշերը։

Թվում էր, թե վտանգն անցել է։ Բայց հանկարծ լսվեց մի նենգ ֆշշոց։

Ըմբիշ Լափիթուփը գլուխը դուրս հանեց միջնորմի յետևից, որ ծածկված էր մոմլաթով և շշնջաց։

— Սպասիր։։։ Սպասիր, բարեկամս։

Նա սպառնաց Թիբուլին վիթխարի բռունցքով։

— Սպասիր։ Ահա յես հիմա կհասնեմ գվարդիականների յետևից և կասեմ, որ դու այստեղ ես։

Այս խոսքերով նա սողաց միջնորմի վրայով։ Միջնորմը չդիմացավ վարդագույն ճարպագնդին։ Բղավելով բադային ձայնով, միջնորմը ջարդվեց։

Ըմբիշը վոտքը դուրս քաշեց գոյացած ճեղքից և հրելով մի խումբ մարդկանց, սկսեց վազել կառքի յետևից։

— Կանգնեցեք, — բղավում էր նա վազելիս, շարժելով իր մերկ, կլոր թևերը։ — Կանգնեցեք, մարդիկ Թիբուլը գտնվել է, մարդիկ Թիբուլն այստեղ է։ Նա իմ ձեռքումն է։

Գործն ստանում էր սպառնալի կերպարանք։ Իսկ այդտեղ, դեռ մեջտեղ խառնվեց ֆռռացող աչքերով ու գոտկատեղում խրած ատրճանակով իսպանացին։ Մյուս ատրճանակը նա բռնել էր իր ձեռքում։ Իսպանացին աղմուկ բարձրացրեց։ Նա թռչկոտում էր տախտակամածի վրա և կանչում։

— Քաղաքացիներ, պետք է Թիբուլին հանձնել գվարդիականներին, ապա թե վոչ՝ վատ կլինի։ Քաղաքացիներ, չպետք է գժտվել Յերեք հաստլիկների հետ։

Նրան միացավ այն բալագանի դիրեկտորը, վորտեղ այնքան անհաջող յելույթ ունեցավ Ըմբիշ Լափիթուփը։

— Նա վիժեցրեց իմ ներկայացումը։ Նա վռնդեց Ըմբիշ Լափիթուփին։ Յես նրա համար պատասխանատու չեմ լինի Յերեք հաստլիկների առջև։

Ամբոխը պատնեշեց Թիբուլին։

Ըմբիշը չկարողացավ հասնել գվարդիականներին։ Նա նորից հայտնվեց հրապարակի վրա։ Նա իր ամբողջ թափով սլացավ ուղիղ Թիբուլի վրա։ Իսպանացին ցած թռավ տախտակամածից և դուրս քաշեց յերկրորդ ատրճանակը։ Բալագանի դիրեկտորը չգիտես վորտեղից գտավ մի կլոր, թղթե շրջանակ։ Վարժեցրած շները կրկեսում ցատկում են այդպիսի շրջանակների միջով։ Նա ճոճեց այդ շրջանակը և թռչելով տախտակամածից, քարշ յեկավ իսպանացու յետևից։

Իսպանացին ատրճանակը պատրաստեց կրակելու։

Թիբուլը տեսավ, վոր պետք է փախչել։ Ամբոխը ճանապարհ տվեց։ Հետևյալ րոպեյին, Թիբուլն այլևս չկար հրապարակի վրա։ Ցատկելով ցանկապատի վրայից, նա հայտնվեց բանջարանոցում։ Նա ճեղքից նայեց։ Ըմբիշը, իսպանացին ու դիրեկտորը վազ եյին տալիս դեպի բանջարանոցը։ Տեսարանը չափազանց ծիծաղելի յեր։ Թիբուլը ծիծաղեց։ Ըմբիշը վազում էր ինչպես կատաղած փիղ, իսպանացին նմանվում էր առնետի, վորը ցատկոտում է յետևի թաթերի վրա, իսկ դիրեկտորը կազում էր, ինչպես վիրավոր ագռավ։

— Մենք քեզ կենդանի կբռնենք, — բղավում եյին նրանք։

— Հանձնվիր։

Իսպանացին չխչխկացրեց ատրճանակն ու ատամները։ Դիրեկտորը ցնցեց թղթե շրջանակը։

Թիբուլն սպասում էր հարձակմանը։ Նա կանգնել էր փուխը սև հողի վրա։ Նրա շուրջն ածուներ եյին։ Այդտեղ աճում էր կաղամբ, ճակընդեղ, ինչվոր կանաչ բեխեր, ցցվել եյին ցողունները, փռվել եյին լայն տերևներ։

Թվում էր, թե վտանգն անցել է։ Բայց հանկարծ լսվեց մի նենգ ֆշշոց։

Ամբիշ Լափիթուփը գլուխը դուրս հանեց միջնորմի յետևից, վոր ծածկված էր մոմլաթով և շշնջաց։

— Սպասիր։։։ Սպասիր, բարեկամս։

Նա սպառնաց Թիբուլին վիթխարի բռունցքով։

— Սպասիր։ Ահա յես հիմա կհասնեմ գվարդիականների յետևից և կասեմ, վոր դու այստեղ ես։

Այս խոսքերով նա սողաց միջնորմի վրայով։ Միջնորմը չդիմացավ վարդագույն ճարպագնդին։ Բղավելով բարձրին ձայնով, միջնորմը ջարդվեց։

Ամբիշը վոտքը դուրս քաշեց գոյացած ճեղքից և հրելով մի խումբ մարդկանց, սկսեց վազել կառքի յետևից։

— Կանգնեցեք, — բղավում էր նա վազելիս, շարժելով իր մերկ, կլոր թևերը։ — Կանգնեցեք, մարդիկ Թիբուլը գտնվել է, մարդիկ Թիբուլն այստեղ է։ Նա իմ ձեռքումն է։

Գործն ստանում էր սպառնալի կերպարանք։ Իսկ այդտեղ, դեռ մեջտեղ խառնվեց ֆռռացող աչքերով ու գոտկատեղում խրած ատրճանակով իսպանացին։ Մյուս ատրճանակը նա բռնել էր իր ձեռքում։ Իսպանացին աղմուկ բարձրացրեց։ Նա թռչկոտում էր տախտակամածի վրա և կանչում։

— Քաղաքացիներ, պետք է Թիբուլին հանձնել գվարդիականներին, ապա թե վոչ՝ վատ կլինի։ Քաղաքացիներ, չպետք է գժտվել Յերեք հաստլիկների հետ։

Նրան միացավ այն բալագանի դիրեկտորը, վորտեղ այնքան անհաջող յելույթ ունեցավ ամբիշ Լափիթուփը։

— Նա վիժեցրեց իմ ներկայացումը։ Նա վռնդեց ամբիշ Լափիթուփին։ Յես նրա համար պատասխանատու չեմ լինի Յերեք հաստլիկների առջև։

Ամբոխը պատնեշեց Թիբուլին։

Ամբիշը չկարողացավ հասնել գվարդիականներին։ Նա նորից հայտնվեց հրապարակի վրա։ Նա իր ամբողջ թափով սլացավ ուղիղ Թիբուլի վրա։ Իսպանացին ցած թռավ տախտակամածից և դուրս քաշեց յերկրորդ ատրճանակը։ Բալագանի դիրեկտորը չդիտես վորտեղից գտավ մի կլոր, թղթե շրջանակ։ Վարժեցրած շները կրկեսում ցատկում են այդպիսի շրջանակների միջով։ Նա ճոճեց այդ շրջանակը և թռչելով տախտակամածից, քարշ յեկավ իսպանացու յետևից։

Իսպանացին ատրճանակը պատրաստեց կրակելու։

Թիբուլը տեսավ, վոր պետք է փախչել։ Ամբոխը ճանապարհ տվեց։ Հետևյալ րոպեյին, Թիբուլն այլևս չկար հրապարակի վրա։ Ցատկելով ցանկապատի վրայից, նա հայտնվեց բանջարանոցում։ Նա ճեղքից նայեց։ Ամբիշը, իսպանացին ու դիրեկտորը վազ եյին տալիս դեպի բանջարանոցը։ Տեսարանը չափազանց ծիծաղելի յեր։ Թիբուլը ծիծաղեց։ Ամբիշը վազում էր ինչպես կատաղած փիղ, իսպանացին նմանվում էր առնետի, վորը ցատկոտում է յետևի թաթերի վրա, իսկ դիրեկտորը կաղում էր, ինչպես վիրավոր ագռավ։

— Մենք քեզ կենդանի կբռնենք, — բղավում եյին նրանք։

— Հանձնվիր։

Իսպանացին չխչխկացրեց ատրճանակն ու ատամները։ Դիրեկտորը ցնցեց թղթե շրջանակը։

Թիբուլն սպասում էր հարձակմանը։ Նա կանգնել էր փուխր սև հողի վրա։ Նրա շուրջն ածուներ եյին։ Այդտեղ աճում էր կաղամբ, ճակնդեղ, ինչվոր կանաչ բեխեր, ցցվել եյին ցողունները, փռվել եյին լայն տերևներ։

Ամեն ինչ շարժվում եր քամուց։ Պայծառ փայլում եր կապույտ, մաքուր յերկինքը։

Ճակատամարտն սկսվեց։

Վողջ յեռյակը մոտեցավ ցանկապատին։

— Դու այստեղ ես, — հարցրեց ըմբիշը։

Վոչ վոք չպատասխանեց։

Այդ ժամանակ, խպանացին ասաց։

— Հանձնվիր։ Իմ յուրաքանչյուր ձեռքումս մի ատրճանակ կա։ Ատրճանակներս ամենալավ տեսակի յեն։ — «Սրիկա և վորդի»։ Յես՝ յերկրի ամենալավ նշանաձիգն եմ, հասկանում ես։

Թիբուլն աչքի չեր ընկնում ատրճանակային նշանաձգության արվեստով։ Նա նույնիսկ չուներ ատրճանակ, բայց նրա ձեռքի տակ, կամ ավելի ճիշտ՝ վոտքի տակ, կային չափազանց շատ կաղամբի գլուխներ։ Նա կռացավ, քաղեց մեկը, կլոր ու ծանրակշիռ, և շպրտեց ցանկապատից այն կողմ։ Կաղամբի գլուխը դիպավ դիրեկտորի փորին։ Հետո թռավ յերկրորդը, յերրորդը։ Նրանք պայթում եյին ռումբից վոչ վատ։

Թշնամիները շփոթվեցին։

Թիբուլը կռացավ չորրորդ կաղամբի յետևից։ Նա բռնեց նրա կլոր այտերից, ճիգ գործադրեց վորպեսզի պոկի, բայց, — ավաղ, — կաղամբի գլուխը չեր պոկվում։ Դա դեռ բավական չեր, նա սկսեց խոսել մարդկային ձայնով։

— Դա վոչ թե կաղամբի գլուխ ե, այլ իմ գլուխն ե։ Յես մանկական ոդապարիկներ ծախող եմ։ Յես փախա Յերեք հասալիկների պալատից։ Յեվ ընկա ատրյերկրյա անցքի մեջ։ Նրա սկիզբը կաթսայի մեջ ե, իսկ վերջը՝ այստեղ։ Նա ձգվում ե գետնի տակ յերկար աղիքի պես։։։

Ամեն ինչ շարժվում էր քամուց։ Պայծառ փայլում էր կապույտ, մաքուր յերկինքը։

Ճակատամարտն սկսվեց։

Վողջ յեռյակը մոտեցավ ցանկապատին։

— Դու այստեղ ես, — հարցրեց ըմբիշը։

Վոչ վոք չպատասխանեց։

Այդ ժամանակ, խոպանացին ասաց։

— Հանձնվիր։ Իմ յուրաքանչյուր ձեռքումս մի ատրճանակ կա։ Ատրճանակներս ամենալավ տեսակի յեն։ — «Սրիկա և վորդի»։ Յես՝ յերկրի ամենալավ նշանաձիգն եմ, հասկանում ես։

Թիբուլն աչքի չեր ընկնում ատրճանակային նշանաձգության արվեստով։ Նա նույնիսկ չուներ ատրճանակ, բայց նրա ձեռքի տակ, կամ ավելի ճիշտ՝ վոտքի տակ, կային չափազանց շատ կաղամբի գլուխներ։ Նա կռացավ, քաղեց մեկը, կլոր ու ծանրակշիռ, և շպրտեց ցանկապատից այն կողմ։ Կաղամբի գլուխը դիպավ դիրեկտորի փորին։ Հետո թռավ յերկրորդը, յերրորդը։ Նրանք պայթում էին ռումբից վոչ վատ։

Թշնամիները շփոթվեցին։

Թիբուլը կռացավ չորրորդ կաղամբի յետևից։ Նա բռնեց նրա կլոր այտերից, ճիգ գործադրեց վորպեսզի պոկի, բայց, — ավաղ, — կաղամբի գլուխը չեր պոկվում։ Դա դեռ բավական չեր, նա սկսեց խոսել մարդկային ձայնով։

— Դա վոչ թե կաղամբի գլուխ է, այլ իմ գլուխն է։ Յես մանկական ոդապարիկներ ծախող եմ։ Յես փախա Յերեք հասալիկների պալատից։ Յես ընկա ստորյերկրյա անցքի մեջ։ Նրա սկիզբը կաթսայի մեջ է, իսկ վերջը՝ այստեղ։ Նա ձգվում է գետնի տակ յերկար աղիքի պես...



Թիբուլն իր ականջներին չեր հավատում, կաղամբի գլուխն իրեն դնում եր մարդու գլխի տեղ։

Այդ ժամանակ նա կռացավ և նայեց հրաշքին։ Ստիպված եր աչքերին հավատալ։ Պարանի վրայով քայլել իմացող մարդու աչքերը չեն ստում։

Այն, ինչ վոր նա տեսավ, իսկապես վոր, վոչ մի կապ չուներ կաղամբի գլխի հետ։ Դա ոդապարիկներ ծախողի կլոր ռեխն եր։ Ինչպես միշտ, նա նման եր Թեյմանի, սրաքիթ Թեյմանի, մարգարիտ ծաղիկներով նախշված։

Ոդապարիկներ ծախողը նայում եր դեռնի միջից, իսկ փորած հողը, ցրվելով խոնավ կոշտերով, շրջապատել եր նրա վիզը սև ոձիքի պես։

— Կեցցես, — ասաց Թիբուլը։

Ծախողը նայում եր նրան կլոր աչքերով, վորոնց մեջ արտացոլվում եր հուզված յերկինքը։

— Յես խոհարարի աշկերտներին տվեցի իմ ոդապարիկներս և աշկերտներն ինձ բաց թողեցին... Ահա տես, ի դեպ, թռչում է այդ ոդապարիկներից մեկը...

Թիբուլը նայեց ու տեսավ բարձր, բարձր, կուրացնող կապույտում, փոքրիկ, նարնջագույն ոդապարիկը։

Դա մեկն եր այն ոդապարիկներից, վոր աշկերտները բաց եյին թողել։

Այն յերեքը, վոր կանգնել եյին ցանկապատի յետևում և մտորում եյին գրոհելու ծրագիրը, նույնպես տեսան ոդապարիկը։ Իսպանացին ամեն ինչի մասին մոռացավ։ Իսպանացին մի սաժեն վերև ցատկեց, փռռացրեց նաև յերկրորդ աչքը և դիրք բռնեց։ Նա մոլեռանդ նշանաձիգ եր։

— Նայեցեք, — բղավեց նա, — լենը զանգակատան բարձրության վրա թռչում է հիմար ոդապարիկը։ Գրաղ

եմ գալիս տասը վոսկեդրամի վրա, վոր կխփեմ նրան։ Չկա ավելի լավ նշանաձիգ, քան յես։

Վոչ վոք չեր ուզում նրա հետ գրազ բռնել, բայց դա չսառեցրեց իսպանացուն։ Ըմբիշն ու դիրեկտորը զայրացան։

— Ավանակ, — բղավեց ըմբիշը։ — Ավանակ։ Այժմ ժամանակը չե ոդապարիկ վորսալով զբաղվելու։ Ավանակ։ Մենք պետք ե բռնենք Թիբուլին։ Իզուր տեղը փամփուշտ մի ծախսիր։

Վոչինչ չեր ոգնում։ Ոդապարիկը չափազանց գրավիչ նշան եր թվում շեշտակի նշանաձիգի համար։ Իսպանացին սկսեց նշան բռնել, փակելով իր անխոնջ աչքը։ Ու մինչդեռ նա նշան եր բռնում, Թիբուլն ոդապարիկներ ծախողին դուրս քաշեց հողից։ Ի՞նչ տեսարան եր այդ։ Ինչ ասես, վոր չկար նրա հագուստի վրա։ Յեվ կրեմի ու ոշարակի մնացորդներ, և կակուղ հողի կտորներ և շաքարած մրգի քնքույշ աստղեր։

Այն տեղում, վորտեղից Թիբուլը դուրս քաշեց նրան, ինչպես խցանը շշից, մնաց մի սև անցք։ Հողը լցվում եր այդ անցքը և ստացվում եր այնպիսի հնչյուն, կարծես խոշոր անձրևը խփվում եր կառքի բարձրացած ծածկոցին։

Իսպանացին կրակեց։ Ի հարկե, նա չխփեց ոդապարիկին։ Ավաղ, նա խփեց իր դիրեկտորի կանաչ գլխարկին, վորը մի գանգակատնից բարձր եր։

Թիբուլը փախավ բանջարանոցից, դիմացի ցանկապատի վրայից ցատկելով։

Կանաչ գլխարկն ընկավ, ինքնայեռի խողովակի նման գլորվելով։ Իսպանացին սարսափելի ամոթահար յեղավ։

Լավագույն նշանաձիգի հռչակը խորտակվեց։ Այդ դեռ քիչ եր։ — Նա կորցրեց դիրեկտորի հարգանքը։

— Ախ, սրիկա — դիրեկտորն ինքն իրենից դուրս եր յեկել և զայրույթից շնչասպառ լինելով, թղթե շրջանակն ամբողջ թափով անցկացրեց խսպանացու գլուխը։ Շրջանակը ճայթելով պատռվեց և խսպանացու գլուխը հայտնվեց թղթի ատամնավոր ոձիքի մեջ։

Միայն Լափիթուփը մնաց առանց գործի։ Բայց կրակոցն իրար խառնեց շրջապատի շներին։ Նրանցից մեկն ինչվոր տեղից դուրս նետվեց ու սլացավ ըմբիշի վրա։

— Փրկվեցեք, ով կարող ե, — կարողացավ բղավել Լափիթուփը։ Վողջ յերեքն ել դիմեցին փախուստի։

Ոդապարիկներ ծախողը մնաց մենակ։ Նա բարձրացավ ցանկապատի վրա և շուրջը նայեց։ Յերեք բարեկամները գլորվեցին կանաչ զառիվայրով։ Լափիթուփը թռչկոտում եր մի վոտքի վրա, բռնելով իր հաստ, կծած վոտնոսկորը, դիրեկտորը բարձրացել եր ծառի վրա և բուի նման կախ եր ընկել, իսկ խսպանացին, որորելով գլուխը, վոր դուրս եր ցցվել թղթե շրջանակի միջից, կրակում եր շան վրա, յուրաքանչյուր անգամ խփելով բանջարանոցի խրտվիլակին։

Շունը կանգնել եր զառիվայրի վրա, և, ըստ յերևույթին, չեր ուզում նորից հարձակվել։

Լիովին բավարարվելով Լափիթուփի վոտնոսկորի համից, նա պտտացնում եր պոչը և լայն ժպտում եր, կախելով իր վարդագույն, փայլուն լեզուն։

ԳԼՈՒԽ 6

ՁՆԱԽԱՏԵՍՆՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔ

— Հարցրեք դոկտոր Գասպար Արներին, — պատասխանեց մարդիկ Թիբուլին այն հարցին, թե ինչու է նա նեգր դարձել։

Բայց առանց դոկտոր Գասպարին հարցնելու էլ, կարելի էր գուշակել պատճառը։ Հիշենք՝ — Թիբուլին հաջողվեց թաղնվել ճակատամարտի դաշտից։ Հիշենք՝ — գվարդիականները ուզում էին նրան վորսալ, նրանք հրդեհում էին բանվորական թաղամասերը, նրանք սկսեցին կրակել Ասաղի հրապարակում։ Թիբուլին ապաստարան գտավ դոկտոր Գասպարի տանը։ Բայց այստեղ ևս յուրաքանչյուր րոպե կարող էին նրան գտնել։ Վտանգն ակներև էր։ Շատ շատերը նրան ճանաչում էին դեմքից։

Ամեն մի խանութպան Յերեք հասալիկների կողմն էր, վորովհետև ինքն էլ հաստ էր ու հարուստ։ Դոկտոր Գասպարի հարևան յուրաքանչյուր հարուստ կարող էր մատնել գվարդիականներին այն մասին, վոր դոկտորն ապաստանել է Թիբուլին։

— Դուք պետք է ձեր արտաքինը փոխեք, — ասաց դոկտոր Գասպարն այն գիշեր, յերբ Թիբուլը հայտնվեց նրա տանը։

Յեվ դոկտոր Գասպարը Թիբուլին դարձրեց ուրիշ մարդ։

Նա ասաց՝

— Դուք հսկա յեք։ Դուք ունեք վիթխարի կրծքավանդակ, լայն ուսեր, փայլուն ատամներ, սև, կոպիտ, գռուզ մազեր։ Յեթե ձեր մորթի սպիտակ գույնը չլիներ, դուք կնմանվեյիք հյուսիսային - ամերիկական նեգրի։ Այդ լավ է։ Յես ձեզ կոգնեմ դառնալու սև։

Դոկտոր Գասպար Արները ուսումնասիրել էր հարյուր գիտություն։ Նա չափազանց լուրջ մարդ էր, բայց ուներ բարեհոգի բնավորություն։ Գործին՝ շատ ժամանակ, հանգստին՝ մի ժամ։ Յերբեմն նա սիրում էր զվարճանալ։ Բայց հանգստանալիս էլ, նա մնում էր իբրև գիտնական։ Այդ ժամանակ նա պատրաստում էր անդրադարձ տալու պատկերներ, վորբանոցային աղքատ յերեխաների համար, սարքում էր զարմանալի հրախաղեր, խաղալիքներ, կառուցում էր յերաժշտական գործիքներ, չլսված գրավչություն ունեցող ձայներով, բաղադրում էր նոր ներկեր։

— Ահա, — ասաց նա Թիբուլին, — ահա, նայեցեք։ Այս սրվակի մեջ՝ անդույն հեղուկ է։ Բայց ընկնելով վորևե մարմնի վրա, չոր ոդի ազդեցության տակ նա մարմինը ներկում է սև գույնի, ընդվորում, — այնպիսի մանիշակավուն յերանգի, ինչպիսին անհրաժեշտ է նեգրի համար։ Յեվ ահա այս սրվակում մի լուծվածք, վորը վոչնչացնում է այդ յերանգը։։։

Թիբուլը հանեց իր մարզազգեստը, վոր կարված էր բազմագույն յեռանկյունիներով, և սկսեց մարմնին քսել ծակծկող, ածխահոտ հեղուկը։

Մի ժամ հետո նա դարձավ սևամորթ։

Այդ ժամանակ, ներս մտավ Հանիմեդ մորաքույրն իր մկնով։ Շարունակությունը մենք գիտենք։

Դառնանք դոկտոր Գասպարին։ Մենք նրա հետ բաժանվեցինք այն բոպեին, երբ կապիտան Բոնավենտուրան տարավ նրան պալատական պաշտոնյայի սև կառքով։

Կառքը սլանում էր ամբողջ թափով։ Մենք արդեն գիտենք, որ ըմբիշ Լափիթուփը չհասավ նրան։

Կառքում մութն էր։ Հայտնվելով ներսում, դոկտորը նախ վճռեց, որ իր կողքին նստած պաշտոնյան ծընկների վրա բռնել է մի յերեխայի, աղջկա, խճճված մազերով։

Պաշտոնյան լուռ էր։ Յերեխան նույնպես։

— Ներեցեք, յես հարկ յեղածից ավելի շատ տեղ չգրավեցի՞, — հարցրեց քաղաքավարի դոկտորը, գլխարկը բարձրացնելով։

Պաշտոնյան չոր պատասխանեց։

— Մի՛ք անհանգստանա։

Լուսերն առկայծում և անցնում էին կառքի նեղ լուսամուտներով։ Մի բոպե հետո աչքերը վարժվեցին մթությանը։ Այդ ժամանակ դոկտորը զննեց պաշտոնյայի յերեսը քիթը, կլոսափակ կոպերը և հիանալի աղջկան՝ տոնակար հագուստներով։ Աղջիկը թվում էր չափազանց վշտահար։ Յեվ, հավանաբար, նա գունատ էր, բայց կխսախավարում այդ բանը վորոշել չեր կարելի։

«Խեղճ, — մտածեց դոկտոր Գասպարը։ — Նա, ինչպես յերևում է, հիվանդ է»։

Յեվ նորից դիմեց պաշտոնյային։

— Ամենայն հավանականությամբ, պահանջվում է իմ ոգնությունը։ Խեղճ յերեխան հիվանդացել է։

— Այո, պահանջվում է ձեր ոգնությունը, — պատասխանեց յերկարաքիթը։

«Վոչ մի կասկած չկա, վոր նա Յերեք հասալիկների բարեկամուհին է կամ թագաժառանգ Տուլթիի փոքրիկ հյուրը։ — Դոկտորը կառուցում էր իր յենթադրությունները։ — Նա հարուստ հանգված է, նրան բերում են պալատից, գվարդիացի կապիտանն ուղեկցում է նրան, — պարզ է, վոր սա չափազանց կարևոր անձնավորություն է։ Այո, բայց չե՞ վոր կենդանի յերեխաներին չեն թողնում թագաժառանգ Տուլթիի մոտ։ Ի՞նչպես է այս հրեշտակն ընկել պալատ»։

Դոկտորը կորչում էր դուշակությունների մեջ։ Նա նորից փորձեց զրույցի բռնվել քթավոր պաշտոնյայի հետ։

— Ասացեք, ինչո՞վ է հիվանդ այս աղջիկը։ Մի՞թե դիֆտերիտով։

— Վոչ, նրա կրծքի վրա անցք կա։

— Դուք ուզում եք ասել, վոր նրա թոքերը լավ վիճակում չե՞ն։

— Նրա կրծքի վրա անցք կա, — կրկնեց պաշտոնյան։

Դոկտորը քաղաքավարությունից չհարցրեց։

— Խեղճ աղջիկ, — հառաչեց նա։

— Սա աղջիկ չե, այլ տիկնիկ, — ասաց պաշտոնյան։

Այստեղ կառքը մոտեցավ դոկտորի տանը։

Պաշտոնյան իր տիկնիկով և կապիտան Բոնավենտուրան դոկտորի յետևից՝ մտան տուն։ Դոկտորը նրանց ընդունեց իր արհեստանոցում։

«Յեթե դա տիկնիկ է, ել ինչի՞ հարկավոր կարող է դալ իմ ծառայությունը»։

Պաշտոնյան սկսեց բացատրել և ամեն ինչ պարզ դարձավ։ Հանիմեդ մորաքույրը, առավոտվա հուզմունքներից դեռ չզգաստացած, նայում էր ձեղքից։ Նա տեսնում էր

Դառնանք դոկտոր Գասպարին։ Մենք նրա հետ բա-
ժանվեցինք այն բոպեին, երբ կապիտան Բոնավենտու-
րան տարավ նրան պալատական պաշտոնյայի սև կառքով։
Կառքը սլանում էր ամբողջ թափով։ Մենք արդեն
գիտենք, որ ըմբիշ Լափիթուփը չհասավ նրան։
Կառքում մութն էր։ Հայտնվելով ներսում, դոկտորը
նախ վճռեց, որ իր կողքին նստած պաշտոնյան ծընկ-
ների վրա բռնել է մի յերեխայի, աղջկա, խճճված մա-
զերով։
Պաշտոնյան լուռ էր։ Յերեխան նույնպես։
— Ներեցեք, յես հարկ յեղածից ավելի շատ տեղ չգրա-
վեցի՞, — հարցրեց քաղաքավարի դոկտորը, գլխարկը բար-
ձրացնելով։
Պաշտոնյան չոր պատասխանեց։
— Մի՛ք անհանգստանա։
Լուսերն առկայծում և անցնում էին կառքի նեղ լու-
սամուտներով։ Մի բոպե հետո աչքերը վարժվեցին մթու-
թյանը։ Այդ ժամանակ դոկտորը զննեց պաշտոնյայի յեր-
կար քիթը, կիսափակ կոպերը և հիանալի աղջկան՝ տոնա-
կան հագուստներով։ Աղջիկը թվում էր չափազանց վշտա-
հար։ Յեվ, հավանաբար, նա գունատ էր, բայց կիսախա-
վարում այդ բանը վորոշել չէր կարելի։
«Խեղճ, — մտածեց դոկտոր Գասպարը։ — Նա, ինչպես
յերևում է, հիվանդ է»։
Յեվ նորից դիմեց պաշտոնյային։
— Ամենայն հավանականությամբ, պահանջվում է իմ
ոգնությունը։ Խեղճ յերեխան հիվանդացել է։
— Այո, պահանջվում է ձեր ոգնությունը, — պատաս-
խանեց յերկարաքիթը։

«Վոչ մի կասկած չկա, վոր նա Յերեք հասալիկների
բարեկամուհին է կամ թագաժառանգ Տութթիի փոքրիկ
հյուրը։ — Դոկտորը կառուցում էր իր յենթադրություն-
ները։ — Նա հարուստ հանգված է, նրան բերում են պա-
լատից, գվարդիացի կապիտանն ուղեկցում է նրան, —
պարզ է, վոր սա չափազանց կարևոր անձնավորություն
է։ Այո, բայց չէ՞ վոր կենդանի յերեխաներին չեն թող-
նում թագաժառանգ Տութթիի մոտ։ Ի՞նչպես է այս հրեշ-
տակն ընկել պալատ»։
Դոկտորը կորչում էր գուշակությունների մեջ։ Նա նո-
ցից փորձեց զրույցի բռնվել քթավոր պաշտոնյայի հետ։
— Ասացեք, ինչո՞վ է հիվանդ այս աղջիկը։ Մի՞թե
դիֆտերիտով։
— Վոչ, նրա կրծքի վրա անցք կա։
— Դուք ուզում եք ասել, վոր նրա թոքերը լավ վի-
ճակում չե՞ն։
— Նրա կրծքի վրա անցք կա, — կրկնեց պաշտոնյան։
Դոկտորը քաղաքավարությունից չհարցրեց։
— Խեղճ աղջիկ, — հառաչեց նա։
— Սա աղջիկ չէ, այլ տիկնիկ, — ասաց պաշտոնյան։
Այստեղ կառքը մոտեցավ դոկտորի տանը։
Պաշտոնյան իր տիկնիկով և կապիտան Բոնավենտու-
րան դոկտորի յետևից՝ մտան տուն։ Դոկտորը նրանց ըն-
դունեց իր արհեստանոցում։
«Յեթե դա տիկնիկ է, ել ինչի՞ հարկավոր կարող է
գալ իմ ծառայությունը»։
Պաշտոնյան սկսեց բացատրել և ամեն ինչ պարզ դար-
ձավ։ Հանիմեդ մորաքույրը, առավոտվա հուզմունքներից
դեռ չզգաստացած, նայում էր ճեղքից։ Նա տեսնում էր

սարսափելի կապիտան Բոնավենտուրային։ Նա կանգնել եր, հենված սուսերի վրա և շարժելով վոտը, վորը գտնըվում եր ճիտքը յետ շրջաց վիթխարի սապոգի մեջ։ Նրա շպորները նման եյին գիսաստղերի։ Մորաքույրը. տեսավ վշտահար, հիվանդ աղջկան տոնական վարդագույն զգեստով, վորին պաշտոնյան նստեցրել եր բազկաթոռին։ Աղջիկը խոնարհել եր խճճված մազերով գլուխը և թվում եր, թե նայում եր ներքև, նայում եր իր սիրելի տոտիկներին, փումփուլների փոխարեն վոսկի վարդեր ունեցող սալասե կիսակոշիկների մեջ։ Ուժեղ քամին միջանցքում շուռ տվեց փեղկը և այդ ձայնը խանգարեց Հանիմեդ մորաքույրին՝ լսել։

Բայց նա, ելի ինչվոր բան հասկացավ։

Պաշտոնյան դոկտոր Գասպարին ցույց տվեց Յերեք հաստլիկների պետական խորհրդի հրամանը։ Դոկտորը կարդաց և անհանգստացավ։

— Տիկնիկը պետք է նորոգված լինի մինչև վաղը,— ասաց պաշտոնյան, վեր կենալով։

Կապիտան Բոնավենտուրան զննդացրեց շպորները։

— Այո՛՛՛ բայց՛՛՛ — դոկտորը ձեռքերը շարժեց։ — Յես կաշխատեմ, բայց մի՞թե կարելի յե յերաշխավորել։ Յես ծանոթ չեմ այս կախարդական տիկնիկի մեխանիզմի հետ։ Դրա համար պահանջվում է յերկար ժամանակ։ Կարող է պատահել, վոր իմ արվեստս անզոր հանդիսանա՛՛՛ Կարող է պատահել, վոր ինձ չհաջողվի վերականգնել վիրավոր տիկնիկի առողջությունը՛՛՛ Յես վախենում եմ, պարոնայք՛՛՛ Այդպիսի կարճ պայմանաժամ՛՛՛ Միայն մի գիշեր՛՛՛ Յես չեմ կարող խոստանալ։

Պաշտոնյան ընդհատեց նրան։ Բարձրացնելով մատը, նա ասաց։

— Թագաժառանգ Տուլթիի վիշտը չափազանց մեծ է, վորպեսզի մենք կարողանանք դանդաղել։ Տիկնիկը պետք է հարություն առնի մինչև վաղը։ Այդպես է Յերեք հասալիկների կամքը։ Վոչ վոք չի համարձակվի չյենթարկվել նրանց հրամանին։ Վաղն առավոտյան, դուք նորոգված, առողջ տիկնիկը կբերեք Յերեք հասալիկների պալատը։

— Այո՛... բայց՛... — բողոքեց դոկտորը։

— Վոչ մի խոսակցություն։ Տիկնիկը պետք է վերանորոգվի մինչև վաղն առավոտ։ Յեթե դուք անեք այդ, ձեզ կսպասի պարգևատրություն։ Յեթե վոչ՝ դաժան պատիժ։

Դոկտորը ցնցվեց։

— Յես կաշխատեմ, — թոթովեց նա։ — Բայց, հասկացեք, դա չափազանց պատասխանատու գործ է...

— Ի հարկե, — կարեց պաշտոնյան և մատը վար առավ։ — Յես ձեզ հանձնեցի հրամանը, — դուք պարտավոր եք կատարելու այդ։ Մնաք բարև։

Հանիմեդ մորաքույրը յետ ցատկեց դռնից և վազեց իր սենյակը, վորտեղ, անկյունում, կռթկռթացնում եր յերջանիկ մուկը։ Սարսափելի հյուրերը դուրս յելան։ Պաշտոնյան նստեց կառք։ Գրաֆ Բենավենտուրան, փայլեցնելով ու զննդացնելով, ցատկեց ձիու վրա։ Գվարդիականները վար քաշեցին գլխարկները և բոլորը սլացան։

Թագաժառանգ Տուլթիի տիկնիկը մնաց դոկտորի արհեստանոցում։

Դոկտորն ուղեկցեց հաճախորդներին, հետո գտավ Հանիմեդ մորաքույրին և ասաց նրան անսովոր խիստ ձայնով։

— Հանիմեդ մորաքույր, հիշեցեք։ Յես թանդ եմ գնահատում իմաստուն մարդու, հմուտ դոկտորի և խորամանկ

վարպետի իմ անունը։ Բացի դրանից, — թանգ եմ գնահատում իմ գլուխը։ Վաղն առավոտյան յես կարող եմ կորցնել և մեկը, և մյուսը։ Իմ առջև կանգնած է մի ամբողջ գիշերվա ծանր աշխատանք։ Հասկացա՞ք։

Նա թափահարեց Յերեք հաստլիկների պետական խորհրդի հրամանը

— Վոչ վոք ինձ չպետք է խանգարի։ Աղմուկ մի՛ք բարձրացնի։ Ափսեները մի՛ք հնչեցնի։ Ուզար մի՛ք անի։ Հավերին մի՛ք կանչի։ Մկներ մի՛ք բռնի։ Վոչ մի ձվածեղ, ծաղկավոր կաղամբ, քաղցրավենի՛ք և վալերյան կաթիլներ։ Հասկացա՞ք։

Դոկտոր Գասպարը չափազանց բարկացած եր։

— Տարորինակ բաներ, շատ տարորինակ բաներ, — մրթմրթաց մորաքույրը։ — Յես վոչինչ չեմ հասկանում։ Ինչվոր նեգր, ինչվոր տիկնիկ, ինչվոր հրաման... տարորինակ որեր են վրա հասել։

Վորպեսզի հանգստանա, նա վորոշեց նամակ գրել իր բարեկամուհուն։ Հարկ յեղավ գրել չափազանց զգույշ, վորպեսզի գրիչը չճռռար։ Նա վախենում եր անհանգստացնել դոկտորին։

Անցավ մի ժամ։ Հանիմեդ մորաքույրը գրում եր։ Նա հասել եր այնտեղ, ուր նկարագրում եր զարմանալի նեգրին, վորն այդ որն առավոտյան հայտնվել եր դոկտոր Գասպարի արհեստանոցում։

«Նրանք գնացին յերկուսով։ Դոկտորը վերադարձավ պալատական պաշտոնյայի և գվարդիականների հետ։ Նրանք բերեցին տիկնիկին, վոր վոչնչով չեր տարբերվում աղջկանից, բայց նեգրը նրանց հետ չեր։ Ուր եր նա անհետացել, յես չգիտեմ»...

Այն հարցը, թե ուր եր անհետացել նեգրը, նույն ինքը՝ մարդիկ Թիբուլը, — անհանգստացնում եր նաև դոկտոր Գասպարին։ Աշխատելով տիկնիկի վրա, նա չեր դադարում Թիբուլի վիճակի մասին մտածելուց։ Նա բարկանում եր։ Նա խոսում եր ինքն իրեն հետ։

— Ինչպիսի անզգուշություն։ Յես նրան նեգրի վերածեցի, յես նրան ներկեցի հիանալի սև գույնով, յես նրան դարձրի բոլորովին անճանաչելի, — իսկ նա ինքն իրեն մատնեց այսոր, Տասնչորսերորդ Շուկայում։ Ախը նրան կարող են բռնել... Ախ, ինչպիսի անզգուշն է նա։ Մի՞թե նա ցանկություն ունի յերկաթե վանդակի մեջ ընկնել։

Շատ մեծ եր դոկտոր Գասպարի վատ տրամադրությունը։ Թիբուլի անզգուշությունը, հետո այս տիկնիկը... բացի դրանից, նախորդ որվա հուզմունքը, տասը կառափնատ դատի հրապարակում...

— Սարսափելի ժամանակ է, — բացականչեց դոկտորը։

Նա չգիտեր, վոր այդ որվա գլխատությունը հետաձգված է։ Պալատական պաշտոնյան շատախոս մարդ չեր։ Նա չեր հաղորդել դոկտորին այն մասին, ինչ վոր տեղի յեր ունեցել այդ որը պալատում։

Դոկտորը գնեց խեղճ տիկնիկին և տարակուսեց։

— Վո՞ր տեղից են այս վերքերը։ Նրանք բացված են սառը զենքով։ — գուցե սուսերներով։ Տիկնիկին, հիանալի աղջկան, սրախողխող են արել... Ո՞վ է արել այս։ Ո՞վ է համարձակվել սուսերով ծակել թագաժառանգ Տուլթիի տիկնիկին։

Դոկտորը չեր յենթադրում, վոր այդ արել են գվարդիականները։ Նա մտքով անգամ չեր կարող անցկացնել այն, վոր նույնիսկ պալատական գվարդիան հրաժարվում

ե ծառայել Յերեք հասալիկներին և անցնում է ժողովրդի կողմը։ Նա ինչքան կուրախանար, յեթե իսկապես իմանար այդ մասին։

Դոկտորը տիկնիկի դեմքն իր ձեռքը վերցրեց։ Արևը լուսամուտից նետվեց ներս։ Նա պայծառ լուսավորեց տիկնիկին։ Դոկտորը նայեց։

— Տարօրինակ է, չափազանց տարօրինակ է, — սկսեց դատել նա։ Յես ինչ վոր տեղում արդեն տեսել եմ այս դեմքը։։։ Դե հա, ի հարկե։։։ Յես տեսել եմ նրան, յես նրան գիտեմ։ Բայց վո՞րտեղ։ Յե՞րբ։ Նա կենդանի յեր, նա կենդանի աղջկա դեմք եր, նա ժպտում եր, հիանալի ծամածռում եր դեմքը, ուշադիր եր, նազանի և տխուր։։։ Այո, այո։ Դրանում կասկած լինել չի կարող, բայց անիծված կարճատեսությունը խանգարում է ինձ, դեմքեր հիշել։

Նա տիկնիկի խարտյաշ մազերը մոտեցրեց իր աչքերին։

— Ինչպիսի զարմանալի տիկնիկ է։ Ինչպիսի խելոք վարպետ է նրան ստեղծել։։։ Նա նման չէ սովորական տիկնիկի։ Տիկնիկը սովորաբար ունենում է կապույտ, դուրս չռած աչքեր՝ անմարդկային և անմիտ, վեր ցցած քիթ, բանտիկի ձևի շրթունքներ, հիմար, շեկ խոպոպներ, իսկ և իսկ, ինչպես գառան վրա։ Տիկնիկն արտաքինից յերջանիկ է թվում, բայց իրականում նա հիմար է։։։ Իսկ այս տիկնիկի մեջ վոչինչ չկա տիկնիկային։ Յերդվում եմ, սա կարող է թվալ տիկնիկի վերածնված աղջիկ։

Դոկտոր Գասպարն զմայլվում եր իր անսովոր հաճախորդուհով։ Յեվ ամբողջ ժամանակ նրանից չեր հեռանում այն միտքը, վոր ինչվոր տեղում, ինչվոր ժամանակ

նա տեսել է նույն այս գունատ դեմքը, մոխրագույն, ուշադիր աչքերը, կարճ խճճված մազերը։ Հատկապես ծանոթ եր թվում նրան գլխի թեքվածքն ու հայացքը։— նա գլուխը մի քիչ կռացնում եր դեպի մի կողմ և նայում եր դոկտորին ներքևից, ուշադիր, խորամանկ։։։

Դոկտորը չհամբերեց և բարձր հարցրեց։

— Տիկնիկ, ի՞նչպես են քեզ անվանում։

Բայց աղջիկը լռում եր։ Այդ ժամանակ դոկտորն սթափվեց։ Տիկնիկը փչացված է, հարկավոր է վերադարձնել նրա ձայնը, վերանորոգել սիրտը, սովորեցնել նորից ժպտալ, պարել և պահել իրեն այնպես, ինչպես պահում են իրենց նրա տարիքի աղջիկները։

— Նա տասնյերկու տարեկանի տեսք ունի։

Դանդաղել անկարելի յեր։ Դոկտորը ձեռնարկեց աշխատանքի։

— Յես պետք է վերակենդանացնեմ տիկնիկին։

Հանիմեդ մորաքույրն իր նամակը վերջացրեց։ Յերկու ժամ նա ձանձրացավ։ Հետո նրան սկսեց հետաքրքրությունը բռնել։

«Տեսնես ի՞նչ շատով աշխատանք պետք է կատարի դոկտոր Գասպարը։ Այդ ի՞նչ տիկնիկ եր»։

Նա դաղտագողի մոտեցավ արհեստանոցի դռներին և ճեղքից նայեց ներս։ Ավաղ, այնտեղ անցկացված եր բաղնալին։ Նա վոչինչ չտեսավ, բայց դուռը բացվեց ու դուրս յեկավ դոկտոր Գասպարը։ Նրա տրամադրությունն այնպես ընկած եր, վոր նույնիսկ նկատողություն չարեց Հանիմեդ մորաքույրին, նրա անհամեստության համար։ Հանիմեդ մորաքույրն առանց այդ էլ՝ իրեն շատ անհարմար զգաց։

ե ծառայել Յերեք հասալիկներին և անցնում ե ժողովրդի կողմը։ Նա ինչքան կուրախանար, յեթե իսկապես իմանար այդ մասին։

Դոկտորը տիկնիկի դեմքն իր ձեռքը վերցրեց։ Արևը լուսամուտից նետվեց ներս։ Նա պայծառ լուսավորեց տիկնիկին։ Դոկտորը նայեց։

— Տարորինակ ե, չափազանց տարորինակ ե, — սկսեց դատել նա։ Յես ինչ վոր տեղում արդեն տեսել եմ այս դեմքը... Դե հա, ի հարկե... Յես տեսել եմ նրան, յես նրան գիտեմ։ Բայց վո՞րտեղ։ Յե՞րբ։ Նա կենդանի յեր, նա կենդանի աղջկա դեմք եր, նա ժպտում եր, հիանալի ծամածռում եր դեմքը, ուշադիր եր, նազանի և տխուր... Այո, այո։ Դրանում կասկած լինել չի կարող, բայց անիծված կարճատեսությունը խանգարում ե ինձ, դեմքեր հիշել։

Նա տիկնիկի խարտյաշ մազերը մոտեցրեց իր աչքերին։

— Ինչպիսի զարմանալի տիկնիկ ե։ Ինչպիսի խելոք վարպետ ե նրան ստեղծել... Նա նման չե սովորական տիկնիկի։ Տիկնիկը սովորաբար ունենում ե կապույտ, դուրս չռած աչքեր՝ անմարդկային և անմիտ, վեր ցցած քիթ, բանտիկի ձևի շրթունքներ, հիմար, շեկ խոպոպներ, իսկ և իսկ, ինչպես դառան վրա։ Տիկնիկն արտաքինից յերջանիկ ե թվում, բայց իրականում նա հիմար ե... Իսկ այս տիկնիկի մեջ վոչինչ չկա տիկնիկային։ Յերդվում եմ, սա կարող ե թվալ տիկնիկի վերածնված աղջիկ։

Դոկտոր Գասպարն զմայլվում եր իր անսովոր հաճախորդուհով։ Յեվ ամբողջ ժամանակ նրանից չեր հեռանում այն միտքը, վոր ինչվոր տեղում, ինչվոր ժամանակ

նա տեսել ե նույն այս գունատ դեմքը, մոխրագույն, ուշադիր աչքերը, կարճ խճճված մազերը։ Հատկապես ծանոթ եր թվում նրան գլխի թեքվածքն ու հայացքը։ — Նա գլուխը մի քիչ կռացնում եր դեպի մի կողմ և նայում եր դոկտորին ներքևից, ուշադիր, խորամանկ...

Դոկտորը չհամբերեց և բարձր հարցրեց։

— Տիկնիկ, ինչպես են քեզ անվանում։

Բայց աղջիկը լռում եր։ Այդ ժամանակ դոկտորն սթափվեց։ Տիկնիկը փչացված ե, հարկավոր ե վերադարձնել նրա ձայնը, վերանորոգել սիրտը, սովորեցնել նորից ժպտալ, պարել և պահել իրեն այնպես, ինչպես պահում են իրենց նրա տարիքի աղջիկները։

— Նա տասնյերկու տարեկանի տեսք ունի։

Դանդաղել անկարելի յեր։ Դոկտորը ձեռնարկեց աշխատանքի։

— Յես պետք ե վերակենդանացնեմ տիկնիկին։

Հանիմեդ մորաքույրն իր նամակը վերջացրեց։ Յերկու ժամ նա ձանձրացավ։ Հետո նրան սկսեց հետաքրքրությունը բռնել։

«Տեսնես ինչ շատ աշխատանք պետք ե կատարի դոկտոր Գասպարը։ Այդ ինչ տիկնիկ եր»։

Նա գաղտագողի մոտեցավ արհեստանոցի դռներին և ճեղքից նայեց ներս։ Ավաղ, այնտեղ անցկացված եր բանալին։ Նա վոչինչ չտեսավ, բայց դուռը բացվեց ու դուրս յեկավ դոկտոր Գասպարը։ Նրա տրամադրությունն այնպես ընկած եր, վոր նույնիսկ նկատողություն չարեց Հանիմեդ մորաքույրին, նրա անհամեստության համար։ Հանիմեդ մորաքույրն առանց այդ ել՝ իրեն շատ անհարմար զգաց։

— Հանիմեդ մորաքույր,—ասաց դոկտորը։—Յես գնում եմ։ Ավելի ճիշտ՝ ինձ հարկավոր է գնալ։ Կառք կանչեցեք։

Նա լռեց, հետո սկսեց ափով ճակատը շփել։

— Յես գնում եմ Յերեք հասալիկների պալատը։ Շատ հնարավոր է, որ յես այնտեղից չեմ վերադառնա։

Հանիմեդ մորաքույրը զարմանքից յետ յետ գնաց։

— Յերեք հասալիկների պալատը։

— Այո, Հանիմեդ մորաքույր։ Գործը չափազանց վատ է։ Ինձ մոտ բերեցին թագաժառանգ Տուլթիի տիկնիկը։ Դա աշխարհի ամենալավ տիկնիկն է։ Նրա մեխանիզմը փչացել է։ Յերեք հասալիկների պետական խորհուրդն ինձ հրամայել է վերանորոգել այդ տիկնիկը մինչև վաղն առավոտյան։ Ինձ սպառնում է դաժան պատիժ։

Հանիմեդ մորաքույրը պատրաստվեց լաց լինելու։

— Յեվ ահա յես չեմ կարող վերանորոգել այդ խեղճ տիկնիկին։ Յես քանդեցի նրա կրծքում թաղնված մեխանիզմը, յես հասկացա նրա գաղտնիքը, յես կարող եյի նրան վերանորոգել, բայց մի ինչ որ դատարկ բանի համար Հանիմեդ մորաքույր, յես չեմ կարող այդ անել։ Այնտեղ, այդ խորամանկ մեխանիզմի մեջ, կա մի ատամնավոր անիվ։ Նա ճաքել է... Նա բանի պետք չի գա։ Պետք է նորը սարքել... Յես ունեմ նրան համապատասխան մետաղ, արծաթի նմանվող... Բայց նախքան աշխատանքի ձեռնարկելը, այդ մետաղը պետք է պահել արջասպի լուծվածքի մեջ առնվազն յերկու որ։ Հասկացեք, յերկու որ, իսկ տիկնիկը պետք է պատրաստ լինի վաղն առավոտյան։

— Իսկ ուրիշ որևե անիվ չի կարելի դնել,—անվստահ առաջարկեց Հանիմեդ մորաքույրը։

Դոկտորը վշտահար ձեռքը թափահարեց։

— Յես ամեն ինչ փորձեցի։ Վոչինչ դուրս չի գալիս։ Հինգ բոպե հետո, դոկտոր Գասպարի տան առջև կանգնել եր փակ կառքը։ Դոկտորը վճռել եր գնալ Յերեք հասալիկների պալատը։

— Յես նրանց կասեմ, որ վաղն առավոտյան տիկնիկը պատրաստ լինել չի կարող։ Թող ինձ հետ անեն այն, ինչ որ ուզում են...

Հանիմեդ մորաքույրը գոգնոցի ծայրը կծեց և սկսեց գլուխն որորել այնքան ժամանակ, մինչև որ վախեցավ, թե գլուխը վար կգլորվի։

Դոկտոր Գասպարը իր կողքին նստացրեք տիկնիկին ու գնաց։

ԳԼՈՒԽ 7

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՏԻԿՆԻԿԻ ԳԻՇԵՐԸ

Քամին վզոում եր դոկտոր Դասպարի յերկու ականջների մեջ։ Ստացվում եր մի անտանելի մեղեդի, վորն ավելի վատ եր այն նեգրիտանական գալոպից, վորն ստեղծվում է դանակ սրող քարի և սրվող դանակի ձայներից։

Դոկտորն ականջներն ոձիքով ծածկեց և մեջքը տվեց քամուն։

Այդ ժամանակ, քամին սկսեց զբաղվել սատղերով։ Նա մեկ փչում ուռեցնում եր նրանց, մեկ գլորում, մեկ շուռ եր տալիս կտուրների սև յեռանկյունիներից այն կողմ։ Յերբ այդ խաղը ձանձրացրեց նրան, նա ամպեր հնարեց։ Բայց ամպերը քայքայվեցին, ինչպես աշտարակներ։ Այդտեղ քամին իսկույն դարձավ սառը, նա սառեց չարությունից։

Դոկտորը հարկ համարեց փաթաթվել թիկնոցի մեջ։ Թիկնոցի կեսը նա տրամադրեց տիկնիկին։

— Քշեցեք։ Քշեցեք։ Խնդրեմ, քշեցեք։

Վոչ դես, վոչ դեն՝ դոկտորն սկսեց սարսափել և նա շտապեցնում եր կառապանին։

Զափազանց տաղնապալի յեր, մութ և ամայի։ Միայն մի քանի լուսամուտներում յերևացին կարմրավուն կրակներ, մյուսները ծածկված եյին փեղկերով։ Մարդիկ սպասում եյին սարսափելի դեպքերի։

Այդ գիշեր շատ բան թվում եր անսովոր ու կասկածելի։ Յեվ յերբեմն դոկտորը նույնիսկ վախենում եր, վոր տարորինակ տիկնիկի աչքերը հանկարծ կփայլեն մթության մեջ, իբրև յերկու թափանցիկ քարեր։ Նա աշխատում եր չնայել իր ուղեկցուհուն։

«Դատարկ բան է,—հանդատացնում եր նա ինքնիրեն։— Իմ նյարդերս քայքայվել են։ Ամենասովորական յերեկո յե։ Միայն թե, անցորդներ քիչ կան։ Միայն քամին է այնպես տարորինակ գցում նրանց ստվերները, վոր յուրաքանչյուր հանդիպող թվում է վարձու մարդասպան՝ իր թևավոր, խորհրդավոր թիկնոցի մեջ։։։ Միայն գազի լապտերներն են վառվում փողոցների հանգույցներում ինչ վոր մեռելային — կապույտ լույսով։։։ Ախ, յեթե շուտ հասնեյի մինչև Յերեք հասալիկների պալատը»։։։

Կա սարսափից ազատվելու շատ լավ միջոց։ — քնել։ Հատկապես հանձնարարվում է վերմակը քաշել գլխին։ Դոկտորը դիմեց այդ միջոցին։ Վերմակը նա փոխարինեց գլխարկով, վորը պինդ քաշեց աչքերի վրա։ Դե ի հարկե, նա սկսեց հաշվել մինչև հարյուրը։ Այդ չոգնեց։ Այդ ժամանակ նա ոգտվեց ուժեղ ազդող մի միջոցից։ Նա կրկնում եր ինքնիրեն։

«Մի փիղ ու մի փիղ,—յերկու փիղ։ յերկու փիղ ու մի փիղ,—յերեք փիղ։ յերեք փիղ և մի փիղ,—չորս փիղ»։։։

Հասավ մինչև փղերի մի վողջ յերամակի։ Յեվ ահա, հարյուր քսան յերեքերորդ փիղը յերևակայական փղից վերածվեց իսկական փղի։ Յեվ վորովհետև դոկտորը չեր կարող հասկանալ՝ փիղ եր այդ թե ըմբիշ Լափիթուփն եր,

ապա, ակներև է, վոր դոկտորը քնել էր և յերազ էր տեսնում։

Ժամանակը յերազի մեջ անցնում է շատ ավելի արագ, քան արթուն ժամանակ։ Համենայն դեպս, դոկտորը քնի մեջ կարողացավ վոչ միայն հասնել մինչև Յերեք հաստ-լիկների պալատը, այլև կանգնել նրանց դատարանի առջև։ Յուրաքանչյուր հաստլիկ նստել էր նուշնպիսի հատ մի փղի վրա։ Դոկտորը կանգնել էր նրանց առջև, տիկնիկի ձեռքը բռնած, ինչպես գնչուն է բռնում կապույտ շրջազգեստ հագած կապիկի ձեռքը։

Նրանք չեյին ուզում լսել վոչ մի բացատրություն։

«Դու չես կատարել հրամանը, — ասում եյին նրանք։ — Դու արժանի յես դաժան պատժի։ Տիկնիկի հետ միասին, դու պետք է անցնես յերկաթալարով, Աստղի հրապարակի վրայով։ Միայն թե, ակնոցներդ հանիր»։։։

Դոկտորը ներումն էր խնդրում։ Գլխավորապես, նա վախենում էր տիկնիկի ճակատագրից։։։ Նա ասում էր այսպես։

«Յես արդեն սովորել եմ, յես արդեն գիտեմ չընկնել։։։ Յեթե յես պոկվեմ յերկաթալարից և ընկնեմ ավազանը, — այդ վոչինչ։ Յես փորձ ունեմ։ յես ընկա աշտարակի հետ միասին, քաղաքի դարբասների մոտի հրապարակում։։։ Բայց տիկնիկը, խեղճ տիկնիկ։ Նա ջարդ ու փշուր կլինի։։։ Խղճացեք նրան։։։ Ախր յես համոզված եմ, նա տիկնիկ չէ այլ կենդանի աղջիկ հիանալի անունով, վորը յես մոռացել եմ, վորը չեմ կարող հիշել»։։։

«Վոչ, — բղավում եյին հաստլիկները, — վոչ, վոչ մի ներումն։ Այդպես է Յերեք հաստլիկների հրամանը»։

Կանչն այնքան սուր էր, վոր բժիշկն արթնացավ։

— Այդպես է Յերեք հասալիկների հրամանը, — բղավում էր ինչվոր մեկն իր հենց ականջի մոտ։

Այժմ այլևս, դոկտորը քնած չէր։ Այդ բղավում էին իրականում։ Դոկտորն ազատեց աչքերը, կամ, ավելի ճիշտ՝ ակնոցները, գլխարկի տակից և նայեց։ Նրա քնած ժամանակ գիշերն արդեն կարողացել էր հիմնավորապես սևանալ։

Կառքը կանգնած էր։ Նրան շրջապատել էին սև կերպարանքներ։ Հենց նրանք էլ բարձրացրել էին ադմուկը, վորը խառնվել էր դոկտորի յերազի հետ։ Նրանք շարժում էին լապտերները։ Դրանից թռչկոտում էին վանդակավոր ստվերներ։

— Ինչումն է բանը, — հարցրեց դոկտորը։ — Վո՞ր տեղ ենք գտնվում։ Ո՞վքեր են այս մարդիկ։

Կերպարանքներից մեկը մոտեցավ և լապտերը գլխի բարձրությամբ վեր բարձրացնելով, լուսավորեց դոկտորին։ Լապտերն ոլորվում էր։ Ձեռքը, վոր վերևից բռնել էր նրա ողակը, գտնվում էր ձեռնոցի մեջ՝ կոպիտ կաշուց և լայն թևանոցով։

Դոկտորը հասկացավ, — գվարդիականներն են։

— Այդպես է Յերեք հասալիկների հրամանը, — կրկնեց կերպարանքը։ Դեղին լույսը նրան մաս-մաս էր արել։ Փայլփլում էր մոմլաթե գլխարկը, վոր գիշերով թողնում էր յերկաթից շինվածի տպավորություն։

— Վոչ վոք իրավունք չունի մի կիլոմետրից ավելի մոտենալ պալատին։ Այսոր հրատարակեցին այս հրամանը։ Քաղաքում խռովություններ են։ Ավելի այն կողմ գնալ չի կարելի։

— Այո, բայց ինձ անհրաժեշտ է հայտնվել պալատ։ — Դոկտորը վրդովված էր։

[illegible]

Գվարդիականը խոսեց յերկաթե ձայնով։

— Յես պահակների պետն եմ, կապիտան Յերեփը։ Յես ձեզ այլևս վոչ մի քայլ այն կողմ չեմ թողնի։ Յետ դարձիր, — բղավեց նա կառապանին, լապտերը շարժելով։

Դոկտորն իրենից դուրս յեկավ։ Այնուամենայնիվ նա չեր կասկածում, վոր յեթե իմանային, թե ով է նա և ինչու յե նրան պալատը հարկավոր, նրան անմիջապես թույլ կտային։

— Յես դոկտոր Գասպար Արներին եմ, — ասաց նա։

Ի պատասխան, վորոտաց ծիծաղը։ Բոլոր կողմերից թռչկոտել սկսեցին լապտերները։

— Քաղաքացի, մենք տրամադրված չենք կատակել այսպիսի տագնապալի ժամանակ և այսպիսի ուշ ժամին, — ասաց պահակների պետը։

— Կրկնում եմ ձեզ, վոր յես դոկտոր Գասպար Արներին եմ։

Պահակների պետը կատաղեց։ Նա դանդաղ և հատհատ պատասխանեց, յուրաքանչյուր բառի հետ սուսերի գնդոցը դուդորդելով։

— Պալատ մտնելու համար դուք ծածկվում եք ոտար անվան տակ։ Դոկտոր Գասպար Արներին գիշերները չի թափառում։ Հատկապես այս գիշեր։ Այժմ նա զբաղված է կարևոր գործով։ Նա վերակենդանացնում է թագաժառանգ Տուբթիի տիկնիկը։ Միայն վաղն առավոտյան նա կհայտնվի պալատ։ Իսկ ձեզ, իբրև խաբեբայի, յես ձերբակալում եմ։

— Ի՞նչ... — այստեղ արդեն, դոկտորը կատաղեց։ — Ի՞նչ։ Նա համարձակվում է ինձ չհավատալ։ Լավ։ Յես խլույն ցույց կտամ նրան տիկնիկը։

Դոկտորը ձեռքը յերկարեց տիկնիկը վերցնելու համար, և հանկարծ...

Տիկնիկը չկար... Նրա քնած ժամանակ տիկնիկը կառքից ընկել եր։

Դոկտորը սառույց կտրվեց։

«Գուցե այս բոլորը յերազ է», — անցավ նրա գիտակցության միջով։

Ավաղ, այդ իրականություն եր։

— Դե, — բառաչեց պահակների պետը, ատամները սեղմելով և լապտերը բռնող մատները շարժելով։ — Գնացեք սատանային։ Յես ձեզ բաց եմ թողնում, վորպեսզի ծերուկին չչարչարեմ... Կորեք...

Պետք եր յենթարկվել։ Կառապանը յետ դարձավ։ Կառքը ճռնչաց, ձին փռնչացրեց, յերկաթե լապտերները փայլեցին վերջին անգամ և խեղճ դոկտորը վերադարձավ յետ։

Նա չդիմացավ և լացեց։ Նրա հետ այնքան կոպիտ խոսեցին, նրան անվանեցին ծերուկ, իսկ ամենագլխավորը, — նա կորցրեց թագաժառանգ Տուբթիի տիկնիկը։

«Այդ նշանակում է, վոր յես կորցրի իմ գլուխս, ամենաբառացի իմաստով»։

Նա լացեց։ Նրա ակնոցները քրանեցին, նա վոչինչ չեր տեսնում։ Նա ցանկանում եր գլուխը թաղել բարձի մեջ։

Մինչ այդ, կառապանը քշում եր ձիերին։ Տասը րոպե վշտացավ դոկտորը։ Բայց շուտով յետ յեկավ նրան հատուկ դատողությունը։

«Յես դեռ կարող եմ գտնել տիկնիկը, — ծրագրում եր նա։ — Այս գիշեր անցորդները քիչ կան։ Այս տեղը միշտ

ամայի յե։ Կարող ե պատահել, վոր այդ ժամանակամիջոցում վոչ վոք չի անցել ճանապարհով»։։։

Նա հրամայեց կառապանին՝ առաջ շարժվել դանդաղ և ուշադիր զննել ճանապարհը։

— Դե ինչ, դե ինչ,— հարցնում եր նա յուրաքանչյուր բոպե։

— Վոչինչ չի յերևում։ Վոչինչ չի յերևում,— պատասխանում եր կառապանը։

Նա տեղեկացնում եր բոլորովին անկարևոր և անհետաքրքիր գյուտերի մասին։

— Տակառ։

— Զե։։։ Այն չի։։։

— Ապակու մի մեծ, լավ կտոր։

— Վոչ։

— Պատռված կոշիկ։

— Վոչ,— հետզհետե ավելի կամացուկ պատասխանում եր դոկտորը։

Կառապանն ամեն կերպ ճիգ եր գործ դնում։ Նա նայում եր չափազանց ուշադիր։ Մթության մեջ նա տեսնում եր այնպես լավ, կարծես կառապան չեր, այլ ովկիանոսային շոգենավի կապիտան։

— Իսկ տիկնիկը, տիկնիկը չե՞ք տեսնում։ Տիկնիկը՝ վաղդաղույն զգեստով։

— Տիկնիկը չկա,— ասում եր կառապանը վշտահար բամբով։

— Դե, այդ դեպքում, նրան վերցրել են։ Այլևս փնտրելը միտք չունի։։։ Այստեղ, այս տեղում, յես քնեցի։։։ Այն ժամանակ նա դեռ նստած եր իմ կողքին։։։ Ա՛խ։

Ցեվ դոկտորը նորից պատրաստ եր լաց լինելու։ Կառապանը մի քանի անգամ ցավակցաբար քիթը վեր քաշեց։

— Բա ինչ անել։

— Ախ, յես այդ չգիտեմ։։։ Ախ, յես այդ չգիտեմ։։։— Դոկտորը նստել եր, գլուխը ձեռքի վրա խոնարհած, վըշտից ու կաղքի հարվածներից ցնցվելով։

— Ցես գիտեմ,— ասաց նա։— Դե իհարկե։։։ Դե հարկե։։։ Այդ ինչպես առաջ այդ բանն իմ գլուխս չեկավ։։։ Նա փախել ե,— այդ տիկնիկը։։։ Ցես քնեցի, իսկ նա փախավ։ Պարզ ե։ Նա կենդանի յեր։ Ցես այդ իսկույն նկատեցի։ Ի դեպ՝ այդ չի թեթևացնում իմ հանցանքը Ցերեք հաստլիկների առջև։։։

Այստեղ, նա ցանկություն զգաց ուտելու։ Նա լռեց մի քիչ, իսկ հետո հայտնեց շատ հանդիսավոր։

— Ցես այսոր չեմ ճաշել։ Տարեք ինձ դեպի մոտակա պանդոկը։

Քաղցը դոկտորին հանգստացրեց։

Ցերկար գնացին նրանք մութ փողոցներով։ Բոլոր պանդոկատերերն իրենց դռները փակում եյին։ Բոլոր հաստլիկներն այդ գիշեր ապրում եյին տագնապալի ժամեր։

Նրանք պատրաստել եյին նոր նիզեր և մուտքերը խցկել եյին կամոդներով ու պահարաններով։ Նրանք լուսամուտներն ամրացրել եյին փետուրե բարձերով և շերտավոր ներքնակներով։ Նրանք չեյին քնել։ Բոլոր նրանք, ովքեր ավելի հաստ և ավելի հարուստ եյին, այդ գիշեր սպասում եյին հարձակման։ Շղթայված շներին չեյին կերակրելու առավոտվանից, վորպեսզի նրանք դառնային ավելի ուշադիր ու չար։ Սոսկալի գիշեր եր վրա հասել հարուստների և հաստերի համար։ Նրանք հավատացած եյին, վոր յու-

բաքանչյուր բոպե ժողովուրդը կարող է նորից բարձրանալ։ Այն լուրը, որ մի քանի գվարդիականներ դավաճանել են Յերեք հաստլիկներին, սրախողխող են արել թագաժառանգ Տուլթիի տիկնիկին և հեռացել են պալատից, տարածվել եր վողջ քաղաքով։ Այդ չափազանց անհանգստացրել եր բոլոր հարուստներին ու վորկրամոլներին։

— Սատանան տանի, — գայրանում եյին նրանք։ — Մենք արդեն չենք կարող հույս դնել գվարդիականների վրա։ Յերեկ նրանք ճնշեցին ժողովրդի ապստամբությունը, իսկ այսոր նրանք իրենց թնդանոթներն ուղում են յետ դարձնել մեր տների վրա։

Դոկտոր Գասպարը կորցրեց ամեն հույս՝ հագեցնել իր քաղցն ու հանդստանալ։ Շրջապատում չկար կյանքի վոչ մի նշան։

— Մի՞թե տուն գնալ, — աղերսում եր դոկտորը։ — Բայց դա այնքան հեռու յե... Յես կմեռնեմ քաղցից։

Յեվ հանկարծ նա զգաց տապակածի հոտ։ Այո, գալիս եր հաճելի տապակածի հոտը, — հավանականաբար՝ վոչխարի միս սոխով։ Իսկ կառապանը նույն բոպեյին մոտակայքում լույս նկատեց։ Լույսի նեղ շերտը տատանվում եր քամու հետ։

Ի՞նչ եր այդ։

— Այ, յեթե պանդոկ լիներ։ — բացականչեց դոկտորը հիացմունքով։

Նրանք մոտ գնացին։

Դուրս յեկավ, որ բոլորովին էլ պանդոկ չեր։ Մի քանի տներից առանձին, ամայի տարածության վրա, կանգնել եր անիվավոր մի տուն։ Լույսի նեղ շերտը դուրս յեկավ այդ տան վոչ ամուր փակած դռան ճեղքը։

Կառապանն իջավ իր նստելատեղից և գնաց հետախուզության։ Դոկտորը, մոռանալով պատուհանների մասին, զվարճանում եր տապակած հոտով։ Նրա բերանի ջուրը գնում եր, նա ֆսֆսում եր, քթով սուլում եր և աչքերն եր կկոցում։

— Նախ և առաջ յես վախենում եմ շներից, — բղավեց կառապանը խավարի միջից։ — Յերկրորդ, այստեղ ինչ վոր աստիճաններ կան...

Ամեն ինչ լավ անցավ։ Կառապանն աստիճաններով հասավ դռներին և թակեց։

— Ո՞վ է։

Լույսի նեղ շերտը վերածվեց լայն, պայծառ քառակուսու։ Դուռը բացվեց։ Շեմքի վրա կանգնեց մի մարդ։ Դատարկ շրջապատի խավարի մեջ, այդ պայծառ-լուսավորված ֆոնի վրա նա տափակ եր թվում, սև թղթից կտրված։

Կառապանը պատասխանեց դոկտորի փոխարեն.

— Այդ դոկտոր Գասպար Արներին է։ Իսկ դուք ովքեր եք։ Այս ո՞ւմ տունն է անիվների վրա։

— Այստեղ Բրիզակ պապի բալագանն է, — պատասխանեց չինական ստվերը շեմքի վրայից։ Նա չգիտես ինչու ուրախացավ, հուզվեց, ձեռները շարժելով։ — Համեցեք, պարոնայք, համեցեք։ Մենք չափազանց գոհ ենք, որ դոկտոր Գասպար Արներին այցելում է Բրիզակ պապի բալագանը։

Յերջանիկ վերջավորություն։ Վերջ գիշերային թափառումներին։ Կեցցե Բրիզակ պապի բալագանը։

Յեվ դոկտորը, և կառապանը, և ձին, գոան ապաստարան, ընթրիք, հանգիստ։ Անիվավոր տունը դուրս յեկավ

հյուրընկալ տուն։ Նրանում ապրում էր Բրիդակ պապիի թափառաշրջիկ դերասանախումբը։

Ո՞վ չէր լսել այդ անունը։ Ո՞վ չգիտեր Բրիդակ պապիի բալագանի մասին։ Կլոր տարին, բալագանը սարքում էր իր ներկայացումներն առևտրական հրապարակների վրա, տոն օրերին և տոնավաճառներին։ Ինչպիսի՜ հմուտ դերասաններ կային այդտեղ։ Ինչքան հետաքրքիր էին նրա ներկայացումները։ Յեվ գլխավորն այն էր, որ այդտեղ, այդ բալագանում, յելույթ էր ունենում լարախաղաց Թիբուլը։

Մենք արդեն գիտենք, որ նա ծածկել էր իրեն՝ յերկրի ամենալավ լարախաղացի փառքով։ Նրա ճարպիկությանն վկաները դարձանք մենք Ասաղի հրապարակում, յերբ պողպատալարով նա անցավ սարսափելի անհատակի վրայով և գվարդիականների գնդակների տարափի տակ։

Ինչքան էր փշաքաղվում հանդիսատեսների մարմինը,— և մեծերի և փոքրերի,—յերբ Թիբուլը յելույթ էր ունենում առևտրական հրապարակներում։ Այնպես սրտագին էին ծափահարում նրան և խանութպանները, և մուրացիկ պառավները, և դպրոցականները, և զինվորները, և բոլորը, բոլորը։։։ Այժմ, ի դեպ, խանութպանները ու ֆրանսերն ափսոսում էին իրենց նախկին հիացմունքի համար։

— Մենք նրան ծափահարում էինք, իսկ նա կռվում է մեր դեմ։։։

Բրիդակ պապիի բալագանը վորբացել էր։ Մարդիկ Թիբուլը թողել էր նրան։

Դոկտոր Գասպարը վոչինչ չասավ այն մասին, թե ինչ է տեղի ունեցել Թիբուլի հետ։ Նա լռեց նաև թագաժառանգ Տութթիի տիկնիկի մասին։

Ի՞նչ տեսավ դոկտորը բալագանում, անիվավոր տան ներսում։

Նրան նստեցրին թուրքական մեծ թմբուկի վրա, վոր զարդարված էր վառ կարմիր յեռանկյունիներով և վոսկելարով, վոր գործված էր ցանցի պես։ Տունը, վոր սարքված էր վագոնի պես, բաղկացած էր մի քանի բնակատեղերից, քաթանե միջնորմերով իրարից բաժանված։

Ուշ ժամ էր։ Բալագանի բնակչությունը քնած էր։ Մարդը, վոր բաց էր արել դուռը և թվացել էր չինական սովեր, վոչ այլ վոք էր, քան ծեր խեղկատակը։ Նրան անվանում էին Ավգուստ։ Նա այդ գիշեր հերթապահ էր։ Յերբ դոկտորը մոտեցավ բալագանին, նա իր համար ընթրիք էր պատրաստում։ Իրոք վոր, դա վոչխարի միս էր՝ սոխով։

Դոկտորը նստել էր թմբուկի վրա և զննում էր բնակարանը։ Արկղի վրա վառվում էր նավթի լապտերը։ Պատերի վրա կախված էին ողակներ, փաթաթված ծխախոտի տերի վրա կախված էին ողակներ, փաթաթված ծխախոտի սպիտակ ու վարդագույն թղթով, յերկար, շերտավոր մրասպիտակ ու վարդագույն թղթով, յերկար, շերտավոր մրաբակներ փայլուն մետաղե կոթերով, կասայումներ, վոսկեգույն ողակներով զարդարված, ծաղիկներով, աստղերով գույն ողակներով զարդարված, ծաղիկներով, աստղերով նաշխված, բազմագույն քուրջեր։ Այնտեղ էլ, պատի վրայից, նայում էին դիմակները։

Մի քանիսի վրա ցցված էին պոզեր, մյուսների քիթը հիշեցնում էր թուրքական կիսակոշիկ։ Յերբորդների բերանն ականջից ականջ էր։ Մի դիմակ տարբերվում էր իր վիթխարի ականջներով։ Ամենածիծաղելին այն էր, վոր ականջները մարդկային էին, միայն թե, շատ մեծ։

Անկյունում, վանդակի մեջ, նստել էր մի անհատականալի դազան։ Պատերից մեկի մոտ կանգնել էր փայտե

յերկար սեղանը։ Նրա վերևում կախված էին փոքրիկ հայելիներ։ Տաս հատ։ Յուրաքանչյուր հայելու մոտ կար մի մոմ, իր սեփական հյութով սեղանին ամրացված։ Մոմերը չէին վառվում։ Սեղանի վրա թափթփված էին տուփիկներ, վրձնիկներ, ներկեր, աղվամազափնջեր, կեղծամեր, ընկած եր վարդագույն պուդրա, չորանում էին բազմագույն լաքեր։

— Մենք այսոր ծլկվել ենք գվարդիականներից, — խոսեց խեղկատակը։ — Դուք գիտեք, — մարդիկ Թիբուլը մեր դերասանն եր։ Գվարդիականներն ուզում էին մեզ բռնել, նրանք կարծում են, վոր մենք թաղցրել ենք նրան։

Ծեր խեղկատակը թվում եր չափազանց վշտահար։

— Իսկ մենք ինքներս չգիտենք, թե ուր է մարդիկ Թիբուլը։ Նրան, ինչպես յերևում է, սպանել են կամ յերկաթե վանդակ են նստացրել։

Խեղկատակը հառաչեց և որորեց ալեհեր գլուխը։ Դազանը վանդակում, նայում եր դոկտորին կատվային աչքերով։

— Ափսոս, վոր դուք այսքան ուշ յեկաք մեզ մոտ, — խոսեց խեղկատակը։ — Մենք ձեզ շատ ենք սիրում։ Դուք կհանգստացնեյիք մեզ։ Մենք գիտենք, վոր դուք անոթևանների բարեկամն եք, ժողովրդի բարեկամը։ Յես ձեզ կհիշեցնեմ մի դեպք։ Մենք ներկայացում էինք տալիս Յեզան Լյարդի շուկայում։ Այդ անցյալ տարի գարնանն եր։ Իմ աղջիկս յերգ եր ասում...

— Այդպես... այդպես... — հիշեց դոկտորը։ Հանկարծ նա զգաց տարորինակ հուզմունք։

— Հիշում եք։ Դուք այն ժամանակ շուկայումն էիք։ Դուք գիտում էիք մեր ներկայացումը... Իմ աղջիկս յերգ



եր յերդում կարկանդակի մասին, վորը նախընտրել եր ավելի շուտ վառվել վառարանում, քան թե ընկնել հարուստ պալատականի ստամոքսը։։։

— Այո։։։ այո։։։ հիշում եմ։։։ շարունակեցեք։

— Մի հայտնի կին, պառավ, լսեց այդ և վիրավորվեց։ Նա հրամայեց իր մեծաքիթ ծառաներին, քաշել իմ աղջկա ականջներից։

— Այո։ Յես հիշում եմ։ Յես մեջ խառնվեցի։ Յես վռնդեցի ծառաներին։ Կինը ճանաչեց ինձ և ամաչեց։ Ճիշտ է։

— Այո։ Հետո դուք գնացիք, իսկ իմ աղջիկս ասաց, վոր յեթե հայտնի պառավի ծառաներն իր ականջներից քաշեին, ապա ինքը չեր կարող կենդանի մնալ։։։ Դուք նրան փրկեցիք։։։ Նա այդ բանը յերբեք չի մոռանա։

— Իսկ վո՞րտեղ է այժմ ձեր աղջիկը, — հարցրեց դոկտորը։ Նա շատ եր հուզվում։

Այդ ժամանակ ծեր խեղկատակը մոտեցավ քաթանե միջնորմին և կանչեց։ Նա ասաց մի տարորինակ անուն, արտասանեց յերկու հնչյուն, կարծես բաց արեց փայտե կլոր, փոքրիկ արկղիկ, վորը դժար է բացվում։

— Սուոկ։

Անցավ մի քանի վայրկյան։ Հետո քաթանե վարագույրը բարձրացավ։

Յեվ այդտեղից նայեց աղջիկը, մի փոքր թեքելով իր խճճված խոպոպներով գլուխը։ Նա նայում եր դոկտորին մոխրագույն աչքերով, մի քիչ նեբքևից, ուշադիր և խորամանկ։

Դոկտորն աչքերը բարձրացրեց և թալկացավ։ Դա թագաժառանգ Տութթիի տիկնիկն եր։



եր յերգում կարկանդակի մասին, վորը նախընտրել եր ավելի շուտ վառվել վառարանում, քան թե ընկնել հարուստ պալատականի ստամոքսը։։։

— Այո։։։ այո։։։ հիշում եմ։։։ շարունակեցեք։

— Մի հայտնի կին, պառավ, լսեց այդ և վիրավորվեց։ Նա հրամայեց իր մեծաքիթ ծառաներին, քաշել իմ աղջկա ականջներից։

— Այո։ Յես հիշում եմ։ Յես մեջ խառնվեցի։ Յես վռնդեցի ծառաներին։ Կինը ճանաչեց ինձ և ամաչեց։ Ճիշտ է։

— Այո։ Հետո դուք գնացիք, իսկ իմ աղջիկս ասաց, վոր յեթե հայտնի պառավի ծառաներն իր ականջներից քաշեին, ապա ինքը չեր կարող կենդանի մնալ։։։ Դուք նրան փրկեցիք։։։ Նա այդ բանը յերբեք չի մոռանա։

— Իսկ վո՞րտեղ է այժմ ձեր աղջիկը, — հարցրեց դոկտորը։ Նա շատ եր հուզվում։

Այդ ժամանակ ծեր խեղկատակը մոտեցավ քաթանե միջնորմին և կանչեց։ Նա ասաց մի տարորինակ անուն, արտասանեց յերկու հնչյուն, կարծես բաց արեց փայտե կլոր, փոքրիկ արկղիկ, վորը դժար է բացվում։

— Սուոկ։

Անցավ մի քանի վայրկյան։ Հետո քաթանե վարագույրը բարձրացավ։

Յեվ այդտեղից նայեց աղջիկը, մի փոքր թեքելով իր խճճված խոպոպներով գլուխը։ Նա նայում եր դոկտորին մոխրագույն աչքերով, մի քիչ ներքևից, ուշադիր և խորամանկ։

Դոկտորն աչքերը բարձրացրեց և թալկացավ։ Դա թագաժառանգ Տութթիի տիկնիկն եր։

ՄԱՍՆ ՅԵՐՐՈՐԴ

ՍՈՒՈԿ

ԳԼՈՒԽ 8

ՓՈՔՐԻԿ ԴԵՐԱՍԱՆՈՒՀՈՒ ԴԺՎԱՐ ԴԵՐԸ

Այո, այդ նա յեր։

Բայց, սատանան տանի, վո՞րտեղից նա հայտնվեց։ Հրաշք։ Ի՞նչ հրաշք։ Դոկտոր Գասպարը հիանալի կերպով գիտեր, վոր հրաշք չկա։ Այդ,— մտածեց նա,— պարզապես խաբեություն է։ Տիկնիկը կենդանի յեր, և յերբ վոր ինքն անզգուշություն ունեցավ քնելու կառքում, նա փախավ, ինչպես անհնազանդ աղջիկ։

— Կարիք չկա այդպես ժպտալու։ Ձեր քծնող ժպիտը ձեր հանցանքը չի թեթևացնում,— ասաց նա խիստ կերպով։— Ինչպես տեսնում եք, բախտը ձեզ պատժեց։ Միանգամայն պատահաբար յես ձեզ գտա այնտեղ, ուր ձեզ գտնելը թվում եր անհնար։

Տիկնիկն աչքերը չռեց։ Հետո նա աչքերը թարթեց ինչպես փոքրիկ ճագար և սկսեց մոլորված նայել խեղկատակ Ավգուստի կողմը։ Նա հառաչեց։

— Ո՞վ ես դու, պատասխանիր պարզ։

Դոկտորն իր ձայնին տվեց հնարավոր խստությունը։ Բայց տիկնիկը նայում եր այնպես գրավիչ, վոր բարկանալը չափազանց դժվար եր։

— Ահա տեսնում եք,— ասաց նա։— Դուք ինձ մոռացել եք։ Յես Սուսոն եմ։

— Սու... ոկ, — կրկնեց դոկտորը։ — Բայց ախր դուք թագաժառանգ Տութթիի տիկնիկն եք։

— Ի՞նչ տիկնիկ։ Ցեռ սովորական աղջիկ եմ...

— Ի՞նչ... Դուք ձևացնում եք...

Տիկնիկը դուրս յեկավ մինչնորմի յետևից։ Լապտերը վառ լուսավորում եր նրան։ Նա ժպտում եր, մի կողմ թեքելով իր խճճված գլուխը։ Նրա մազերն այն գույնի եյին, ինչպես փոքրիկ, մոխրագույն թռչնիկների փետուրները։

Թավամազ դաղանը վանդակի միջից նայում եր նրան չափազանց ուշադիր։

Դոկտոր Գասպարը լիակատար տարակուսանքի մեջ եր։ Վորոշ ժամանակ հետո ընթերցողը կիմանա ամբողջ գաղտնիքը։ Բայց այժմ մենք ուզում ենք նախազգուշացնել ընթերցողին մի չափազանց կարևոր հանգամանքի մասին, վորը վրիպել եր դոկտոր Գասպար Արներիի ուշադիր հայացքից։ Մարդը, հուզմունքի բոպեյին, յերբեմն չի նկատում այնպիսի հանգամանքներ, վորոնք, ինչպես մեծերն են ասում, աչքի յեն խփում։

Ցեվ ահա այդ հանգամանքն այն եր, վոր այժմ, բալագանում, տիկնիկն ստացել եր բոլորովին ուրիշ տեսք։

Նրա մոխրագույն աչքերն ուրախ փայլում եյին։ Այժմ նա թվում եր լուրջ և ուշադիր, բայց նրա վշտից հետք անգամ չեր մնացել։ Ընդհակառակը, — դուք կարող եյիք ասել, վոր դա մի չարաճճի յե, վորը համեստ ե ձևանում։

Հետո, — շարունակենք։ Ո՞ւր եյին անհետացել նրա նախկին փառահեղ զգեստները, ամբողջ այն վարդագույն մետաքսը, վոսկե վարդերը, ժանյակները, մետաղազարդերը, հեքիաթային հագուստը, վորից յուրաքանչյուր աղջիկ կարող ե նմանվել յեթե վոչ արքայադուստրի, ապա համենայն դեպս տոնածառի խաղալիքի։ Այժմ, պատկերացրեք ձեզ, վոր տիկնիկը հագնված եր ավելի քան համեստ։ Բլուզ՝ նավաստու կապույտ ռձիքով, հնամաշ կիսակոշիկներ, վորոնք բավական մոխրագույն եյին, սպիտակ չլինելու համար։ Կիսակոշիկները հագնված եյին մերկ վոտներին։ Միք կարծի, վոր այդ հասարակ հագուստից տիկնիկը դառնում եր տգեղ։ Ընդհակառակը։ Դա նրան սազում եր։ Լինում են այդպիսի մանրամասնություններ։ Սկզբում դրանց վրա հայացք չես ուզում գցել, իսկ հետո, ավելի ուշադիր նայելով, տեսնում ես, վոր այդպիսի չարաճճին արքայադուստրից ավելի սիրելի յե, մանավանդ վոր, կամ արքայադուստրերը փոխարկվում են գորտերի, կամ, ընդհակառակը, գորտերն են փոխարկվում արքայադուստրերի։

Բայց ահա ամենագլխավորը։ — դուք հիշում եք, — թագաժառանգ Տութթիի տիկնիկի կրծքի վրա կային սարսափելի սև վերքեր։ Իսկ այժմ նրանք անհետացել եյին։

Դա ուրախ, առողջ տիկնիկ եր։

Բայց դոկտոր Գասպարը վոչինչ չնկատեց։ Գուցե, արդեն հետևյալ բոպեյին նա կվորոշեր, թե ինչումն ե բանը, ճիշտ հենց հետևյալ բոպեյին։ Ինչ վոր մեկը դուռը թակեց։ Այստեղ գործն ավելի խճճվեց։ Բալագան մտավ ներքը։

Տիկնիկն աղաղակեց։ Գազանը վանդակի մեջ փռնչացրեց, թեև կատու չեր, այլ մի ինչ վոր բարդ կենդանի։

Մենք արդեն գիտենք, թե ով ե ներքը։ Այդ գիտեր նաև դոկտոր Գասպարը, այդ ներքին հնարելով ամենասովորական Թիբուլից։ Բայց ուրիշ վոչ մեկը գաղտնիքը չգիտեր։

Մոլորանքը տևեց հինգ րոպե։ Նեգրն իրեն պահում էր ամենասարսափելի ձևով։ Նա խլեց տիկնիկին, բարձրացրեց նրան ոդի մեջ և սկսեց համբուրել այտերն ու քիթը, ընդ որում, այդ քիթն ու այտերը փոփոխվում էին այնպես յեռանդագին կերպով, որ համբուրող նեգրին կարելի յեր համեմատել մի մարդու հետ, որն ուզում է կծել թելից կախված խնձորը։

Ծեր Ավգուստն աչքերը փակեց և սարսափից սառչելով, ճոճվում էր չինական թագավորի պես, որը հետևյալ հարցն էր վճռում՝—կորի՞լ դերու գլուխը, թե՞ հարկադրել նրան՝ ուտելու մի կենդանի առնետ՝ առանց շաքարի։

Կիսակոշիկը թռավ տիկնիկի վոտքից և ընկավ լապտերի վրա։ Լապտերը շուռ յեկավ ու շունչը փչեց։ Դարձավ մութը։ Սարսափը հասավ իր գագաթնակետին։ Այն ժամանակ բոլորը տեսան, որ սկսվում էր արշալույսը։ Ճեղքերը լուսավորվեցին։

— Ահա արդեն արշալույս է,—ասաց դոկտոր Գասպարը,—և յես պետք է գնամ Յերեք հասալիկների պալատը, թագաժառանգ Տուլթիի տիկնիկի հետ միասին։

Նեգրը դուռը հրեց։ Գորշ լույսը փողոցից մտավ ընակարան։ Խեղկատակը նստել էր առաջվա պես և նրա աչքերը փակ էին։ Տիկնիկը թաղնվել էր միջնորմի յետևում։

Դոկտոր Գասպարն շտապ բացատրեց Թիբուլին, թե ինչումն է բանը։ Նա պատմեց ողջ պատմությունը թագաժառանգ Տուլթիի տիկնիկի մասին, այն մասին, թե ինչպես նա անհետացել էր և ինչպես այժմ բախտավոր կերպով գտնվել էր այստեղ, բալադանում։

Տիկնիկը լսում էր միջնորմի յետևում և վոչինչ չէր հասկանում։

«Նա նրան անվանում է Թիբուլ,—զարմանում էր նա։ Ի՞նչ Թիբուլ է նա։ Դա սարսափելի նեգր է։ Թիբուլը գեղեցիկ է, սպիտակ է և սև չէ»։։։

Այն ժամանակ, նա դուրս հանեց մի աչքը և նայեց։ Նեգրն իր կարմիր շալվարի գրպանից հանեց յերկարավուն մի սրվակ, բաց արեց, որից սրվակը ճստճստաց ինչպես սարյակ և սկսեց սրվակից իր վրա լցնել ինչ վոր հեղուկ։ Մի վայրկյան հետո տեղի ունեցավ հրաշք։ Նեգրը դարձավ սպիտակ, գեղեցիկ և վոչ սև։ Կասկած չկար նա Թիբուլն էր։

— Ուռա,—բղավեց տիկնիկը և միջնորմի յետևից թռավ ուղիղ Թիբուլի վզի վրա։

Խեղկատակը, որ վոչինչ չէր տեսել և վճռել էր, որ տեղի յեր ունեցել ամենասարսափելին, ընկավ այնտեղից, ուր նստել էր և մնաց անշարժ։ Թիբուլը նրան շալվարից վեր բարձրացրեց։

Այժմ տիկնիկն առանց հրավերի համբուրում էր Թիբուլին։

— Այ, հիանալի յես,—ասում էր նա, հիացմունքից շնչակտուր լինելով։—Այդ ինչպես եյիր այդպես սևացել։ Իսկ յես քեզ չճանաչեցի։

— Սուտ,—ասաց Թիբուլը խստորեն։

Նա անմիջապես վար թռավ նրա վիթխարի կրծքի վրայից և կանգնեց նրա դեմ զգաստ, արձիճե ընտիր զինվորից վոչ վատ։

— Ի՞նչ,—հարցրեց նա, ինչպես դպրոցական։

Թիբուլն իր ձեռքը դրեց նրա խճճված գլխի վրա։ Տիկնիկը նայում էր նրան ներքևից, մոխրագույն, յերջանիկ աչքերով։

— Դու լսեցիր, ինչ ասաց դոկտոր Գասպարը։

— Այո։ Նա ասաց այն մասին, որ Ցերեք հասարակները հանձնարարել են իրեն, առողջացնել Թագաժառանգ Տուբթիի տիկնիկին։ Նա ասաց, որ յես՝ այդ տիկնիկն եմ։

— Նա սխալվում է,— հայտնեց Թիբուլը։ — Դոկտոր Գասպարը, սա տիկնիկ չէ, համարձակվում եմ ձեզ հավատիացնել, դա իմ փոքրիկ բարեկամն է, դա աղջիկ է, պարոնուհի Սուոկը, իմ կրկեսային աշխատանքի հավատարիմ ընկերը։

— Ճիշտ է,— ուրախացավ տիկնիկը։ — Ախր յես ու դու շատ անգամ ենք քայլել պողպատալարով։

Նա շատ գոհ եր, որ Թիբուլը նրան անվանեց իր հավատարիմ ընկերը։

— Սիրելիս,— շշնջաց նա և իր յերեսը քսեց Թիբուլի ձեռքին։

— Ի՞նչպես,—հարցրեց դոկտորը։—Մի՞թե նա կենդանի աղջիկ է։ Դուք ասում եք՝ Սուոկ։։։ Այո, այո, իսկապես որ։ Ցեռ այժմ պարզ տեսնում եմ։ Ցեռ հիշում եմ։։։ Ախր յես մի անգամ տեսել եմ այս աղջկան, այո։։։ այո։։։ Ախր նրան ազատեցի պառավի ծառաներից, որոնք ուզում եյին փայտերով ծեծել։

Այդտեղ, դոկտորը նույնիսկ ձեռքերն իրար խփեց։

— Հա՜-հա՜-հա՜, դե հա, ի հարկե։ Այդ պատճառով ել ինձ այնպես ծանոթ եր թվում Թագաժառանգ Տուբթիի տիկնիկի դեմքը։ Դա պարզապես զարմանալի նմանություն է, կամ, ինչպես ասվում է գիտության մեջ՝ ֆենոմեն։

Ամեն ինչ պարզվեց, ընդհանուր բավականություն պատճառելով։ Հետզհետե ավելի և ավելի լուսանում եր։ Գավիթում կանչեց աքաղաղը։

Ցեվ այստեղ, դոկտորը նորից տխրեց։

— Այո, այս ամենը հիանալի յե։ Բայց դա նշանակում է, որ Թագաժառանգ Տուբթիի տիկնիկն ինձ մոտ չէ, դա նշանակում է, որ յես իրոք, կորցրել եմ նրան։։։

— Այդ նշանակում է, որ դուք գտաք նրան,— ասաց Թիբուլը, աղջկան սեղմելով դեպի իրեն։

— Ի՞նչպես։։։

— Այնպես։ Դու ինձ հասկանում ես, Սուոկ։

— Ինձ թվում է,— կամացուկ պատասխանեց Սուոկը։

— Դե՛,— հարցրեց Թիբուլը։

— Ի հարկե,— ասաց տիկնիկը և ժպտաց։

Դոկտորը վոչինչ չեր հասկանում։

— Լսում եյիր դու ինձ, յերբ յես ու դու կիրակի որերն ամբոխի առաջ ներկայացումներ եյինք տալիս։ Դու կանգնում եյիր շերտավոր կամրջակի վրա։ Ցեռ ասում եյի՝ «ալլե» և դու իջնում եյիր պողպատալարի վրա և գալիս եյիր դեպի ինձ։ Ցեռ քեզ սպասում եյի կենտրոնում, շատ բարձր, ամբոխի վերևում։ Ցեռ մեկնում եյի մի ծունկս և նորից ասում եյի քեզ՝ «ալլե» և դու, կանգնելով իմ ծնկան վրա, բարձրանում եյիր իմ ուսին։։։ Դու չեյիր սարսափում։

— Վոչ։ Դու ասում եյիր ինձ՝ «ալլե», նշանակում է՝ պետք է հանգիստ լինել և վոչնչից չվախենալ։

— Դե այդպես,— ասաց Թիբուլը։ — Այժմ յես նորից քեզ ասում եմ՝ «ալլե»։ Դու կդառնաս տիկնիկ։

— Ցեռ կդառնամ տիկնիկ։

— Նա կդառնա տիկնիկ,— հարցրեց դոկտոր Գասպարը։ — Այդ ի՞նչ է նշանակում։

Հուսով եմ, ընթերցող, որ դուք հասկացաք։ Դուք չեյիք կրել այնքան հուզմունքներ ու զարմանքներ, ինչ-

քան դոկտոր Գասպարը, դրա համար էլ դուք ավելի հանգիստ եք և շուտ գլխի կընկնեք։

Մտածեցեք։ — ախր դոկտորը մինչև այժմ ինչպես հարկն է չեր քնել։ Ցավ այդպես, պետք է զարմանալ նրա ամուր կազմվածքի համար։

Դեռ յերկրորդ աքաղաղը չեր արթնացել, յերբ ամեն ինչ վորոշված եր։ Թիբուլը զարգացրեց գործողության մի մանրամասն ծրագիր։

— Դու, Սուոկ, դերասանուհի յես։ Յես կարծում եմ, վոր չնայած քո տարիքին, դու շատ լավ դերասանուհի յես։ Յերբ գարնանը մեր բալագանում գնում եր «Հիմար Արքա» մելոդրամը, դու հիանալի խաղում եյիր վոսկե կաղամբացողունի դերը։ Հետո, բալետում դու ձևանում եյիր անդրադարձ տիպ պատկեր և հիանալի պատկերացնում եյիր ջրաղացպանի վերածվելը թեյամանի։ Դու պարում ես ամենից լավ և ամենից լավ յերգում ես, դու ունես լավ յերևակայություն, և, գլխավորը, դու համարձակ և գլխի ընկնող աղջիկ ես։

Սուոկը կանգնել եր, յերջանկությունից կարմրելով։ Նա նույնիսկ իրեն անհարմար եր զգում այդ գովեստներից։

— Ցավ այսպես, դու պետք է խաղաս թագաժառանգ Տութթիի տիկնիկի դերը։

Սուոկը ծափ զարկեց և հերթով համբուրեց բոլորին։— Թիբուլին, ծեր Ավգուստին և դոկտոր Գասպարին։

— Կաց, — շարունակեց Թիբուլը, — այդ ամբողջը չե։ Դու գիտես։ — զինագործ Պրոսպերոն նստած է յերկաթե վանդակում, Յերեք հաստլիկների պալատում։ Դու պետք է ազատես զինագործ Պրոսպերոյին։

— Բաց անեմ վանդակը։

— Այո։ Յես գիտեմ մի գաղտնիք, վորը հնարավորություն կտա Պրոսպերոյին՝ փախչել պալատից։

— Գաղտնիք։

— Այո։ Այնտեղ կա ստորերկրյա անցք։

Այստեղ Թիբուլը պատմեց մանկական ոդապարիկներ ծախողի մասին։

— Այդ անցքի սկիզբը գտնվում է ինչ վոր տեղում, կաթսայի մեջ, — ըստ յերևույթին, պալատի խոհանոցում։ Դու կգտնես այդ անցքը։

— Լավ։

Արևը դեռ չեր ծագել, բայց արդեն արթնացել եյին թռչունները։ Կանաչել եր կանաչը մարգագետնի վրա, վորը յերևում եր բալագանի դռներից։

Լույսով, վանդակի հանելուկային գաղտնը դուրս յեկավ սովորական աղվես։

Ժամանակ չկորցնենք։ Յերկար ճանապարհ կա։

Դոկտոր Գասպարն ասաց։

— Այժմ դուք պետք է ընտրեք ձեր զգեստներից ամենագեղեցիկը։

Սուոկը բերեց իր բոլոր հագուստները։ Նրանք հիանալի եյին, վորովհետև դրանք հնարել եր ինքը Սուոկը։ Ինչպես ամեն մի դերասանուհի, նա ևս աչքի յեր ընկնում իր լավ ճաշակով։

Դոկտոր Գասպարը յերկար քչփորեց բազմազույն շորակույտը։

— Ի՞նչ կա վոր, — ասաց նա։ — Յես կարծում եմ, վոր այս հագուստը միանգամայն հարմար է։ Սա վոչնչով վատ չե նրանից, վորը կար խեղանդամված տիկնիկի վրա։ Հագեք։

Սուոկն զգեստները փոխեց։ Ծագող արևի ճառագայթների մեջ կանգնել էր նա բալագանի մեջտեղում, այնպիսի արդուզարդված տեսքով, որ, կարելի է ասել, որ վոչ մի աղջիկ իր անվանակոչության տոնին նույնիսկ, չէր կարող նրա հետ վոտ մեկնել։ Հագուստը վարդագույն էր։ Իսկ յերբեմն, յերբ Սուոկն անում էր վորևե շարժում, թվում էր, թե վոսկե անձրև է գալիս։ Զգեստը կայծկլտում էր, խշխշում և քաղցը բուրում։

— Յես պատրաստ եմ, — ասաց Սուոկը։

Հրաժեշտը տևեց մի րոպե։ Կրկեսում ներկայացում տվող մարդիկ արցունք չեն սիրում։ Նրանք շատ հաճախ են վտանգի յենթարկում իրենց կյանքը։ Բացի դրանից, չէր կարելի չափազանց տաք դրկախառնվել, վորպեսզի զգեստը չփչանար։

— Վերադարձեք վորքան կարելի է շուտ, — այդպես ասած ծեր Ավգուստն ու հառաչեց։

— Իսկ յես գնում եմ բանվորական թաղամասերը։ Մենք պետք է կատարենք մեր ուժերի հաշվառումը։ Ինձ սպասում են բանվորները։ Նրանք լմացել են, վոր յես կենդանի յեմ և ազատության մեջ։

Թիբուլը փաթաթվեց թիկնոցի մեջ, հագավ լայն գլխարկը, մութ ակնոցները և մեծ, արհեստական քիթը, վորը պատկանում էր «Արշավանք դեպի Դահիրե» ճնշախաղի փաշային։

Այդ տեսքով նրան չէր կարելի ճանաչել։ Ճիշտ է, վիթխարի քիթը նրան դարձնում էր այլանդակ, բայց հենց դրա համար էլ՝ անճանաչելի։

Ծեր Ավգուստը կանգնել էր շեմքի վրա։ Դոկտորը, Թիբուլն ու Սուոկը դուրս յելան բալագանից։ Ոբը մտել էր իր իրավունքների մեջ։

— Շուտ, շուտ, — շտապեցնում էր դոկտորը։

Մի րոպե հետո, նա արդեն կառք էր նստել։ Սուոկի հետ միասին։

— Դուք չե՞ք վախենում, — հարցրեց դոկտորը։

Սուոկը, պատասխանի փոխարեն ժպտաց։ Դոկտորը համբուրեց նրա ճակատը։

Փողոցները դեռ դատարկ եյին։ Մարդկային ձայները լսվում եյին սակավ։ Բայց հանկարծ լսվեց շան բարձր հաչոց։ Հետո շունը փնգոտաց ու բղավեց, կարծես նրանից վոսկոր խլեցին։

Դոկտորը կառքից դուրս նայեց։

Պատկերացրեք, դա հենց նույն շունն էր, վորը կծել էր ըմբիշ Լափիթուփին։ Բայց դա դեռ բավական չե։

Դոկտորը տեսավ հետևյալը։ Շունը կռվում էր մարդու հետ։ Յերկար և բարակ մի մարդ փոքրիկ գլխով, գեղեցիկ, բայց տարորինակ կոստյումով, ճպուռի նման, շանից խլում էր մի ինչ վոր վարդագույն և անհասկանալի բան։ Վարդագույն ծվենները ցրվում եյին չորս կողմը։

Մարդը հաղթեց։ Նա խլեց վորսը, և, սեղմելով նրան իր կրծքին, վազեց ուղիղ դեպի այն կողմը, վորտեղից գալիս էր դոկտորը։

Յեվ յերբ նա հանդիպեց կառքի հետ, Սուոկը, վոր նայում էր դոկտորի մեջքի յետևից, տեսավ ինչ վոր սարսափելի բան։ Տարորինակ մարդը չէր վազում, այլ քայլում էր վայելուչ ցատկռտոցով, հազիվ հպվելով գետնին, բալետային պարողի նման։ Նրա ֆրակի կանաչ փեշերը թռչում եյին նրա յետևից, ինչպես քամաղացի թևերը։ Իսկ ձեռքերի վրա... ձեռքերի վրա նա բռնել էր մի աղջկա, կրծքին սև վերքեր։

— Այդ յես եմ, — բղավեց Սուոկը։ Նա յետ նետվեց կառքի խորքը և յերեսը թաղցրեց թավիշե բարձի մեջ։

Լսելով ճիչը, հափշտակիչը յետ նայեց, և այժմ, դոկտոր Գասպարը ճանաչեց պարերի դասատու Մինյերկուլյեռին։

ԳԼՈՒԽ 9

ԼԱՎ ԱԽՈՐԺԱԿԻ ՏԵՐ ՏԻԿՆԻԿԸ

Թագաժառանգ Տուբթին կանգնել եր տերբասի վրա։ Աշխարհագրության ուսուցիչը հեռադիտակով նայում եր։ Թագաժառանգ Տուբթին պահանջեց, որ բերեն կողմնացույցը։ Բայց դա ավելորդ եր։

Թագաժառանգ Տուբթին սպասում եր տիկնիկի գալուն։

Ուժեղ հուզմունքից նա ամուր ու քաղցր քնել եր վողջ գիշերը։

Տերբասից յերևում եր քաղաքի դարբասներից դեպի պալատը ձգվող ճանապարհը։ Արևը, որ բարձրացել եր քաղաքի վրա, խանգարում եր դիտել։ Թագաժառանգը ձեռքն աչքերին հովանի արած, կնճռոտում եր դեմքը և ափսոսում այն բանի համար, որ չի կարելի փոշտալ։

— Դեռ վոչ վոք չի յերևում, — ասաց աշխարհագրության ուսուցիչը։

Նրան եյին հանձնարարել այդ պատասխանատու գործը, որովհետև նա, ըստ իր մասնագիտության, ամենից ավելի լավ գիտեր գլուխ հանել տարածություններից, հորիզոններից, շարժվող կետերից և նման այլ բաներից։

— Իսկ դուցե յերևում է, — պնդեց Տուբթին։

— Մի՞ք վիճի ինձ հետ։ Բացի հեռադիտակից, յես ունեմ գիտություն և ճիշտ պատկերացում առարկաների

մասին։ Ահա յես տեսնում եմ հասմիկի թուփը, վորը լատիներեն լեզվով ունի շատ գեղեցիկ, բայց դժվար հիշվող անուն, հետո յես տեսնում եմ կամուրջներ և գվարդիականներ, վորոնց շուրջը թռչկոտում են թիթեռներ, իսկ այնուհետև, փռված է ճանապարհը։։։ Թուլ տվեք, թուլ տվեք։

Նա հեռադիտակը վոլորեց։ Թագաժառանգ Տութթին կանգնեց վոտների ծայրերի վրա։

Նրա սիրտը խփում եր նեբքևից վերև, կարծես նա դասը չեր սովորել։

— Այո, — ասաց ուսուցիչը։

Յեվ այդ ժամանակ յերեք ձիավորներ պալատի ծառաստանի կողմից ուղևորվեցին դեպի ճանապարհը։ Դա կապիտան Բոնավենտուրան եր պահակների հետ, վոր սլանում եր ճանապարհի վրա յերևացած կառքին դիմավորելու համար։

— Ուռա, — բղավեց ձիավորն այնպիսի սուր ձայնով, վոր հեռավոր գյուղերում սագերն արձագանքեցին նրան։ Ներքևում, տերրասի տակ, մարդանքի ուսուցիչը կանգնել եր պատրաստ, վորպեսզի ոդի մեջ բռնի թռչող թագաժառանգին, յեթե նա ուրախությունից վոր գլորվի տերրասի քարե ցանկապատից։

Յեվ այսպես, դոկտոր Գասպարի կառքը գլորվում եր դեպի պալատ։ Արդեն հարկավոր չեյին աշխարհագրության ուսուցչի հեռադիտակն ու գիտական տեղեկությունները։ Արդեն բոլորը տեսնում եյին կառքն ու սպիտակ ձին։

Յերջանիկ վայրկյան։ Կառքը կանգ առավ վերջին կամուրջի մոտ։ Գվարդիականների պահակախումբը ճանապարհ տվեց։ Թագաժառանգը ճոճում եր յերկու ձեռքերը և վեր վեր ցատկում, վոսկի մազերը ցնցելով։ Յեվ վերջապես նա տեսավ ամենագլխավորը։ Մի փոքրիկ մարդ, անճկուն, ծերուկավարի շարժվելով, դուրս յելավ կառքից։ Գվարդիականները հարգանքով սուսերները բռնած և պատիվ տալով՝ կանգնել եյին մի քիչ հեռու։ Փոքրիկ մարդը հանեց կառքից հիանալի տիկնիկը, կարծես վարդագույն ծաղկեփունջ ժապավեններով զարդարված։

Դա հափշտակող պատկեր եր առավոտվա կապույտ յերկնքի տակ, կանաչի և արևի փայլի մեջ։

Մի բոպե հետո, տիկնիկն արդեն պալատումն եր։ Հանդիպումը տեղի ունեցավ հետևյալ կերպ։

Տիկնիկը քայլում եր առանց կողմնակի ոգնության։

Ո, Սուոկը հիանալի խաղում եր իր դերը։ Յեթե նա ընկներ ամենախիստական տիկնիկների հասարակության մեջ, ապա, առանց վորևե կասկածի, նրանք նրան պիտի դնեյին հենց իրենց պես մի տիկնիկի տեղ։

Նա հանդիստ եր։ Նա զգում եր, վոր դերն իրեն հաջողվում է։

«Լինում են ավելի դժվար բաներ, — մտածում եր նա, — որինակ, ժանդյորություն անել վառված լապտերով, կամ անել կրկնակի մահվան ոդակ»։։։

Իսկ Սուոկը կրկեսում կատարել եր և մեկը, և մյուսը։

Մի խոսքով, Սուոկը չեր վախենում։ Նրան նույնիսկ դուր եր գալիս այդ խաղը։ Ավելի շատ հուզվում եր դոկտոր Գասպարը։ Նա գնում եր Սուոկի յետևից։ Սուոկը քայլում եր փոքրիկ քայլերով, պարոդուհու նման, վորը գնում է մատների ծայրերի վրա։ Սուոկի զգեստները շարժվում եյին, դողդողում ու խշխշում։

Պարկեշները փայլում եյին։

Սուրկն արտացոլվում էր նրանց մեջ վարդագույն ամպի պես։ Նա չափազանց փոքր էր բարձր դահլիճների միջև, որոնք ավելի էին մեծանում, լայնանում ու խորանում պարկետների փայլից և հայելիներից։

Կարելի էր մտածել, թե դա ծաղկի մի փոքրիկ զամբյուղ է, որ լողում է վիթխարի, հանդարտ ջրերի վրա։

Սուրկը քայլում էր ուրախ և ժպտերես, պահակների մոտով, կաշվե ու յերկաթե մարդկանց մոտով, որոնք նայում էին ինչպես հմայվածներ, անցնում էր պաշտոնյաների մոտով, որոնք ժպտում էին առաջին անգամ իրենց կյանքում։

Նրանք յեռ-յեռ էին գնում նրա հանդեպ, նրան ճանապարհ տալով, կարծես նա այդ պալատի տիրուհին էր, որ անցնում էր իր իրավունքներին։

Դարձավ այնպես լուռ, որ լսվեցին նրա թեթև վոտնաձայները, որոնք ավելի թեթև էին հնչում քան, ընկնող ծաղկաթերթերը։

Իսկ վերևից, լայն սանդուղքներով իջնում էր տիկնիկին ընդառաջ, նրա պես փոքր ու պայծառ՝ թագաժառանգ Տուրթին։

Նրանք միևնույն հասակի էին։

Սուրկը կանգ առավ։

«Ուրեմն ահա նա, թագաժառանգ Տուրթին», — մտածեց նա։

Նրա հանդեպ կանգնած էր մի լղարիկ, չար աղջկա նմանվող տղա, մոխրագույն աչքերով և մի քիչ վշտահար, խճճված գլուխը մի կողմ թեքած։

Սուրկը գիտեր, թե ով է Տուրթին։ Սուրկը գիտեր, թե ովքեր են Յերեք հասակիները։ Նա գիտեր, որ Յերեք

հասալիկները հավաքել էին սոված, աղքատ ժողովրդի ուժերով ձեռք բերված վողջ յերկաթը, վողջ քարածուխը, վողջ հացը։ Նա լավ հիշում եր այն անվանի պառավին, վորն իր լակեյներին լարում եր փոքրիկ Սուոկի վրա։ Նա գիտեր, վոր նրանք բոլորը մի թայֆա յեն։ — Յերեք հասալիկները, անվանի պառավները, ֆրանտները, խանութպանները, գվարդիականները, — բոլոր նրանք, ովքեր զինագործ Պրոսպերոյին յերկաթե վանդակ էին նստացրել և ընկել էին նրա ընկերոջ, մարզիկ Թիբուլի յետևից։

Յերբ Սուոկը գնում եր պալատ, նա մտածում եր, վոր թագաժառանգ Տուբթին նրան պիտի թվա զզվելի, պիտի թվա անվանի պառավի նման ինչվոր բան, միայն թե, մոռի գույնի յերկար ու նուրբ լեզվով, վոր շարունակ դուրս է ցցված։

Բայց վոչ մի զզվանք նա չզգաց։ Ավելի շուտ, նրան հաճելի յեր, վոր տեսնում եր նրան։

Սուոկը նայում եր նրան ուրախ, մոխրագույն աչքերով։

— Այդ դու յես, տիկնիկ, — հարցրեց թագաժառանգ Տուբթին, ձեռը մեկնելով։

— Ի՞նչ անեմ յես, — վախեցավ Սուոկը։ — Մի՞թե տիկնիկները խոսում են։ Ախ, ինձ չնախազգուշացրին... Յես չգիտեմ, թե իրեն ինչպես եր պահում այն տիկնիկը, վորին գվարդիականները սրախողող արեցին»...

Բայց ոգնությյան հասավ դոկտոր Գասպարը։

— Պարոն թագաժառանգ, — ասաց նա հանդիսավոր կերպով։ — Յես առողջացրի ձեր տիկնիկին։ Ինչպես տեսնում եք, յես վոչ միայն վերադարձրի նրա կյանքը, այլև այդ կյանքը դարձրի ավելի հիանալի։ Տիկնիկը, անկասկած, ավելի յե լավացել, հետո, նա ստացել է փառահեղ զգեստ,

և ամենագլխավորը՝ յես սովորեցրի ձեր տիկնիկին խոսել, յերգեր հորինել և պարել։

«Գործելու ժամանակ է» — վճռեց Սուոկը։

Յեվ այստեղ, Բրիգակ պապիկի բալագանի փոքրիկ դերասանուհին ունեցավ առաջին յելույթը նոր բեմի վրա։

Այդ բեմը պալատի գլխավոր դահլիճն եր։ Իսկ հանդիսականները՝ հավաքվեց մի ամբողջ բազմություն։ Նրանք խռնվել եյին բոլոր կողմերում, սանդուղքների բարձրերում, մուտքերում, վերին գալլերեյներում։ Նրանք մտնում եյին կլոր լուսամուտներից, լիքը լցնում եյին պատշգամբները, մագլցում եյին զարդասյունների վրա, վորպեսզի ավելի լավ տեսնեն ու լսեն։

Բազմաթիվ գլուխներ ու մեջքեր, ամենատարբեր գույն ու յերանգի, փաղփաղում եյին արևի պայծառ լույսի մեջ։

Սուոկը տեսնում եր դեմքերի կույտեր, վորոնք նայում եյին նրան, լայն ժպտալով։

Խոհարարներ չռած մատներով, վորոնցից, ինչպես սոսնձահյութը ճյուղերից, հոսում եյին քաղցր, կարմիր հյութեր կամ սրճագույն, ճարպոտ սոուսներ, մինիատուրներ, բազմագույն ասեղնագործ համազգեստներով, կարծես կապիկներ, վոր աքլորների շոր եյին հագել, փոքրիկ — թմբլիկ յերաժիշտներ նեղ ֆրակներով, պալատական կանայք ու տղամարդիկ, սապատավոր բժիշկներ, յերկարաքիթ գիտնականներ, արագաքայլ սուրհանդակներ, սպասավորներ, վոր հագնված եյին մինիատուրներից վոչ վատ։

Ամբողջ այդ մասսան ծեփվել եր այն ամենին, ինչին վոր կարելի յեր ծեփվել։

Յեվ բոլորը լուռ եյին։ Բոլորը, շնչները պահած, նայում եյին փոքրիկ, վարդագույն արարածին, վորը հանդիստ և յերեսնամյա աղջկա մեծ արժանապատվությամբ հանդիպում եր այդ հարյուրավոր հայացքներին։ Նա բոլորովին չեր քաշվում։ Այդ հանդիսատեսները հազիվ թե ավելի խիստ եյին, քան այն հանդիսատեսները հրապարակներում, վորտեղ համարյա ամեն որ ներկայացումներ եր տալիս Սուոկը։ Ո, նրանք չափազանց խիստ հանդիսատեսներ եյին։ — դատարկաշրջիկներ, զինվորներ, դերասաններ, դպրոցականներ, փոքրիկ առևտրականներ։ Նրանցից ևս չեր վախենում Սուոկը։ Իսկ նրանք ասում եյին։ —

«Սուոկն աշխարհի ամենալավ դերասանուհին է»։։։

Յեվ նրա գորգի վրա նետում եյին իրենց վերջին մանր դրամները։ Մինչդեռ, այդ մանր դրամով կարելի յեր գնել յերիկամունքով կարկանդակ, վորը, վորևե գուլբայագործուհու համար փոխարինում եր և՛ նախաճաշին, և՛ ճաշին, և՛ ընթրիքին։

Յեվ ահա Սուոկն սկսեց իսկապես խաղալ իր տիկնիկային դերը։

Նա շարժեց վոտների ծայրերը, հետո բարձրացավ նրանց վրա, դաստակներն իրար սեղմած թևերը դեպի դեմքը բարձրացնելով և չինական մանդարինի նման յերկու ճկույթները շարժելով, սկսեց յերգել։ Միաժամանակ նա շարժում եր գլուխը յեղանակի տակտի համաձայն, աջ և ձախ։

Ժպտում եր նա նազանքով ու խորամանկ։ Բայց ամբողջ ժամանակ նա աշխատում եր, վորպեսզի իր աչքերը լինեն կլոր ու լայն, ինչպես բոլոր տիկնիկներինը։

Նա յերգում է - այսպես.
Իրա անհայտ գիտելիքով
Շունչ փչելով տիրաբար,

Կենդանացրեց ինձ հրաշքով
Լավ դոկտորը մեր Գասպար։
Ահա նայիր՝ յես ժպտում եմ
Հառաչեցի, լսեցիր,
Ահա նորից յես կյանք ունեմ
Անհոգ, ուրախ տիկնիկի։

Ամբողջ կյանքում յես դեպի քեզ
Շտապում եմ մտահոգ,
Հիշիր, մոքիցդ չգցես
Քրոջդ անունը՝ Սուզի։
Նորից վողջ եմ և յերազում
Տեսնում եյի քեզ անվերջ,
Վոր անվերջ ինձ եյիր կանչում
Արցունքի և վշտի մեջ։

Տես, շարժվում են թերթերունքս,
Ցրվում մաղերս անհոգ,
Զմոռանաս իմ անունս,—
Սիրուն անունս՝ Սուզի։

— Սուզի,— հանդարտ կրկնեց Տուբթին։ Նրա աչքերը լցված եյին արցունքով և դրանից այնպես եր թվում, վոր նա ունի վոչ թե յերկու, այլ չորս աչք։

Տիկնիկը վերջացրեց յերգը և գլուխ տվեց։ Դահլիճը հափշտակված շունչ առավ։ Բոլորը շարժվեցին, գլուխներն որորեցին, լեզուները չփչփացրին։

Իսկապես վոր, յերգի յեղանակը հիանալի յեր, թեև մի քիչ վշտոտ եր այդպիսի մատաղ ձայնի համար։ Իսկ ինքը, ձայնը, հնչում եր այնպիսի դրավչությամբ, վոր թվում եր, թե դուրս ե գալիս արծաթե կամ ոսկե կոկորդից։

— Նա յերգում ե, ինչպես հրեշտակ,— լսվեցին լռության մեջ յերգապետի բառերը։

— Միայն թե, նրա յերդը մի քիչ տարորինակ ե,— նկատեց ինչվոր բարձրաստիճան պաշտոնյա, շքանշանը գնդացնելով։

Դրանով քննադատությունն ընդհատվեց։ Դահլիճ մտան Յերեք հասալիկները։ Ամբոխի կուտակվելը կարող եր նրանց անհաճո թվալ։ Բոլորը նեռվեցին դեպի յելքի դռները։ Սոհարարը խուճապի մեջ՝ իր մատների ծայրերին գտնվող մորի հյութի ամբողջ պաշարը ծեփեց ինչվոր գեղեցկուհու մեջքին։ Գեղեցկուհին ճղճղաց և այդ ժամանակ պարզվեց, վոր նրա ծնոտն արհեստական ե, վորովհետև ծնոտը վար ընկավ։ Գվարդիական չաղ կապիտանը կոխ տվեց գեղեցկուհու ծնոտն իր տգեղ, կոպիտ սապոգով։

Լսվեց՝ խռըփ, խռըփ,— և արարողությունների պետը հենց տեղնուտեղը սայթաքվելով, հայհոյեց։

— Ընկույզ են վար գցել։ Կոտրտվում ե վոտքերի տակ։ Վրդովեցուցիչ ե։

Գեղեցկուհին, կորցնելով իր ծնոտը, ուզում եր քղավել և նուշնիկ ձեռքերը տարածեց, բայց,— ավաղ, ծնոտի հետ միասին, խորտակվել եր նաև ձայնը։ Նա միայն մրընջաց ինչվոր քիչ հասկանալի բան։

Մի բոպե, և դահլիճում ավելորդ մարդիկ չկային։ Մնացին միայն պատասխանատու անձինք։

Յեվ ահա, Սուզին ու դոկտոր Գասպարը կանգնեցին Յերեք հասալիկների առջև։

Յերեք հասալիկները չեյին թվում նախորդ որվա դեպքերից հուզված։ Քիչ առաջ նրանք ծառաստանում գնդակ եյին խաղում հերթապահ բժշկի հսկողության տակ։ Այդ խաղում եյին հանգստի համար։ Նրանք շատ եյին հոգնել։ Նրանց քրտինքոտ դեմքերը փայլում եյին։ Շապիկները

կպել էին նրանց մեջքերին և այդ մեջքերը նմանվում էին քամուց ուռած առագաստների։ Նրանցից մեկի աչքի տակ յերևում եր կապուտկած մի բիծ, տգեղ վարդի կամ գեղեցիկ դորտի կերպարանքով։ Մյուս հասալիկը վախկոտ նայում եր այդ տգեղ վարդին։

«Այդ նա յե գնդակը խփել նրա յերեսին և դարդարել նրան այդ կապտածով» — մտածեց Սուոկը։

Տուժող հասալիկն ահեղ փնչում եր։ Դոկտոր Գասպարը շփոթված ժպտաց։ Հասալիկները լուռ նայեցին տիկնիկին։ Թագաժառանգ Տութթիի պայծառ տեսքը նրանց լավ տրամադրության մեջ դրեց։

— Նու, ուրեմն, — ասաց նրանցից մեկը։ — Այդ դո՞ւք եք դոկտոր Գասպար Աբներին։

Դոկտորը խոնարհվեց։

— Նու, իսկ տիկնիկը, — հարցրեց մյուսը։

— Նա հրաշալի յե, — բացականչեց Տութթին։

Հասալիկները յերբեք չեյին տեսել նրան այդպես աշխուժացած։

— Ահա և գեղեցիկ։ Տիկնիկը, իրոք վոր, լավ և յերևվում...

Առաջին հասալիկն ափով ճակատը սրբեց, չարացած բղավեց և ասաց.

— Դոկտոր Գասպար, դուք կատարեցիք մեր հրամանը։ Այժմ դուք իրավունք ունեք պահանջել նվերներ։

Տիրեց լռություն։

Փոքրիկ քարտուղարը դեղին կեղծամով, գրիչը պատրաստ բռնել եր, վորպեսզի գրի դոկտորի պահանջները։

Դոկտորն սկսեց շարադրել իր պահանջը։

— Յերեկ, դատի հրապարակում կառուցել են տասը կառավնատ ապտամբներին գլխատելու համար...

— Նրանց կգլխատեն այսոր, — ընդհատեց հասալիկը։

— Յես հենց այդ ել նկատի ունեմ։ Իմ խնդիրս այս է։ Յես խնդրում եմ բոլոր գերիներին շնորհել կյանք և ազատություն։ Յես խնդրում եմ բոլորովին վերացնել գլխատությունը և այրել այդ կառավնատները...

Շեկ քարտուղարն այս խնդիրը լսելով, սարսափից գրիչը վար գցեց։ Գրիչը, վորը փետուրից եր և շատ լավ սրված, խրվեց յերկրորդ հասալիկի վոտքի մեջ։ Նա բղավեց և սկսեց ֆռռալ մի վոտքի վրա։ Առաջին հասալիկը, — կապուտկածի տերը, չար կերպով քրքջաց. — նրա վրեժը լուծված եր։

— Սատանան տանի, — գոռում եր յերկրորդ հասալիկը, հանելով թաթից գրիչը, ինչպես նետ։ — Սատանան տանի։ Այդ խնդիրը՝ հանցավոր խնդիր է։ Դուք չեք համարձակվի խնդրել այդպիսի բաներ։

Շեկ քարտուղարը ծլկվեց։ Ծաղիկների անոթը, վոր նա վազելիս շուռ տվեց, թռավ նրա յետևից և կտոր-կտոր յեղավ, ինչպես ռումբ։ Ստացվեց լիակատար սկանդալ։ Հասալիկը գրիչը հանեց և շպրտեց քարտուղարի յետևից։ Բայց այդպիսի չաղությամբ կարելի՞ յե լինել լավ նետաձիգ։ Գրիչը խրվեց պահակ գվարդիականի հետույքը։ Բայց նա, իբրև հավատարիմ պահակ, մնաց անշարժ։ Գրիչը շարունակեց ճոճվել իր անհարմար տեղում այնքան ժամանակ, մինչև վոր պահակը փոխարինվեց։

— Յես պահանջում եմ, վորպեսզի մահվան դատապարտված բոլոր բանվորների կյանքը շնորհվի իրենց։ Յես

պահանջում եմ, վորպեսզի այրվեն կառավնատները,— կրկնեց դոկտորը վոչ բարձր, բայց հաստատ։

Իբրև պատասխան, ճայթեցին հատլիկների ճիչերը։ Ստացվեց այնպիսի տպավորություն, կարծես մեկը տաշեղ է ջարդում։

— Վոչ, վոչ, վոչ, վոչ մի դեպքում։ Նրանք պիտի գըլխատվեն։

— Մեռեք,— շշնջաց դոկտորը տիկնիկին։

Սուրոկը հասկացավ, թե ինչումն է բանը։ Նա նորից կանգնեց վոտքերի ծայրերի վրա, ծվծվաց ու որորվեց։ Նրա զգեստները դողդողացին ինչպես բռնված թիթեռի թևերը, գլուխը կախվեց վար, յուրաքանչյուր վայրկյան տիկնիկը պատրաստ եր ընկնելու։

Թագաժառանգը նեռվեց դեպի նա։

— Ախ, ախ,— ճչաց նա։

Սուրոկը ծվծվաց ավելի վշտոտ։

— Ահա,— ասաց դոկտոր Գասպարը։— Դուք տեսնում եք։ Տիկնիկը նորից զրկվում է իր կյանքից։ Նրա մեջ դրված մեխանիզմը չափազանց զգայուն է։ Նա վերջնականապես կփչանա, յեթե դուք իմ խնդիրքս չկատարեք։ Յես կարծում եմ, վոր պարոն թագաժառանգը շատ գոհ չի լինի, յեթե նրա տիկնիկը դառնա անպետք, վարդագույն փալաս։

Զայրույթը պատեց թագաժառանգին։ Նա վոտները խփեց գետնին, ինչպես փղի ձագ։ Նա աչքերը խոժոռացրեց և գլուխն որորեց։

— Վոչ մի գնով։ լսեցեք, վոչ մի գնով,— բղավեց նա։— Կատարեցեք դոկտորի խնդիրը։ Յես չեմ տա իմ տիկնիկը։ Սուրոկ, Սուրոկ,— հեծկլտաց նա։



պահանջում եմ, որպեսզի այրվեն կառավնատները,— կրկնեց դոկտորը վոչ բարձր, բայց հաստատ։

Իբրև պատասխան, ճայթեցին հատլիկների ճիչերը։ Ստացվեց այնպիսի տպավորություն, կարծես մեկը տաշեղ է ջարդում։

— Վոչ, վոչ, վոչ, վոչ մի դեպքում։ Նրանք պիտի գլխատվեն։

— Մեռեք,— շշնջաց դոկտորը տիկնիկին։

Սուոկը հասկացավ, թե ինչումն է բանը։ Նա նորից կանգնեց վոտքերի ծայրերի վրա, ծվծվաց ու որորվեց։ Նրա զգեստները դողդողացին ինչպես բռնված թիթեռի թևերը, գլուխը կախվեց վար, յուրաքանչյուր վայրկյան տիկնիկը պատրաստ էր ընկնելու։

Թագաժառանգը նեռվեց դեպի նա։

— Ախ, ախ,— ճչաց նա։

Սուոկը ծվծվաց ավելի վշտոտ։

— Ահա,— ասաց դոկտոր Գասպարը։— Դուք տեսնում եք։ Տիկնիկը նորից զրկվում է իր կյանքից։ Նրա մեջ դրված մեխանիզմը չափազանց զգայուն է։ Նա վերջնականապես կփչանա, յեթե դուք իմ խնդիրքս չկատարեք։ Յես կարծում եմ, որ պարոն թագաժառանգը շատ գոհ չի լինի, յեթե նրա տիկնիկը դառնա անպետք, վարդագույն փալաս։

Զայրույթը պատեց թագաժառանգին։ Նա վոտները խփեց գետնին, ինչպես փղի ձագ։ Նա աչքերը խոժոռացրեց և գլուխն որորեց։

— Վոչ մի գնով։ լսեցեք, վոչ մի գնով,— բղավեց նա։— Կատարեցեք դոկտորի խնդիրը։ Յես չեմ տա իմ տիկնիկը։ Սուոկ, Սուոկ,— հեծկլտաց նա։

Ի հարկե, հասալիկները զիջեցին։ Հրամանը տրվեց։ Ներումը հայտարարվեց։ Յերջանիկ դոկտոր Գասպարն ուղևորվեց տուն։

«Յես ամբողջ որը կքնեմ», մտածեց նա ճանապարհին։

Մտնելով քաղաք, նա լսեց խոսակցություններ այն մասին, վոր դատի հրապարակում այրվում են կառափնատները և վոր հարուստները դժգոհ են նրանից, վոր չքավորների գլխատումը տեղի չի ունենա։

Յեվ այսպես, Սուոկը ճնաց Յերեք հասալիկների պալատում։

Նրանք դուրս յեկան այդի։

Թագաժառանգը տրորեց ծաղիկները, դեմ ընկավ փշալարերին և հագիվ չընկավ ավազանը։ Յերջանկությունից նա վոչինչ չեր նկատում։

«Միթե նա չի հասկանում, վոր յես կենդանի աղջիկ եմ, — զարմանում եր Սուոկը։ — Յես ինքս յերբեք թույլ չեյի տա, վոր ինձ այդպես խաբեյին»։

Բերեցին նախաճաշ։ Սուոկը տեսավ թխվածքները և հիշեց, վոր միայն անցյալ տարի աշնանը նրան հաջողվեց ուտել այդպիսի մի թխվածք։ Յեվ այն ել, ծեր Ավգուստը հավատացնում եր, վոր դա թխվածք չե, այլ սովորական կարկանդակ։ Թագաժառանգ Տուլթիի թխվածքները փառավոր եյին։ Տասը մեղուներ թռան դեպի դրանց, ընդունելով դրանք ծաղիկների տեղ։

«Նու, ինչ անեմ յես այժմ, — տանջվում եր Սուոկը։ — Միթե տիկնիկներն ուտում են։ Տարբեր տիկնիկներ են լինում... Ախ, ինչպես ուզում եմ թխվածք»։

Յեվ Սուոկը չհամբերեց։

— Յեռ ուզում եմ մի կտոր։։։— ասաց նա՝ կամացուկ։ Կարմրությունը պատեց նրա այտերը։

— Այ, լավ է, — ուրախացավ թագաժառանգը։ — Իսկ առաջ դու չեյիր ուզում ուտել։ Առաջ յեռ այնքան ճանճրանում եյի մենակ նախաճաշելով։ Ախ, ինչ լավ է։ Քեզ մոտ ախորժակ է հայտնվել։

Յեվ Սուոկը կերավ մի կտոր։ Հետո ելի մեկը, ելի, ելի։ Յեվ հանկարծ նա տեսավ, վոր ծառան, վորը հսկում եր թագաժառանգին, նայում է իրեն։ Յեվ վոչ միայն այդ։— նա սարսափով եր նայում նրան։

Ծառան բերանը լայն բաց եր արել։

Ծառան իրավունք ուներ։

Նա յերբեք չեր տեսել, վոր տիկնիկներն ուտեն։

Սուոկը վախեցավ և վար նետեց չորրորդ թխվածքը,— ամենափխրունը և խաղողահատիկովը։

Բայց գործը հաջող անցավ։ Ծառան աչքերը տրորեց և բերանը փակեց։

— Այդ ինձ թվաց այդպես։ Շոգ է։

Թագաժառանգը խոսում եր առանց լռելու։ Հետո, հոգնելով, նա լռեց։

Զափազանց խաղաղ եր այդ շոգ ժամին։ Նախորդ որվա քամին, ինչպես յերևում եր, թռել եր շատ հեռու։ Այժմ ամեն ինչ անշարժացել եր։ Նույնիսկ թռչունները չեյին թռչում։

Յեվ այդ լռության մեջ, Սուոկը, վոր նստած եր խոտի վրա, թագաժառանգի կողքին, լսեց անհասկանալի, համաչափ կրկնվող մի ձայն, բամբակի մեջ պահված ժամացույցի չխչխկոցի նման։

Միայն թե, ժամացույցն անում է «տիկ-տիկ», իսկ այդ հնչյունն այսպես եր «տուկ-տուկ»։

— Ի՞նչ է սա, — հարցրեց նա։

— Ինչը։ — թագաժառանգը կոպերը վեր բարձրացրեց, ինչպես հասակավոր մարդը զարմանքի ժամանակ։

— Այ, լսում ես — տուկ-տուկ։։։ Այդ՝ ժամացույց է։ Դու ժամացույց ունե՞ս։

Նորից տիրեց լռություն և նորից լռության մեջ ինչվոր բան տկտկում եր։ Սուոկը մատը բարձրացրեց։ Թագաժառանգն ականջ դրեց։

— Այդ ժամացույց չե, — ասաց նա կամացուկ։ — Այդ՝ թակում է իմ յերկաթե սիրտը։։։

ԳԼՈՒԽ 10

ԳԱԶԱՆԱՆՈՑ

Ժամի յերկուսին, Թագաժառանգ Տուբթիին կանչեցին դասարանային սենյակ։ Այդ՝ դասի ժամն եր։ Սուոկը մնաց մենակ։ Վոչ վոք, ի հարկե, չեր կասկածում, վոր Սուոկը կենդանի աղջիկ է։ Ամենայն հավանականությամբ, Թագաժառանգ Տուբթիի իսկական տիկնիկը, վոր այժմ գտնվում եր պարի դասատու Մինյերկույեռի իշխանության տակ, իրեն պահում եր վոչ պակաս հարկադրվածությամբ։ Անպայման շատ հմուտ վարպետ եր նրան սարքել։ Ճիշտ է, նա թխվածքներ չեր ուտում։ Բայց, կարող է պատահել, վոր Թագաժառանգ Տուբթին իրավացի յե։ Կարող է պատահել, իրոք, վոր նա, պարզապես ախորժակ չուներ։

Յեվ այսպես, Սուոկը մնաց մենակ։

Նրա դրությունը դժվար եր։

Վիթխարի պալատ, խճճված յել ու մուտի դռներ, միջանցքներ, աստիճաններ։

Սարսափելի գվարդիականներ, անծանոթ, դաժան մարդիկ գունավոր կեղծամներով, լռություն ու փայլ։

Բայց նրա վրա ուշադրություն չեյին դարձնում։

Նա կանգնել եր Թագաժառանգի ննջարանում, լուսամուտի մոտ։

«Պետք է գործունեության ծրագիր մշակել,— վճռեց նա։ Զինագործ Պրոսպերոյի յերկաթե վանդակը գտնվում է Թագաժառանգ Տուբթիի գաղանանոցում։ Յես պետք է մտնեմ գաղանանոց»։

Դուք արդեն գիտեք, վոր Թագաժառանգին կենդանի յերեխաներ ցույց չեյին տալիս։ Յերբեք, նույնիսկ փակ կառքով, նրան քաղաք չեյին տանում։ Նա աճել եր պալատում։ Նրան սովորեցնում եյին գիտություններ, նրան գրքեր եյին կարդում դաժան Թագավորների ու զորավարների մասին։ Այն մարդկանց, ովքեր շրջապատում եյին նրան, արգելված եր ժպտալ։ Նրա բոլոր դաստիարակներն ու դասատուները լրջամիտ, բարձրահասակ ծերունիներ եյին, իրար սեղմած շրթունքներով։ Բացի դրանից, նրանք բոլորը տառապում եյին ստամոքսի անմարսողությունից։ Իսկ այդպիսի հիվանդություն ունեցող մարդը ժպտալու սիրտ չի ունենում։

Թագաժառանգ Տուբթին յերբեք չեր լսել ուրախ, հնչուն ծիծաղ։ Միայն յերբեմն նրան հանում եր վորևե հարբած յերշիկագործի կամ հենց իրենց, Յերեք հաստլիկների քրքջոցը։ Հաստլիկների, վորոնք հյուրասիրում եյին իրենցից վոչ պակաս հաստ հյուրերին։ Դա սարսափելի վոռնոց եր, վորից մարդ վոչ թե ուրախանում եր, այլ սարսափում։

Ժպտում եր միայն տիկնիկը։ Բայց տիկնիկի ժպիտը հաստլիկներին վտանգավոր չեր թվում։ Յեվ բացի դրանից, տիկնիկը լռում եր։ Նա չեր կարող Թագաժառանգ Տուբթիին պատմել այն բազմաթիվ բաների մասին, վոր թաղնված եյին նրանից պալատի ծառաստանով և յերկաթե կամուրջների մոտ կանգնած թմբուկավոր պահակների կող-

մից։ Յեվ դրա համար էլ, նա վոչինչ չգիտեր ժողովրդի մասին, աղքատության, սոված յերեխաների, գործարանների, շախտերի, բանտերի, գյուղացիների, այն մասին, վոր հարուստները պարտադրում են այն աղքատներին՝ աշխատել, և հավաքում են իրենց այն ամենը, վոր ստեղծված է չքավորների խեղճ, լղար ձեռքերով։

— Նա թող նայի գազաններին, — վճռել էին նրանք։— Ահա նա ունի մի մեռած, անշունչ տիկնիկ և ահա նա կունենա շատ գազաններ։ Թող նա տեսնի, թե ինչպես են կերակրում վագրերին հում մսով և ինչպես ոձը կուլ է տալիս կենդանի ճագարին։ Թող նա լսի դիշատիչ գազանների ձայները և նայի նրանց կարմիր, դիվային բիբերին։ Այն ժամանակ նա կսովորի լինել դաժան։

Բայց գործը դասավորվեց վոչ այնպես, ինչպես ցանկանում էին հասալիկները։

Թագաժառանգ Տուրթին նվիրված կերպով սովորում էր, լսում էր հերոսների ու թագավորների սարսափելի ժամանակագրությունը, առելությամբ էր նայում դաստիարակների պզուկավոր քթերին, բայց դաժան չէր դառնում։

Տիկնիկի ընկերությունը նա ավելի յեր սիրում, քան գազանների ընկերությունը։

Իհարկե դուք կարող եք ասել, վոր տասյերկու տարեկան տղայի համար ամոթ է զբաղվել տիկնիկներով։ Այդ տարիքի մեջ շատերը կնախընտրեին վագր վորսալ։ Բայց այստեղ կար մի պատճառ, վորն իր ժամանակին կպարզվի։

Վերադառնանք Սուոկին։

Նա վորոշեց սպասել յերեկոյին։ Յեվ իրոք՝ — մի տիկնիկ, վոր որը ցերեկով, մենակ շրջում է պալատով, կարող է կասկած արթնացնել։

Դասերից հետո նրանք նորից հանդիպեցին։

— Դու գիտե՞ս, — ասաց Սուոկը, — յերբ վոր յես հիվանդ ընկած էի դոկտոր Գասպարի մոտ, մի տարորինակ յերազ տեսա։ Տեսա, իբրև թե, յես տիկնիկից վերածվեցի կենդանի աղջկա... Յեվ իբրև թե, յես կրկեսի դերասանուհի էի։ Յես ապրում էի բալագանում, մյուս դերասանների հետ։ Բալագանը տեղից տեղ եր գնում, կանգ եր առնում տոնավաճառներում, մեծ հրապարակների վրա և ներկայացումներ եր տալիս։ Յես քայլում էի պարանի վրայով, յես պարում էի, կարողանում էի անել ակրոբատային դժվար համարներ, մնջախաղերի մեջ կատարում էի զանազան դերեր...

Թագաժառանգը լսում եր նրան լայն բաց արած աչքերով։

— Մենք շատ աղքատ էինք։ Շատ հաճախ մենք չէինք ճաշում... Մենք ունեինք մի մեծ, սպիտակ ձի։ Նրան անվանում էին Անրա։ Յես քշում էի նրան և ժանդյորությունն անում նրա պատառոտված դեղին տալասով ծածկված լայն թամքի վրա կանգնած։ Յեվ ձին մեռավ, վորովհետև մի ամբողջ ամիս մենք չափազանց քիչ փող ունեինք և չէինք կարողանում նրան լավ կերակրել...

— Աղքատնե՞ր, — հարցրեց Տուրթին։ — Յես չեմ հասկանում։ Իսկ ինչո՞ւ էիք դուք աղքատ։

— Մենք ներկայացումներ էինք տալիս չքավորների համար։ Զքավորները դեպի մեզ էին նետում մանր պղնձադրամներ, իսկ յերբեմն, յերբ ներկայացումներից հետո խեղկատակ Ավգուստն իր գլխարկը բռնած անցնում եր հանդիսականների միջով, գլխարկը մնում եր բոլորովին դատարկ։

Թագաժառանգ Տուբթին վոչինչ չեր հասկանում։

Յեվ Սուոկը պատմեց նրան, մինչև վոր յերեկոն իջավ։

Նա խոսում եր մուրացկանային դաժան կյանքի մասին, մեծ քաղաքի մասին, անվանի պառավի մասին, վորն ուզում եր իրեն ծեծել, կենդանի յերեխաների մասին, վորոնց վրա հարուստները շներ եյին լարում, մարդիկ Թիբուլի և գինագործ Պրոսպերոյի մասին, այն մասին, վոր բանվորները, շախտյորները, նավաստիները, ուզում են վոչնչացնել հարուստների և հաստլիկների իշխանությունը։

Ամենից ավելի նա խոսեց կրկեսի մասին։ Աստիճանաբար նա տարվեց և մոռացավ այն մասին, վոր նա յերազ է պատմում։

— Յես շատ վաղուց եմ ապրում Բրիզակ պապիկի բալագանում։ Յես նույնիսկ չեմ հիշում, թե յերբվանից գիտեմ պարել և ձի քշել և ֆռռալ մարզափայտի վրա։։։ Ախ, ինչպիսի՜ հրաշալի բաներ եմ յես սովորել։

Նա ձեռքերն իրար խփեց։

— Այ, որինակ, անցյալ կիրակի մենք ներկայացում տվեցինք նավահանգստում։ Յես վայլս եյի պարում ծիրանի կորիզներով։։։

— Ի՞նչպես թե ծիրանի կորիզներով։

— Ախ, դու չգիտես։ Մի՞թե դու չես տեսել սուլիչ, ծիրանի կորիզից պատրաստած։ Դա շատ հասարակ բան է։ Յես հավաքեցի ծիրանի քսան կորիզ և նրանցից սուլիչներ պատրաստեցի։։։ Նու, քսեցի, քսեցի քարին, մինչև վոր կորիզը ծակվեց։

— Ի՜նչ հետաքրքիր է։։։

— Դա միևնույն է։ Կարելի յե վայլս սուլել վոչ միայն քսան կորիզների վրա։։։ Յես կարող եմ սուլել նաև բանալիով։։։

— Բանալիո՞վ։ Ի՞նչպես։ Ցույց տուր։ Յես ունեմ մի հիանալի բանալի։։։

Այս խոսքերով, թագաժառանգ Տուբթին քանդեց իր շապիկի ոձիքը և վզից հանեց մի շղթայիկ, վորից կախված եր սպիտակ, փոքր բանալի։

— Ահա։

— Ինչո՞ւ յես դու սա կրծքիդ վրա պահում, — հարցրեց Սուոկը։

— Այս բանալին ինձ տվել է կանցլերը։ Դա իմ գաղանանոցի վանդակներից մեկի բանալին է։

— Մի՞թե դու քեզ մոտ պահում ես բոլոր վանդակների բանալիները։

— Վոչ։ Բայց ինձ ասեցին, վոր սա ամենակարևոր բանալին է։ Յես պետք է այս բանալին պահեմ։։։

Սուոկը թագաժառանգին ցույց տվեց իր արվեստը։ Նա սուլեց մի հրաշալի յերգ, բանալին բռնելով գլխիվայր, նրա անցքն իր կլորացած շրթունքների մոտ բռնած։

Թագաժառանգն այնպես հիացավ, վոր նույնիսկ մոռացավ բանալու մասին, վորը տվել եյին իրեն պահելու։ Բանալին մնաց Սուոկի մոտ։ Նա մեքենայաբար բանալին գցեց իր ժանյակավոր, վարդագույն գրպանը։

Հասավ յերեկոն։

Տիկնիկի համար պատրաստեցին մի հատուկ սենյակ, թագաժառանգ Տուբթիի սենյակի կողքին։

Թագաժառանգ Տուբթին քնեց և յերազի մեջ տեսավ զարմանալի բաներ։ — ծիծաղելի, քթավոր դիմակներ, մի

մարդու, որն իր դեղին, մերկ մեջքի վրա կրում եր հարթ տաշած մի քար և հասալիկին, որը խփում եր այդ մարդուն սև մտրակով, տեսավ ցնցոտիավոր մի աղայի, որը կարտոֆիլ եր ուտում և ժանյակներով զարդարված անվանի պառավին, որը գնում եր սպիտակ ձիու վրա և սուլում եր մի ինչվոր զվվելի վայլա, ծիրանի քսան կորիզների ոգնությամբ։

Իսկ նույն ժամանակ, բոլորովին մի այլ տեղում, այդ փոքրիկ ննջարանից հեռու, պալատի ծառաստանի մի ծայրում, տեղի յեր ունենում հետևյալը։ Միայն թագաժառանգ Տուլթթին չեր, որ այդ գիշեր զարմանալի յերազներ եր տեսնում։ Զարմանքի արժանի մի յերազ նույնպես, տեսնում եր այն գվարդիականը, որը քնել եր թագաժառանգ Տուլթթիի դաղտանոցի մոտ, իր պահակատեղում։

Նա նստել եր քարե սյունակի վրա, մեջքը դեմ արած յերկաթացանցին և քաղցը մրափում եր։ Նրա սուսերը, փայլուն, լայն պատյանով, ընկած եր նրա յերկու ծնկների միջև։ Նրա ատրճանակը շատ խաղաղ դուրս եր ցցվել նրա կողքի վրա, մետաքսե սև շալի տակից։ Նրա մոտ, խոշոր ավազի վրա, կանգնած եր ցանցապատ լապտերը, որ լուսավորում եր գվարդիականի սապոգներն ու մի յերկար վորդ, որը նրա գլխավերևի տերևների վրայից ընկել եր ուղիղ նրա թևնոցի վրա։

Պատկերը միանգամայն խաղաղ եր։

Յեվ այսպես, պահակը քնել եր ու տեսնում եր մի արտակարգ յերազ։ Նրան թվում եր, որ իրեն մոտեցավ թագաժառանգ Տուլթթիի տիկնիկը։ Տիկնիկը ճիշտ և ճիշտ այնպես եր, ինչպես այդ որն առավոտյան, յերբ նրան

բերեց դոկտոր Գասպար Արնելին։—նույն վարդագույն հագուստը, բանտերը, ժանյակները, մետաղազարդերը։ Միայն թե այժմ, յերազի մեջ, նա թվում եր կենդանի աղջիկ։ Նա ազատ շարժվում եր շուրջը նայելով, քայլում եր գաղտագողի, ցնցվում և մատը շրթունքներին սեղմում։

Լապտերը լուսավորում եր նրա փոքրիկ կերպարանքը։

Գվարդիականը նույնիսկ ժպտաց յերազի մեջ։

Հետո նա հառաչեց և նստեց ավելի հարմար, ուսը յերկաթացանցին հենած և քիթը մտցնելով յերկաթաց անցի զարդարանքի, յերկաթե վարդի մեջ։

Այդ ժամանակ Սուռկը, տեսնելով, որ պահակը քնած է, վերցրեց լապտերը և թաթերի վրա, զգուշ, անցավ ցանկապատից։

Գվարդիականը խռմփում եր, իսկ իրեն թվում եր քնած տեղը, թե այդ վագրերն են մռնչում դաղտանոցում։

Իրականում, դաղտանոցը լուռ եր։ Դաղտները քնած եյին։

Լապտերը լուսավորում եր մի փոքր տարածություն։

Սուռկը դանդաղ առաջ եր շարժվում, մթության մեջ շուրջը նայելով։ Բարեբախտաբար, գիշերը խավար չեր։ Լուսավորում եյին աստղերն ու ծառաստանում կախված լապտերները, որոնց լույսը ծառերի ու շենքերի վրայով հասնում եր մինչև այդ հեռավոր տեղը։

Ցանկապատն անցնելով, աղջիկն անցավ կարճ ծառուղիով, որ ձգվում եր ինչվոր սպիտակ ծաղիկներով ծածկված ցածր թփերի միջով։

Հետո նա միանգամից զգաց դաղտների հոտը։ Այդ հոտը ծանոթ եր նրան, որովհետև մի անգամ, իրենց

բալագանի հետ միասին շրջում էր մի սանձահարող՝ յերեք առյուծի և մի վայրի շան հետ։

Սուոկը հասավ մի բաց հրապարակ։ Շրջապատում ինչ-վոր բան սևին էր տալիս։ Կարծես կանգնած էյին փոքրիկ տնակներ։

— Վանդակները,— շշնջաց Սուոկը։

Նրա սիրտն ուժեղ խփում էր։

Նա չէր վախենում գազաններից, վորովհետև կրկեսում ներկայացում տվող մարդիկ ընդհանրապես վախկոտ չեն։ Նա վախենում էր միայն, վոր գազաններից մեկն ու մեկն իր քայլերից ու լապտերի լույսից կարթնանա, կմռնչա և կարթնացնի պահակին։

Նա մոտեցավ վանդակներին։

«Ախր վոնրտեղ է Պրոսպերոն»— անհանգստացավ նա։

Նա լապտերն ավելի վեր բարձրացրեց և նայեց վանդակների մեջ։ Ամեն ինչ անշարժ էր ու լուռ։ Լապտերի լույսը խփվում էր վանդակների ճաղերին և անհավասար կտորներով ընկնում էր այդ ճաղերի յետևում քնածների մարմինների վրա։

Նա տեսնում էր բրդոտ, հաստ ականջներ, յերբեմն՝ մեկնված մի թաթ, յերբեմն՝ շերտավոր մի մեջք։ Արծիվները քնել էյին թևերը տարածած և նմանվում էյին հնադարյան զինանշաններին։ Մի քանի վանդակների խորքերում սևին էյին տալիս ինչվոր անհասկանալի հսկայական կույտեր։

Մի վանդակում, արծաթե բարակ վանդակացանցի յետևում, ձողերի վրա, գանգան բարձրությամբ նստել էյին թութակները։ Յեվ յերբ վոր Սուոկը կանգ առավ այդ վանդակի մոտ, նրան թվաց, վոր նրանցից մեկը, վորն

ամենից ավելի յեր մոտիկ նստել վանդակացանցին, ծեր, կարմիր, յերկար մորուքով, բաց արեց իր մի աչքը և նայեց նրան։ Իսկ նրա աչքը նման եր կիտրոնի կույր սերմնահատի։

Յեվ բացի այդ, նա փակեց այդ աչքը, կարծես քնած եր ուզում ձևանալ։ Միաժամանակ Սուոկին թվաց, որ թութակը ժպտում է իր կարմիր մորուքի մեջ։

«Յես պարզապես անխելք եմ»,—հանդստացրեց Սուոկն իրեն։ Այնուամենայնիվ, նա սկսեց սարսափել։

Յեվ շարունակ, այս ու այն կողմում, լուության մեջ, ինչվոր բան կրճկրճում եր, խռիխռփում և ֆսսում։

Փորձեցեք գիշերով մտնել ախոռ կամ ականջ դնել հավարնին։ Ձեզ կզարմացնի լուությունը և դրա հետ միաժամանակ, դուք կլսեք չափազանց շատ քանակով փոքրիկ ձայներ,—մերթ թևի շարժում, մերթ կափկափոց, մերթ թառի ճռինչը, մերթ շատ բարակ մի ձայն, որ կաթիլի պես դուրս է թռչում քնած թռչունի կոկորդից։

«Ախր վո՞րտեղ է Պրոսպերոն,—նորից մտածեց Սուոկը, բայց, արդեն ավելի մեծ տագնապով։—Իսկ յեթե հանկարծ, նրան այսոր գլխատել են և նրա վանդակում արծիվ են դրել»։։։

Յեվ այդտեղ, մթության միջից, ինչ վոր մեկի խռպոտ ձայնն ասաց։

— Սուոկ։

Յեվ հենց այդտեղ, նա լսեց մի. ծանր ու հաճախակի շնչառություն և ելի ինչվոր հնչյուններ, կարծես մի մեծ, հիվանդ շուն կրճատցնում եր։

— Ախ,—ճչաց Սուոկը։

Նա լապտերն ուղղեց այն կողմը, վորտեղից իրեն կանչեցին։ Այնտեղ վառվում եյին յերկու կարմրավուն լույսեր։

Մի մեծ, սև արարած կանգնել եր վանդակում արջի նման, ճաղերը բռնած և գլուխը ճաղերին սեղմած։

— Պրոսպերո, — ասաց Սուոկը կամացուկ։

Յեվ մի վայրկյանում, նրա գլխովն անցավ մաքերի մի վողջ կույտ։

«Ինչու՞ յե նա այդպես սարսափելի։ Նա բրդոտվել ե ինչպես արջ։ Նրա աչքերում կան կարմիր կայծեր։ Նա ունի յերկար, կեռ յեղունգներ։ Նա առանց հագուստի յե։ Դա մարդ չե, այլ գորիլլա կապիկ»։

Սուոկը պատրաստ եր լաց լինելու։

— Վերջապես յեկար, Սուոկ, — ասաց տարորինակ արարածը։ — Յես գիտեյի, վոր քեզ կտեսնեմ։

— Բարև։ Յես յեկել եմ քեզ ազատելու, — մրմնջաց Սուոկը դողացող ձայնով։

— Յես դուրս չեմ գա վանդակից։ Յես այսոր կանշնչանամ։

Յեվ նորից լսվեցին քստմնելի, կրճատացնող ձայներ։ Արարածն ընկավ, հետո բարձրացավ և նորից սեղմվեց ճաղերին։

— Մոտեցիր, Սուոկ։

Սուոկը մոտեցավ։ Տարորինակ դեմքը նայում եր նրան։

Իհարկե, դա մարդկային դեմք չեր։ Ամենից ավելի նա նման եր գայլի մուրթի։ Յեվ ամենասարսափելին այն եր, վոր այդ գայլի ականջներն ունեյին մարդու ականջների ձև, թեև ծածկված եյին կարճ, ամուր բրդով։

Սուոկն ուզում եր դեմքը ձեռքով ծածկել։ Լապտերը թռչկոտում եր նրա ձեռքում։ Լույսի դեղին բծերը թռչում եյին ոդով։

— Դու ինձանից վախենում ես, Սուոկ։։։ Յես կորցրել եմ իմ մարդկային դեմքը։ Մի վախենա։ Մոտեցիր։։։ Դու մեծացել ես, լղարել։ Քո դեմքդ վշտահար ե։։։

Նա խոսում եր դժվարությամբ։ Նա ավելի և ավելի ցածր եր խոնարհվում և վերջապես պառկեց իր վանդակի տախտակե հատակի վրա։ Նա շնչում եր ավելի և ավելի հաճախ, լայն բաց անելով իր յերկար, դեղին ատամներով լի բերանը։

— Հիմա յես կմեռնեմ։ Յես գիտեյի, վոր կտեսնեմ քեզ մահվանից առաջ։։։

Նա մեկնեց իր թավամազ կապկային ձեռքը։ Մթության մեջ ինչվոր բան եր փնտրում։ Լսվեց մի ձայն, կարծես մեխ դուրս քաշեցին և հետո սարսափելի ձեռքը դուրս մեկնվեց ճաղերի միջից։

Ձեռքում կար մի փոքրիկ տախտակ։

— Վերցրու սա։ Այստեղ ամեն ինչ գրված ե։

Սուոկը տախտակը պահեց։

— Պրոսպերո, — ասաց նա կամացուկ։

Պատասխան չեղավ։

Սուոկը լապտերը մոտեցրեց։ Արարածի ատամները բացվել եյին ընդմիշտ։ Պղտոր, կանգ առած աչքերը նայում եյին նրան և թափանցում։

— Պրոսպերո, — ճչաց Սուոկը, լապտերը նետելով։ — Նա մեռավ, նա մեռավ։ Պրոսպերո։

Լապտերը հանգեց։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՁԻՆԱԳՈՐԾ ՊՐՈՍՊԵՐՈՆ

ԳԼՈՒԽ 11

ԱՆՈՒՇԱՐԱՆԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Այն գվարդիականը, վորի հետ մենք ծանոթացանք գաղանանոցի մուտքի մոտ ճիշտ այն բոպեյին, յերբ Սուոկը վերցրեց նրա ցանցապատ լապտերը, արթնացավ գաղանանոցում բարձրացած աղմուկից։

Գաղանները մռնչում եյին, վոռնում, փռնչացնում, թափահարում եյին թևերը, խփում եյին պոչերը յերկաթե ճաղերին։

Գվարդիականը հորանջեց սարսափելի ճռինչով, ձգվեց, ցավագին կերպով բռունցքը խփելով յերկաթացանցին, և, վերջապես, վերջնականորեն սթափվեց։

Այդ ժամանակ, նա վեր ցատկեց։ Լապտերը չկար։ Խաղաղ փայլում եյին աստղերը։ Բուրում եր հասմիկը։

— Սատանան տանի։ — գվարդիականը թքեց այնպիսի բարկությամբ, վոր թուքը գնդակի պես թռավ և հասմիկի բաժակաթերթը ջարդեց։

Գաղանային համերգը վոլոռում եր ավելի և ավելի ուժեղ։

Գվարդիականը տագնապ բարձրացրեց։ Մի բոպե անց, վազեցին մարդիկ, ջահերով։ Ջահերը ճարճատում եյին, գվարդիականները հայհոյում եյին։ Ինչվոր մեկը խճճվեց իր սուսերի հետ և ընկավ, խփելով իր քիթն ինչվոր մեկի շպորին և ջարդելով։

— Իմ լապտերս հափշտակել են։
— Ինչվոր մեկը մտել է դաղանանոց։
— Գողեր։
— Խռովարարներ։

Ջարդված քթով գվարդիականն ու մի այլ գվարդիական, ջարդված շպորով, նաև մյուսները, ջահերով խավարը ցրելով, շարժվեցին անհայտ թշնամու հանդեպ։

Բայց դաղանանոցում վոչ մի կասկածելի բան չգտնվեց։

Վագրերը մռնչում էին, բաց արած կարմիր, հոտ փչող յերախները։ Առյուծները վազում էին վանդակների մեջ, կատաղի տագնապով։ Թութակները մի ամբողջ դալմաղալ էին սարքել։ Նրանք ֆռռում էին, ստեղծելով բազմագույն կարուսելի տպավորություն։ Կապիկները ճոճվում էին մարգափայտերի վրա։ Իսկ արջերը յերգում էին ցածր, գեղեցիկ բամբով։

Մարդկանց ու կրակի հայտնվելն ավելի շատ վրդովեցրին այդ դաղանախմբին։

Գվարդիականները դիտեցին բոլոր վանդակները։

Ամեն ինչ կարգին եր։

Նույնիսկ Սուոկի նեռած լապտերը նրանք չգտան։

Յեվ հանկարծ, ջարդված քթով գվարդիականն ասաց։

— Կաց, — և ջահը վեր բարձրացրեց։

Բոլորը նայեցին վերև։ Այնտեղ սևին եր տալիս ծառի վանակ կատարը։ Տերևները չեյին շարժվում։ Հանդարտ գիշեր եր։

— Տեսնում եք, — հարցրեց գվարդիականն սպառնալից։ Նա ցնցեց ջահը։

— Այո։ Ինչվոր վարդագույն բան։։։

— Փոքրիկ։։։
— Նստած է։։։
— Հիմարներ, գիտե՞ք ինչ է դա։ Դա թութակ է։ Նա թռել է վանդակից և նստել է այնտեղ, սատանան նրան տանի։

Պահակ գվարդիականը, վոր տագնապ եր բարձրացրել, անհարմար դրության մեջ ընկնելով, լռել եր։

— Պետք է նրան իջեցնել։ Նա իրար է խառնել բոլոր դաղաններին։

— Ճիշտ է։ Բարձրացիր ծառը, Վուրմ։ Դու ամենից ջահելն ես։

Նա վորին անվանում էին Վուրմ, մոտեցավ ծառին։ Նա տատանվում եր։

— Բարձրացիր ծառը և նրա մորուքից բռնած՝ վար իջեցրու։

Թութակը նստել եր անշարժ։ Նրա վարդագույն փետուրները յերևում էին ջահերով լուսավորված խիտ տերևների միջից։

Վուրմը գլխարկը դեպի ճակատը քաշեց և ծոծրակը քորեց։

— Յես վախենում եմ։ Թութակները շատ ուժեղ են կծում։

— Անխելք։

Վուրմն այնուամենայնիվ, բարձրացավ ծառը։ Բայց ծառաբնի կիսին նա կանգ առավ, մնաց մի վայրկյան և սողաց ներքև։

— Վոչ մի գնով, — ասաց նա։ — Դա իմ գործս չե։ Յես թութակների հետ կռվել չեմ կարող։

Այստեղ հնչեց ինչվոր մեկի բարկացած, մեծավարի ձայնը։ Ինչվոր մարդ, կիսակոշիկները քստքստացնելով

լով, մթության միջից շտապում էր դեպի գվարդիակա-
ները։

— Հարկավոր չէ նրան ձեռք տալ, — բղավեց նա։ —
Միք ձեռք տա նրան։

Բղավողը դուրս յեկավ գաղտնանոցի գլխավոր հսկիչը։
Նա մեծ գիտնական էր և կենդանաբանության մասնագետ,
այսինքն լիակատար կերպով գիտեր այն ամենը, ինչ վոր
հնարավոր է գիտենալ կենդանիների մասին։

Նրան արթնացրել էր աղմուկը։

Նա ապրում էր հենց այդտեղ, գաղտնանոցի մոտ և
վազել էր ուղղակի անկողնուց, նույնիսկ գլխանոցը չհա-
նելով և նույնիսկ մի մեծ, փայլուն բաղլինջով քթի վրա։

Նա չափազանց վրդովված էր։ Յեվ իսկապես։ — ինչվոր
հիմար համարձակվել էր խառնվել նրա աշխարհը, մի ինչ-
վոր դատարկապորտ ուզում էր բռնել նրա թութակի մո-
րուքից։

Գվարդիականները յետ քաշվեցին։

Կենդանաբանը գլուխը վեր թեքեց։ Նա ևս տեսավ ինչ-
վոր վարդագույն բան տերևների միջև։

— Այո, — հայտնեց նա։ — Դա թութակ է։ Դա իմ ամե-
նալավ թութակն է։ Նա միշտ կամակորում է։ Նա չի կա-
րող վանդակ նստել։ Դա Լաուրան է։

— Լաուրա, Լաուրա, — սկսեց կանչել նա բարակ ձայ-
նով։ — Նա սիրում է փաղաքշական վերաբերմունք։ Լաուրա,
Լաուրա, Լաուրա։

Գվարդիականները փութկացրին։ Ընդհանրապես, այդ
փոքրիկ ծերունին գունավոր խալաթով, գիշերային կիսա-
կոշիկներով, վեր թեքած գլխով, վորից մինչև հատակ
կախվում էր գլխանոցի ծոպը, — իրենից ներկայացնում էր

գվարճալի տեսարան վիթխարի գվարդիականների, պայ-
ծառ բոցկլտող ջահերի և գաղտնների վոռնոցի միջև։

Հետո տեղի ունեցավ ամենածիծաղելին։ Կենդանաբանը
բարձրացավ ծառի վրա։ Նա այդ արեց բավական ճարպ-
կորեն, — ըստ յերևույթին առաջին անգամը չեր։ Մեկ,
յերկու, յերեք, — մի քանի անգամ յերևացին խալաթի
տակից նրա վոտքերը շերտավոր սպիտակեղենի մեջ, — և
հարգելի ծերուկը հայտնվեց վերևում, իր կարգ, բայց
վտանգավոր ճանապարհորդության նպատակի մոտ։

— Լաուրա, — նորից քաղցր և շողոքորթող կերպով
թոթովեց նա և հանկարծ նրա ծակող ձիչը բռնեց գաղտ-
նանոցը, ծառաստանը և ամբողջ շրջապատը՝ ամենաքիչը
մի վոլջ կիլոմետր։

— Դիս...

Այսպես բղավեց նա։ Ըստ յերևույթին, թութակի փո-
խարեն նստել էր մի ինչվոր հրեշ։

Գվարդիականները ծառից յետ նետվեցին։ Կենդանա-
բանը թռավ ներքև։ Պատահականությունը մի կարգ, բայց
ամուր ճյուղի կերպարանքով, փրկեց նրան։ Նա կախվեց
այդտեղից, խալաթը ճյուղից բռնված։

Ո, յեթե այժմ ուրիշ գիտնականներ տեսնեին իրենց
հարգելի յեղբայրակցին այդ դիրքով, ապա ի հարկե նրանք
կկորցնեին իրենց հարգանքը դեպի նրա ճաղատն ու գի-
տելիքները։ Ախր շատ անհարմար էր պրկվելնրա խալաթը։

Գվարդիականները փախուստի դիմեցին։ Ջահերի բոցը
թռչում էր քամու հետ։ Մթության մեջ կարելի յեր կար-
ծել, վոր սլանում են սև ձիեր՝ կրակե բաշերով։

Գաղտնանոցում տագնապը խաղաղվեց։ Կենդանաբանն
անշարժ կախ էր ընկել։ Այնինչ պալատում սկսվեց հուզումը։

Յերեք հասալիկները, ծառի վրա խորհրդավոր թութակի յերևալուց յերեք քառորդ ժամ առաջ ստացել էին անախորժ լուրեր։

«Քաղաքում անկարգություններ են։ Բանվորների մոտ հայտնվել են ատրճանակներ ու հրացաններ։ Բանվորները կրակում են գվարդիականների վրա և բոլոր հասալիկներին ջուրն են նետում»։

«Մարգիկ Թիբուլն ազատ է և ծայրամասերի բնակիչներին հավաքում է մի զորաբանակի մեջ»։

«Բազմաթիվ գվարդիականներ անցան բանվորական ծայրամասերը, վորպեսզի չծառայեն Յերեք հասալիկներին»։

«Գործարանային ծխնելույզները չեն ծխում։ Մեքենաներն անգործ են։ Շախայորները հրաժարվում են մտնել գետնի մեջ, հարուստների համար քարածուխ հանելու»։

«Շրջակայի գյուղացիները կռվում են կալվածատերերի դեմ»։

Ահա ինչ հաղորդեցին մինիստրները Յերեք հասալիկներին։

Ըստ սովորության, տագնապից Յերեք հասալիկներն սկսեցին չաղանալ։ Պետական խորհրդի աչքերի առաջ, նրանցից յուրաքանչյուրը քառորդ ֆնտով ավելացավ։

— Յես չեմ կարող, — գանգատվեց նրանցից մեկը։ — Յես չեմ կարող... Այդ վեր է իմ համբերությունից... Ախ, ախ, փողկապիս կոճակները խրվել են կոկորդս...

Յեվ այստեղ, ճայթոցով պատռվեց նրա շապկի կուրացնող սպիտակ ոձիքը։

— Յես ճարպակալվում եմ, — բառաչում եր մյուսը։ — Փրկեցեք ինձ։

Իսկ յերրորդը, տխուր նայում եր իր ստամոքսին։ Այդ-

պիսով, պետական խորհրդի առջև կանգնած եր յերկու հարց։—նախ և առաջ, անմիջապես միջոց մտածել ճարպակալումն ընդհատելու համար, իսկ յերկրորդ,—ճնշել քաղաքի անկարգությունները։

Առաջին խնդրի առթիվ վորոշեցին հետևյալը։

— Պարեր։

— Պարեր, պարեր։ Այո, ի հարկե պարեր։ Այդ ամենալավ մարզանքն է։

Զկորցնելով վոչ մի րոպե, հրավիրել պարերի ուսուցչին։ Նա պետք է Յերեք հասալիկներին բալետային արվեստի դասեր տա։

— Այո,—խոսեց առաջին հասալիկը,—բայց...

Յեվ ճիշտ այդ ժամանակ գազանանոցից թռավ ճիչը մեր հարգելի կենդանաբանի, վորը ծառի վրա սատանա յեր տեսել, փոխանակ սիրելի թութակ Լաուրային։

Վողջ կառավարությունը նետվեց ծառաստան, ալլեյներով դեպի գազանանոց։

— Ուֆ, ուֆ, ուֆ,—լսվեց ծառաստանում։

Ամենաընտիր թիթեռնիկների յերեսուն ընտանիքներ, նարնջագույն և սև բծերով, վախից հեռացան ծառաստանից։

Հայտնվեցին բազմաթիվ ջահեր։ Այրվող, ձիթապտղի հոտ տարածող մի ամբողջ անտառ։ Այդ անտառը վազում եր և այրվում։

Յեվ յերբ մինչև գազանանոցը մնացել եր տասը քայլ, այն ամենը, ինչը վոր վազում եր, կարծես թե հանկարծ, իսկույն զրկվեց վոտքերից։ Յեվ իսկույն ել նետվեց յետ՝ վոռնոցով ու կլանչոցով, ընկնելով մեկ մեկու վրա, սպանելով և փրկություն փնտրելով։ Ջահերը գլորվում եյին

գեանին, բոցը թափվում էր սև ծուխն ալիքներով վա-
զում էր։

— Ո+++

— Ա+++

— Փրկվեցեք+++

Ձայները ցնցում էին ծառաստանը։ Բոցը տարածվում
էր, փախուստի և խառնաշփոթության պատկերը շառա-
գույն փայլով լուսավորելով։

Իսկ այնտեղից, դաղանանոցից, յերկաթե ցանկապատի
յետևից, հանդարտ, լայն քայլելով դալիս էր մի վիթ-
խարի մարդ։

Այդ փայլի մեջ, շեկ գլխով, փայլող աչքերով, պատռա-
ված շապիկով, նա քայլում էր ինչպես ահեղ տեսիլ։ Մի
ձեռքով նա բռնել էր հովազի վզկապից, վորը սարքված էր
շղթայի յերկաթյա մի կտորից։ Դեղին ու բարակ դաղանը,
ճգնելով դուրս պրծնել սարսափելի վզկապից, թռչկոտում
էր, վնգստում, կլանչում և ինչպես ասպետական դրոշակի
վրայի առյուծ, մեկ դուրս էր հանում, մեկ ներս էր քա-
շում իր յերկար, մորագույն լեզուն։

Յեվ նրանք, ովքեր վճռեցին յետ նայել, տեսան, վոր
այդ մարդն իր մյուս ձեռքի վրա կրում էր մի աղջկա,
փայլուն վարդագույն զգեստով։ Աղջիկը վախեցած նա-
յում էր կատաղած հովազին, վոտքերը սեղմում էր վոսկե
վարդավոր կոշիկների միջև սեղմվում էր իր բարեկամի
ուսին։

— Պրոսպերոն,— աղաղակում էին մարդիկ, ծլկվելով։

— Պրոսպերոն։ Դա Պրոսպերոն է։

Փրկվեցեք։

— Տիկնիկը։

— Տիկնիկը։

Յեվ այդ ժամանակ Պրոսպերոն բաց թողեց դաղանին։

Հովազը, պոչը շարժելով, վիթխարի թռիչքներով նետ-
վեց փախչողների յետևից։

Սուոկը զինագործի ձեռքից վար ցատկեց։ Այդ փա-
խուստի ընթացքում, շատ ատրճանակներ էին նետված
խոտի վրա։ Սուոկն ընտրեց յերեք ատրճանակ։ Յերկու-
սով զինվեց Պրոսպերոն, իսկ մեկը վերցրեց Սուոկը։
Ատրճանակը համարյա նրա հասակի կեսի չափ էր։ Բայց
նա գիտեր, թե ինչպես պետք է վարվել այդ սև, փայլուն
առարկայի հետ+— կրկեսում նա սովորել էր ատրճանակ
կրակել։

— Գնանք,— հրահանգեց զինագործը։

Նրանց չեր հետաքրքրում այն, ինչ վոր կատարվում
էր ծառաստանի խորքում։ Նրանք չէին մտածում հովազի
հետագա սխրագործությունների մասին։

Պետք էր յելք փնտրել պալատից։ Պետք էր փրկ-
վել։

Վոռտեղ էր նվիրական կաթսան, վորի մասին ասել էր
Թիբուլը։ Վոռտեղ էր խորհրդավոր կաթսան, վորի միջով
ադատվել էր մանկական ոդապարիկներ ծախողը։

— Խոհանոց, խոհանոց,— բղավեց Սուոկը ճանապար-
հին, ատրճանակը շարժելով։

Նա վազում էր լիակատար մթության մեջ, փշրելով
թփերն ու փախցնելով քնած թռչուններին։ Ո, ինչքան
տուժել էր Սուոկի հրաշալի զգեստը։

— Ինչվոր քաղցր հոտ է գալիս,— հանկարծ հայտնեց
Սուոկը, կանգ առնելով ինչվոր լուսավորված լուսամուտի
տակ։

Յեվմա տի փոխարեն, վոր բարձրացնում եր ընդհանուր ուշադրություն պահանջող մոմենտներում, նա բարձրացրեց սև տարճանակը։

Վրա հասած գվարդիականները տեսան նրանց արդեն վերևում, ծառի կատարին։ Մի պահ՝ և դեպի այդ լուսամուտները տարածված ճյուղի վրայից նրանք մագլցեցին գլխավոր լուսամուտը։

Դա այն լուսամուտն եր, վորով նախորդ որը ներս եր թռել մանկական ոդապարիկներ ծախողը։

Դա անուշարանի լուսամուտն եր։

Այստեղ, չնայած ուշ ժամին և նույնիսկ չնայած ընդհանուր տագնապին, յեռում եր աշխատանքը։ Անուշագործները և խորամանկ տղաների ամբողջ շատն սպիտակ գլխանոցներով, իրար եյին անցել։ Նրանք պատրաստում եյին ինչվոր հատուկ կամպոտ հետևյալ որվա ճաշի համար, ի պատիվ թագաժառանգ Տուրթիի տիկնիկի վերադարձի։ Այս անգամ արդեն, վորոշել եյին տորտ չպատրաստել, վախենալով, վոր եվի մի վորևե թռչող հյուր չփչացնի և ֆրանսիական կրեմը, և զարմանալի վորակավոր շաքարած մրգերը։

Մեջտեղում կանգնած եր տաշտակը։ Նրա մեջ յեփվում եր ջուրը։ Սպիտակ գոլորշին պատել եր ամեն ինչ։ Այդ ծածկոցի տակ աշկերտները զվարճանում եյին։—Նրանք կամպոտի մրգեր եյին կտրատում։

Յեվ այսպես... Բայց այստեղ, շոգու և իրարանցումի միջից, խոհանոցային վարպետները տեսան սարսափելի պատկերը։

Լուսամուտի յեռևում որորվում եյին ճյուղերը, խշշում եյին տերևները, կարծես փոթորկից առաջ, և լուսամուտի

գոգի վրա հայտնվեցին յերկուսը, — շեկ մազերով հսկան ու աղջիկը։

— Ձեռքերդ վեր, — ասաց Պրոսպերոն։ Յուրաքանչյուր ձեռքում նա բռնել եր մի ատրճանակ։

— Տեղից չշարժվել, — հնչուն ձայնով ասաց Սուոկը, բարձրացնելով իր ատրճանակը։

Յերկու դյուժին սպիտակ թենոցներ, չսպասելով ավելի ներշնչող հրավերի, վերև բարձրացան։

Իսկ հետո, թռան կաթսաները։

Դա անուշարանի փայլող, ապակյա, պղնձյա, տաք, քաղցր, հոտավետ աշխարհի խորտակումն եր։

Զինագործը փնտրում եր գլխավոր կաթսան։ Նրանում գտնվում եր իր և իր փոքրիկ փրկչուհու փրկությունը։

Նա շուռ եր տալիս տուփերը, շաղ եր տալիս անոթները, ձագարները, ափսեները, պնակները։ Ապակիները թռչում եյին ամեն կողմ և ջարդվում եյին զրնգոցով ու վորոտով։ Թափված ալյուրը այն պես վոլորվում եր, ինչպես սամումը Սահարայում։ բարձրացավ նշի, թզի, կեռասի շրջապտույտը։ շաքարավազը թափվում եր դարակներից ջրվեժի դղրդով, ոշարակների հեղեղը բարձրացավ մի վողջ արշին։ ցայտում եր ջուրը, գլորվում եյին մրգերը, խորտակվում եյին կաթսաների պղնձե աշտարակները։

Ամեն ինչ տակն ու վրա յեղավ։ Ահա այսպես ե լինում յերբեմն յերազի մեջ, յերբ յերազ ես տեսնում և գիտես, վոր դա յերազ ե և դրա համար ել կարելի յե անել ամեն ինչ՝ ինչ վոր ուզես։

— Կա, — բղավեց Սուոկը։ — Ահա նա։

Այն ինչ վոր փնտրում եյին, գտան։ Կափարիչը շպրտվեց ավերակների կույտի վրա։ Նա, հերոսի վահանի նման

ՀՍՍՀ-ՍՍՀՄ

շրմփաց ոշարակների թանձր, մորագույն կանաչ և վոսկեգեղին լճի մեջ։

Պրոսպերոն տեսավ անհատակ կաթսան։

— Վազիր, — բղավեց Սուոկը։— Յես կգամ քո յետևից։

Զինագործը մտավ կաթսայի մեջ։ Յեվ արդեն անհետանալով նրա ներսում, լսեց անուշարանում մնացածների ճիչը։

Սուոկը չհասավ։ Հովազը, կատարելով իր սարսափելի ճանապարհորդությունը ծառաստանով ու պալատով, հայտնվեց այդտեղ։ Նրա մորթի վրա, վարդի պես ծաղկել էին գվարդիականների գնդակների հասցրած վերքերը։

Անուշագործներն ու խոհարարները նետվեցին մի անկյուն։ Սուոկը, մոռանալով ատրճանակի մասին, հովազի վրա նետեց իր ձեռքի տակ գտնված տանձերը։

Գազանը նետվեց Պրոսպերոյի յետևից, գլուխը կոխելով կաթսայի մեջ։ Նա նրա յետևից գլորվեց մութ, նեղ անցքը։ Բոլորը տեսան դեղին պոչը, որ յերևում եր այդ կաթսայից, ինչպես ջրհորից, իսկ հետո ամեն ինչ ծածկվեց։

Սուոկը դեմքը ձեռքերով ծածկեց։

— Պրոսպերո, Պրոսպերո։

Իսկ անուշագործները չար քրքջացին։ Այդտեղ էլ, ներս լցվեցին գվարդիականները։ Նրանց համազգեստները պատառոտված էին, դեմքերն արյան մեջ, ատրճանակները ծխում էին։ Նրանք կռվել էին հովազի հետ։

— Պրոսպերոն խորտակվեց։ Հովազը նրան կպատառոտի։ Այդ դեպքում, ինձ համար միևնույնն է։ Յես հանձնվում եմ։

Սուոկը խոսում եր հանդարտ, ցած իջեցնելով իր փոքրիկ ձեռքը, շատ մեծ ատրճանակով։

Բայց վորոտաց կրակոցը։ Այդ՝ Պրոսպերոն եր, վոր ատորերկրյա անցքով փախչելով, խփեց իր յետևից թըռչող հովազին։

Գվարդիականները հավաքվել էին կաթսայի շուրջը։ Ոշարակների լիճը հասնում եր մինչև նրանց ահագին սապոգների կեսը։

Մեկը նայեց կաթսայի մեջ։ Հետո նա այնտեղ կոխեց իր ձեռքն ու ձիգ տվեց։ Այդ ժամանակ, ոգնություն հասան ևս յերկուսը։ Ձիգ տալով, նրանք քաշեցին մեռած գազանի պոչից, վորը դեմ եր առել փոսի մեջ ու մնացել։

— Նա մեռած է,—ասաց գվարդիականը, շունչ առնելով։

— Նա կենդանի յե։ Նա կենդանի յե։ Յես նրան փըրկեցի։ Յես փրկեցի ժողովրդի բարեկամին։

Այդպես ուրախանում եր Սուոկը, խեղճ, փոքրիկ Սուոկը, պատառոտված զգեստներով, արորված վոսկե վարդերով՝ մազերի մեջ և կիսակոշիկների վրա։

Նա շառագունել եր յերջանկությունից։

Նա կատարել եր այն հանձնարարությունը, վոր տվել եր իր բարեկամը, մարզիկ Թիբուլը,—նա ազատել եր զինագործ Պրոսպերոյին։

— Այդպես,—ասաց գվարդիականը, բռնելով Սուոկի ձեռքից։—Տեսնենք, գովաբանված տիկնիկ, թե այժմ ինչ պիտի անես։ Տեսնենք...

— Տանել նրան Յերեք հասարակների մոտ...

— Նրանք քեզ կդատապարտեն մահվան։

— Անխելք,—հանդիստ պատասխանեց Սուոկը, վարդագույն ժանյակի վրայից լիզելով քաղցր ոշարակի բիծը, վոր թափվել եր նրա զգեստի վրա այն ժամանակ, յերբ Պրոսպերոն ավերում եր անուշարանը։

ԳԼՈՒԽ 12

ՊԱՐԵՐԻ ԴԱՍԱՏՈՒ ՄԻՆՅԵՐԿՈՒՅԵՌԸ

Ինչ պատահեց դիմակազերծ արված տիկնիկի հետ հետագայում, առայժմ հայտնի չէ։ Բացի դրանից, մենք առայժմ չենք տալիս նաև մյուս բացատրությունները, ինչպես որինակ՝ — այդ ինչ թութակ եր նստել ծառի վրա և ինչու վախեցավ հարգելի կենդանաբանը, վորը, դուցե հենց մինչև հիմա յել կախ է ընկած ճյուղից, ինչպես լվացած շապիկ։ Ի՞նչպես յեղավ, վոր գինագործ Պրոսպերոն հայտնվեց ագատության մեջ և վո՞րտեղից գտնվեց հովազը, ինչ կերպ Սուոկը հայտնվեց գինագործի ուսի վրա, այդ ինչ հրեշ եր, վոր խոսում եր մարդկային լեզվով։ Ի՞նչ տախտակ եր այն, վոր տվեց նա Սուոկին և ինչու նա մեռավ։։։

Ամեն ինչ կպարզվի իր ժամանակին։ Հավատացնում եմ ձեզ, վոր վոչ մի հրաշք չկատարվեց, այլ ամեն ինչ կատարվեց, ինչպես ասում են ուսումնականները, տրամաբանության յերկաթե որենքների համաձայն։

Իսկ այժմ առավոտ է։ Հենց հատկապես այդ առավոտյան, բնությունը զարմանալի լավացել եր։ Նույնիսկ մի պառաված աղջիկ, վոր ուներ այծի արտահայտիչ արտաքին, դադարեց զգալուց իր գլխացավը, վորը նրան տանջում եր մանկությունից ի վեր։ Այդպիսի ոդ եր այդ առավոտյան։ Ծառերը չեյին աղմկում, այլ յերգում եյին մանկական, ուրախ ձայներով։

Այդպիսի առավոտյան, յուրաքանչյուր մարդ ուզում է պարել։ Դրա համար էլ, զարմանալի չէ, վոր պարերի դասատու Մինյերկույեռի դահլիճը լիքը լցված եր։

Սոված վորով, ի հարկե, պարել չի լինի։

Պարել չի լինի, ի հարկե, նաև վշտից։ Բայց դատարկ վոր ու վիշտ ունեյին միայն նրանք, ովքեր այդ որը հավաքվել եյին բանվորական թաղամասերում, վորպեսզի նորից արշավի յելնեն Յերեք հաստլիկների պալատի վրա։ Իսկ ֆրանտները, կանայք, հարուստների և վորկրամոլների աղաներն ու աղջիկներն իրենց զգում եյին հիանալի։ Նրանք չգիտեյին, վոր մարդիկ Թիբուլն աղքատ, սոված բանվոր մարդկանցից դնդեր է կազմակերպում, նրանք չգիտեյին, վոր փոքրիկ պարոդուհի Սուոկն ազատել է գինագործ Պրոսպերոյին, վորին սպասում եր ժողովուրդը, նրանք շատ քիչ նշանակություն եյին տալիս այն խռովություններին, վոր բարձրացել եյին քաղաքում։

— Դատարկ բաներ են, — ասում եր մի գեղեցիկ, բայց սրաքիթ որիորդ, պատրաստելով պարահանդեսային կիսակոշիկները՝ — յեթե նրանք նորից գրոհեն պալատի վրա, գվարդիականները կվոչնչացնեն նրանց, ինչպես նախորդ անգամին։

— Ի հարկե, — ասում եր ջահել ֆրանտը, խնձոր կըրծելով ու նայելով իր ֆրակին։ — Այդ հանքափորներն ու այդ կեղտոտ արհեստավորները չունեն հրացաններ, ատրճանակներ ու սուսերներ։ Իսկ գվարդիականներն ունեն նույնիսկ թնդանոթներ։

Զույգ զույգի յետևից մտնում էին անհոգ և ինքնաբավական մարդիկ Մինյերկույեռի տունը։

Նրա դռան վրա կախված էր մի տախտակ, հետևյալ մակագրությամբ։

«Պարերի դասատու Մինյերկույեռ։ Վարժեցնում եմ վոչ միայն պարերի, այլև ընդհանրապես գեղեցկության, վայելչության, թեթևության, սիրալիության և կյանքի վրա բանաստեղծական հայացք ունենալու։ Տասը պարի վճարն սկզբից»։

Պղնձագույն մեծ պարկետի վրա, կլոր դահլիճում, Մինյերկույեռը դասավանդում էր իր արվեստը։

Նա ինքը նվագում էր սև սրնգի վրա, վորն ինչվոր հրաշքով էր մնում նրա շրթունքների մոտ, վորովհետև նա ամբողջ ժամանակ շարժում էր ժանյակավոր մանժետներով ու սպիտակ լաքե ձեռնոցներ հագած իր ձեռքերը։ Նա ճկվում էր, գիրքեր էր բռնում, աչքերը ներս գցում, կրունկով տակտ էր խփում և յուրաքանչյուր բոպե վազում էր հայելու մոտ, նայելու, թե գեղեցիկ է արդյոք նա, լավ են նստում արդյոք բանտերը նրա վրա, փայլում է իր ոծանված գլուխը։։։

Զույգերը ֆռռում էին։ Նրանք այնքան շատ էին և այնքան էին քրտնել, վոր կարելի էր մտածել հետևյալը։— յեփվում է ինչվոր խայտաբղետ և ըստ յերևույթին, անհամ ապուր։

Մերթ կավալերը, մերթ կինը, վոր ֆռռում էին ընդհանուր իրարանցման մեջ, սկսում էին նմանվել կամ պոչավոր շաղգամի, կամ կաղամբաթերթի, կամ ելի վորևե անհասկանալի գունավոր ու հիասքանչ բանի, վոր կարելի է գտնել ապուրի ափսեյում։

Իսկ Մինյերկույեռն այդ ապուրի մեջ կատարում եր դդալի դերը։ Մանավանդ վոր, նա շատ յերկար եր, բարակ և կորացած։

Ախ, յեթե Սուոկը նայեր այդ պարերին, ա՛յ թե կծիծաղեր նա։ Նույնիսկ այն ժամանակ, յերբ նա խաղում եր վոսկե կաղամբացողունի դերը «Հիմար արքա» մեջ-խաղում, նույնիսկ այդտեղ նա պարում եր շատ ավելի շքեղ։ Իսկ մինչդեռ, նա պետք է պարեր այնպես, ինչպես պարում են կաղամբացողունները։

Յեվ պարերի ամենատաք ժամանակը, կաշվե կոպիտ ձեռնոցներ հագած յերեք ահագին բռունցքներ թակեցին պարերի դասատու Մինյերկույեռի դուռը։

Արտաքին տեսքից, այդ բռունցքները շատ քիչ եյին տարբերվում գյուղական կավե կժերից։

Ապուրը կանգ առավ։

Իսկ հինգ)րոպե անց, պարերի դասատու Մինյերկույեռին տարան Յերեք հատալիկների պալատը։ Յերեք գվարդիականները ձիերով սլանում եյին նրանց յետևից։ Նրանցից մեկը նրան նստացրեց իր ձիու գավակի վրա, մեջքը դեպի իրեն, — այլ կերպ ասած, Մինյերկույեռը գնում եր յետ-յետ։ Մյուս գվարդիականը տանում եր մեծ, կարտոնե մի տուփ։ Դա շատ մեծ պարունակություն ուներ։

— Յես ախր պետք է ինձ հետ վերցնեմ մի քանի կոստյումներ, յերաժշտական գործիքներ, ինչպես նաև կեղծամներ, ձայնագրություններ և իմ սիրած ռոմանսները, — հայտարարեց Մինյերկույեռը, պատրաստվելով ճանապարհ ընկնել։ — Անորոշ է, թե յես ինչքան պիտի մնամ պալատում։ Իսկ յես սովորել եմ շքեղության ու գեղեցկության, ուստի և սիրում եմ հաճախ հագուստներս փոխել։

Իսկ Մինյերկույեռն այդ ապուրի մեջ կատարում եր գդալի դերը։ Մանավանդ վոր, նա շատ յերկար եր, բարակ և կորացած։

Ախ, յեթե Սուոկը նայեր այդ պարերին, ա՛յ թե կծիծաղեր նա։ Նույնիսկ այն ժամանակ, յերբ նա խաղում եր վոսկե կաղամբացողունի դերը «Հիմար արքա» մնջախաղում, նույնիսկ այդտեղ նա պարում եր շատ ավելի շքեղ։ Իսկ մինչդեռ, նա պետք է պարեր այնպես, ինչպես պարում են կաղամբացողունները։

Յեվ պարերի ամենատաք ժամանակը, կաշվե կոպիտ ձեռնոցներ հագած յերեք ահագին բռունցքներ թակեցին պարերի դահլիճում Մինյերկույեռի դուռը։

Արտաքին տեսքից, այդ բռունցքները շատ քիչ եյին տարբերվում գյուղական կավե կժերից։

Ապուրը կանգ առավ։

Իսկ հինգ)րոպե անց, պարերի դահլիճում Մինյերկույեռին տարան Յերեք հատլիկների պալատը։ Յերեք գվարդիականները ձիերով սլանում եյին նրանց յետևից։ Նրանցից մեկը նրան նստացրեց իր ձիու գավակի վրա, մեջքը դեպի իրեն, — այլ կերպ ասած, Մինյերկույեռը գնում եր յետ-յետ։ Մյուս գվարդիականը տանում եր մեծ, կարտոնե մի տուփ։ Դա շատ մեծ պարունակություն ուներ։

— Յես ախր պետք է ինձ հետ վերցնեմ մի քանի կոստյումներ, յերաժշտական գործիքներ, ինչպես նաև կեղծամներ, ձայնագրություններ և իմ սիրած ռոմանսները, — հայտարարեց Մինյերկույեռը, պատրաստվելով ճանապարհ ընկնել։ — Անորոշ է, թե յես ինչքան պիտի մնամ պալատում։ Իսկ յես սովորել եմ շքեղության ու գեղեցկության, ուստի և սիրում եմ հաճախ հագուստներս փոխել։

Պարողները վազում էին ձիերի յետևից, ճոճում էին թաշկինակները և Մինյերկույեռին հրաժեշտ էին բղավում։

Արևը վեր բարձրացավ։

Մինյերկույեռը գոհ եր, վոր իրեն կանչել էին պալատ։ Նա սիրում եր Յերեք հաստլիկներին այն բանի համար, վոր նրանց սիրում էին վոչ պակաս հարուստների տղաներն ու աղջիկները։ Վորքան ավելի հարուստ եր հարուստը, այնքան ավելի յեր նա դյուր գալիս Մինյերկույեռին։

— Իսկապես,— դատում եր նա։— Ինձ ինչ ոգուտ աղքատներից։ Մի թե նրանք սովորում են պարել։ Նրանք միշտ զբաղված են աշխատանքով և յերբեք փող չեն ունենում։ Ուրիշ բան է՝ հարուստ վաճառականները, հարուստ ֆրանտներն ու կանայք։ Նրանք միշտ ունեն շատ փող և նրանք յերբեք վոչինչ չեն անում։

Ինչպես տեսնում եք, Մինյերկույեռն ըստ իր կարծիքի՝ հիմար չեր, իսկ ըստ մեզ՝ հիմար եր։

— Հիմար է այդ Սուոկը,— զարմանում եր նա, հիշելով փոքրիկ պարողուհուն։— Ինչու յե նա պարում աղքատների համար, զինվորների, արհեստավորների և գլուտված յերեխաների համար։ Ախր նրանք նրան վճարում են այնքան քիչ։

Յերևի ավելի շատ կզարմանար հիմար Մինյերկույեռը, յեթե իմանար, վոր այդ փոքրիկ պարողուհին վտանգել եր իր կյանքը, վորպեսզի ազատի աղքատների, արհեստավորների և գլուտված յերեխաների դեկավարին,— զինագործ Պրոսպերոյին։

Զինվորներն արագ սլանում էին։

Ճանապարհին պատահած դեպքերը բավական տարորինակ էին։ Շարունակ, մոտակայքում, լսվում էին տրաքոցներ։ Հուզված մարդկանց ամբոխը հավաքվել եր դարբասների մոտ։ Յերբեմն փողոցով վազվզում էին յերկույերեք արհեստավորներ, ձեռքերում ատրճանակներ բռնած։։։ Թվում եր, թե խանութպանների համար այդ հիանալի որը հենց մի գլուխ առևտուր անելու որ եր, իսկ նրանք փակել էին փեղկերը և իրենց հաստ փայլուն դեմքերը դուրս էին հանել ոդանցքներից։ Զանազան ձայներ թաղամասից թաղամաս կանչում էին իրար։

— Պրոսպերո։

— Պրոսպերո։

— Նա մեզ հետ է։

— Նա մեզ հետ է։

Յերբեմն արշավում եր մի գվարդիական իր կրակ կտրած ձիու վրա, վոր փրփուր եր շաղ տալիս։ Յերբեմն վորևե հաստլիկ, տնքալով վազում եր դեպի նրբանցք, իսկ նրա յերկու կողքերից վազում էին շիկահեր ծառաները, իրենց պարոնին պաշտպանելու համար փայտերը պատրաստ պահելով։

Մի տեղ, այդպիսի ծառաները, փոխանակ իրենց հաստ տիրոջը պաշտպանելու, միանգամայն անսպասելիորեն սկսեցին նրան ծեծել, իրենց աղմուկը տարածելով վողջ թաղամասում։

Մինյերկույեռն սկզբում կարծում եր, վոր դա՝ փոշի յեն թափ տալիս տաճկական բազմոցից։

Տալով յերեք դյուժին հարված, ծառաները հերթով աքացի տվին հաստլիկի հետույքին և գրկախառնվելով ու բռունցքները շարժելով վազեցին ինչվոր տեղ, բղավելով։

— Կորչեն Ձերեք հասալիկները։ Մենք չենք ուզում ծառայել հարուստներին։ Կեցցե ժողովուրդը։

Իսկ ձայները կանչում էին միմյանց։

— Պրոսպերո։

— Պրո՜ո՜ո՜սպերո։

Մի խոսքով, մեծ տագնապ եր։ Վառոդի հոտ եր փչում։

Յեվ վերջապես, պատահեց վերջին դեպքը։

Տասը գվարդիականներ կարեցին ճանապարհն իրենց յերեք ընկերների, վորոնք տանում էին Մինյերկույեռին։

Դրանք հեռիոն գվարդիականներ էին։

— Կաց, — ասաց նրանցից մեկը։ Նրա կապուտ աչքերը փայլում էին զայրույթով։ — Ո՞վքեր եք դուք։

— Չե՞ս տեսնում, — նույնպես հարցրեց զայրացած գվարդիականը, վորի գավակին նստել եր Մինյերկույեռը։

Զիները, վորոնց բռնել էին իրենց արագ ընթացքի ժամանակ, կանգնել չէին ուզում։ Ցնցվեց տանձը։ Ցընցվեցին պարերի դասատու Մինյերկույեռի ծնկների տակի ջղերը։ Անհայտ է, թե վորն ավելի ուժեղ ցնցվեց։

— Մենք Ձերեք հասալիկների պալատական գվարդիայի զինվորներն ենք։

— Մենք շտապում ենք պալատ։ Բաց թողեք մեզ անմիջապես։

Այդ ժամանակ, կապուտաչյա գվարդիականն իր շարֆի տակից հանեց ատրճանակը և ասաց։

— Այդ դեպքում տվեք ձեր ատրճանակներն ու սուսերները։ Զինվորների զենքը պետք է ծառայի միայն ժողովրդին և վոչ թե Ձերեք հասալիկներին։

Բոլոր գվարդիականները, վոր շրջապատել էին գվարդիականներին, հանեցին ատրճանակները։

Զինվորներն ևս, արագ հանեցին իրենց զենքերը։ Մինյերկույեռն ուշագնաց յեղավ և ձիուց վար գլորվեց։ Ցեռը ուշքի յեկավ՝ ճիշտ կերպով ասել չի կարելի, բայց համենայն դեպս, արդեն այն ժամանակ, յերբ կռիվ իրեն ուղեկցող գվարդիականների և նրանց շրջապատողների միջև՝ վերջացել եր։ Ըստ յերևույթին, հաղթել էին վերջինները։ Մինյերկույեռն իր մոտ տեսավ հենց նրան, վորի մեջքին ինքը նստել եր։ Այդ գվարդիականը մեռած եր։

— Արյուն, — թոթովեց Մինյերկույեռը, աչքերը փակելով։ Բայց այն, ինչվոր տեսավ նա մի վայրկյան հետո, նրան ցնցեց յերեք անգամ ավելի ուժեղ։

Նրա կարտոնե տուփը ջարդված եր։ Նրա ունեցվածքը դուրս եր թափվել տուփի բեկորներից։ Նրա հրաշալի հագուստը, նրա ռոմանները ու կեղծամները թափված էին սալահատակի փոշու մեջ...

Ախ...

Այդ՝ ճակատամարտի տաք րոպեին գվարդիականն եր նետել իրեն վստահած տուփը, վորը ջախջախվել եր սալահատակի ուռուցիկ քարերի վրա։

Ախ, ախ...

Մինյերկույեռը նետվեց դեպի իր ունեցվածքը։ Նա տենդորեն հավաքեց ժիլետները, ֆրակները, գուլպաները, եժան, բայց առաջին հայացքից գեղեցիկ փակիչներով կիսակոշիկները և նորից նստեց գետնի վրա։ Նրա վիշտը սահման չուներ։ Բոլոր առարկաները, ամբողջ արդուզարդը մնացել եր տեղը, բայց ամենագլխավորը հափշտակված եր։

Ու մինչդեռ Մինյերկույեռը դեպի խոր յերկինքն եր բարձրացնում իր՝ բլիթի նման բռունցքները, յերեք ձիա-

վորներ ամբողջ թափով սլանում էին դեպի Յերեք հաստ-
լիկների պալատը։

Այդ յերեք ձիերը, նախքան ճակատամարտը պատկա-
նում էին այն յերեք գվարդիականներին, վորոնք տա-
նում էին պարերի դասատու Մինյերկույեռին։ Ճակատա-
մարտից հետո, յերբ նրանցից մեկն սպանվել եր, իսկ
մյուսները հանձնվել էին և անցել էին ժողովրդի կողմը՝
հաղթողները Մինյերկույեռի ջարդված տուփի մեջ գտան
ինչվոր վարդագույն բան, փաթաթված քողով։

Այդ ժամանակ, նրանցից յերեքն անմիջապես ցատկե-
ցին ձեռք բերված ձիերի վրա և սլացան։

Առջևից սլացող կապուտաչյա գվարդիականը կրծքին
սեղմել եր ինչվոր վարդագույն բան, փաթաթված քողով։

Հանդիպողներն այս ու այն կողմ էին նետվում։

Նրա գլխարկի վրա կարմիր նշան կար։ Այդ նշանա-
կում եր, վոր գվարդիականն անցել է ժողովրդի կողմը։

Այդ ժամանակ, հանդիպողները, յեթե նրանք հաստ-
լիկներ կամ վորկրամոլներ չէին, ծափահարում էին նրա
յետևից։ Բայց ուշադիր նայելով, զարմանքից քարանում
էին։— այն փաթեթից, վոր գվարդիականը բռնել եր իր
կրծքի վրա, կախվել էին աղջկա վոտքեր վարդագույն
կիսակոշիկներով, վոր փակիչների փոխարեն ունեին վոսկե
վարդեր։։։

ԳԼՈՒԽ 13

ՇԱՂԹԱՆԱԿ

Հենց նոր մենք նկարագրեցինք առավոտն իր անսովոր
դեպքերով, իսկ այժմ դառնանք յետ և նկարագրենք գի-
շերը, վորը նախորդել եր այդ առավոտվան և լիքն եր
յեղել, ինչպես դուք արդեն գիտեք, վոչ պակաս զարմա-
նալի դեպքերով։

Այդ գիշեր զինագործ Պրոսպերոն փախավ Յերեք հաստ-
լիկների պալատից, այդ գիշեր Սուոկը բռնվեց հանցագոր-
ծության վայրում։

Բացի դրանից, այդ գիշեր յերեք մարդ, ծածկված
լապտերներով մտան թագաժառանգ Տուլթիի ննջա-
րանը։

Այդ տեղի ունեցավ մոտավորապես մի ժամ հետո այն
բանից, յերբ զինագործ Պրոսպերոն ավերեց պալատի
անուշարանը և գվարդիականները Սուոկին գերի վերցրին
փրկարար կաթսայի մոտ։

Ննջարանում մութն եր։

Բարձր լուսամուտները լցված էին աստղերով։

Տղան ամուր քնել եր, շնչելով շատ հանգիստ ու հան-
դարտ։

Յերեք մարդիկն ամեն կերպ աշխատում էին թագց-
նել իրենց լապտերների լույսը։

Ի՞նչ արեցին նրանք, անհայտ է։ Լսվում եր միայն շշուկ։ Պահակը, վոր կանգնել եր ննջարանի դռների մոտ դրսի կողմից, շարունակում եր կանգնած մնալ, կարծես վոչինչ չեր պատահել։

Ըստ յերևույթին, թագաժառանգի մոտ մտած յերեքն ինչվոր իրավունք ունեցին տիրաբար վարվել նրա ննջարանում։

Դուք արդեն գիտեք, վոր թագաժառանգ Տուլթիի դաստիարակները աչքի չեյին ընկնում հատուկ քաջությամբ։ Դուք կհիշեք, ինչպես վախեցել եր դաստիարակն այդու քսումելի տեսարանի ժամանակ, յերբ գվարդիականները սուսերներով խողխողեցին տիկնիկին։ Դուք տեսաք, թե ինչպես վախենում եր դաստիարակը, վորն այդ տեսարանի մասին պատմում եր Յերեք հատալիկներին։

Այս անգամ, հերթապահ դաստիարակը դուրս յեկավ նույնպիսի մի վախկոտը։

Պատկերացրեք, նա գտնվում եր ննջարանում, յերբը ներս մտան յերեք անծանոթները լապտերներով։ Նա նստել եր լուսամուտի մոտ, հակելով թագաժառանգի քունը, և, վորպեսզի ինքը չքնի, նայում եր աստղերին և ստուգում եր իր աստղաբանական գիտելիքները։

Բայց այդտեղ, ճռռաց դուռը, փայլեց լույսը և յերևացին յերեք խորհրդավոր կերպարանքները։ Այդ ժամանակ, դաստիարակը թաղնվեց բազկաթոռի մեջ։ Ամենից շատ նա վախենում եր, վոր իր յերկար քիթն իրեն կմատնի։ Յեվ իրոք, այդ զարմանալի քիթը հատակորեն սևին եր տալիս աստղալից լուսամուտի ֆոնի վրա և իսկույն կարող եր նկատվել։



Բայց վախկոտն իրեն հանգստացնում էր։

«Ահա, նրանք կկարծեն, թե դա մի տեսակ զարդարանք է բազկաթոռի թևի վրա կամ դիմացի տան կարնիզն է»։

Յերեք կերպարանքները, լապտերների դեղին լույսերով հագիվ լուսավորված՝ մոտեցան թագաժառանգի մահճակալին։

— Կա, — լսվեց մի շշունջ։

— Քնած է, — պատասխանեց մյուսը։

— Ս ս ս+++

— Վոչինչ։ Նա ամուր է քնած։

— Յեվ այդպես, գործեցեք։

Ինչ վոր բան զընգաց։

Դատարակի ճակատը սառը քրտինքով պատեց։ Նա զգաց, վոր իր քիթը սարսափից մեծանում է։

— Պատրաստ է, — ֆշշաց ինչվոր մեկի ձայնը։

— Տվեք։

Նորից ինչվոր բան զընգաց, հետո բլխկաց և կարկաչեց։ Յեվ հանկարծ, նորից լռություն տիրեց։

— Ո՞ւր լցնել։

— Ականջը։

— Նա քնել է այտը բարձին դրած։ Դա հենց շատ հարմար է։ Լցրեք ականջը+++

— Միայն թե, զգուշ։ Կաթիլ առ կաթիլ։

— Ուղիղ տանը կաթիլ։

— Առաջին կաթիլը կթվա սարսափելի սառը, իսկ յերկրորդը չի առաջացնի վոչ մի զգացում, վորովհետև առաջինն ազդում է անմիջապես։ Դրանից հետո կանհետանա վորևե զգացողություն։

— Աշխատեցեք հեղուկը լցնել այնպես, որ առաջին և յերկրորդ կաթիլի միջև ոչ մի ընդմիջում չլինի։

— Ապա թե ոչ աղան կաբթնանա, ինչպես սառուցի հպումից։

— Սսս... Լցնում եմ... Մեկ — յերկու։

Յեվ այստեղ, դաստիարակն զգաց մի ուժեղ հոտ, որը տարածվեց ամբողջ սենյակում։

— Յերեք-չորս-հինգ-վեց, — հաշվում եր ինչպոր մեկի ձայնն արագ շշունջով։

— Պատրաստ ե։

— Այժմ նա յերեք որ կքնի անսթափ քնով։

— Յեվ նա չի իմանա, թե ինչ պատահեց իր տիկնիկի հետ...

— Նա կարթնանա, յերբ որ ամեն ինչ վերջացած կլինի...

— Ապա թե ոչ, կարելի յե ասել, որ նա կսկսեր լաց լինել, վոտքերը դեսնին խփել, և վերջ ի վերջո, Յերեք հասալիկները պիտի ներեյին աղջկան և կյանքը նրան շնորհեյին...

Յերեք անծանոթներն անհետացան։ Դողդողացող դաստիարակը վեր կացավ։ Վառեց փոքրիկ լապտերը, որ վառվում եր նարնջագույն ծաղկի կերպարանքով և մոտեցավ մահճակալին։

Թագժառանգ Տուլթին պառկել եր ժանյակների մեջ, մետաքսե ծածկոցների տակ, փոքրիկ ու հանդիսավոր։

Ահագին բարձերի վրա յերևում եր նրա գլուխը խառնոտված վոսկեգույն մազերով։

Դաստիարակը կռացավ և լապտերը մոտեցրեց տղայի դունատ դեմքին։ Փոքրիկ ականջում փայլում եր կաթիլը, ինչպես մարգարտահատը խեցու մեջ։

Վոսկեգույն-կանաչ լույսը լցվում եր նրա մեջ։ Դաստիարակը ճկույթը կպցրեց կաթիլին։ Փոքրիկ ականջում վոչինչ չմնաց, իսկ դաստիարակի վողջ ձեռքով անցավ սուր, անտանելի մի ցուրտ։

Տղան քնել եր անսթափ քնով։

Իսկ մի քանի ժամ հետո վրա հասավ այն դեղեցիկ առավոտը, որը, մենք արդեն բավականություն ունեցանք նկարագրելու մեր ընթերցողներին։

Մենք գիտենք, թե ինչ տեղի ունեցավ այդ առավոտ պարերի դասատու Մինյերկույեռի հետ, բայց մեզ ավելի հետաքրքիր ե իմանալ թե ինչ պատահեց այդ առավոտ Սուոկի հետ։ Ախր մենք նրան թողեցինք այնպիսի սարսափելի դրության մեջ։

Սկզբում վորոշվեց գցել նրան ստորերկրյա տեղը։

— Վոչ, այդ չափազանց բարդ ե, — ասաց պետական կանցլերը։ — Մենք կսարքենք շտապ և արդար դատաստան։

— Ի հարկե, կարիք չկա այդ փոքրիկ աղջկա հետ յերկար գլուխ դնել, — համաձայնվեցին Յերեք հասալիկները։

Այնուամենայնիվ, միք մոռանա, որ Յերեք հասալիկներն ունեցան չափազանց անախորժ բոպեներ, խուսափելով հովազից։ Նրանց հարկավոր եր հանգստանալ։ Նրանք ասեցին այսպես։

— Մենք կքնենք մի քիչ։ Իսկ առավոտյան դատ կսարքենք։

Այս խոսքերով նրանք ցրվեցին իրենց ննջարանները։

Պետական կանցլերը, որը չեր կասկածում այն բանում, որ դատարանը մահվան վճիռ կհանի տիկնիկի համար, որը դուրս եր յեկել իսկական աղջիկ, — հրաման

տվեց քնացնել Թագաժառանգ Տուբթիին, վորպեսզի նա իր արցունքներով չմեղմացնի սարսափելի դատավճիռը։

Յերեք լապտերավոր մարդիկ, ինչպես դուք արդեն գիտեք, արեցին այդ։

Թագաժառանգ Տուբթին քնեց։

Սուոկը նստած եր պահականոցում։ Պահականոցն անվանվում եր կորդեգարդիա։ Յեվ այսպես, Սուոկն այդ առավոտ նստել եր կորդեգարդիայում։ Նրան շրջապատել եյին գվարդիականները։ Յեթե մի կողմնակի մարդ մտներ կորդեգարդիա, շատ պիտի զարմանար, թե ինչու այդ լավ, վշտահար աղջիկն իր անսովոր կերպով շքեղ վարդագույն հագուստով գտնվում է գվարդիականների միջև։ Նրա տեսքը բոլորովին չեր սազում կորդեգարդիայի կոպիտ շրջապատում, վորտեղ թափված եյին թամքեր, զենքեր, գարեջրի գավաթներ։

Գվարդիականները կարտ եյին խաղում, ծխում եյին կապույտ հոտավետ ծուխն իրենց ծխամորճերից, հայհոյում եյին, յուրաքանչյուր րոպե կռվի բռնվում։

Այդ գվարդիականները դեռ հավատարիմ եյին Յերեք հատալիկներին։ Նրանք սպառնում եյին Սուոկին ահագին բռունցքներով, դեմքերն եյին ծամածռում նրա հանդեպ և վոտքերն եյին գետին խփում։

Սուոկն այդ ամենին վերաբերվում եր հանգիստ։ Վորպեսզի ազատվի նրանց ուշադրությունից և դաղի նրանց, նա լեզուն դուրս հանեց և դառնալով միանգամից դեպի բոլորը, նստեց այդ ծամածռությամբ մի ամբողջ ժամ։

Նստել տակառի վրա՝ նրան թվաց բավական հարմար։ Ճիշտ է, այդտեղ նստելուց հագուստը կեղտոտվում եր,

բայց առանց դա յել, նա կորցրել եր իր նախկին տեսքը։—Նրան ճղճղել եյին ճյուղերը, վառել եյին ջահերը, արորել եյին գվարդիականները, կեղտոտել եյին ոշարակները։

Սուոկը չեր մտածում իր ճակատագրի մասին։ Նրա տարիքի աղջիկները չեն վախենում բացահայտ վտանգից։ Նրանք չեն վախենում իրենց վրա ուղղված ատրճանակի փողից, բայց դրա փոխարեն նրանք սարսափում են մնալ մութ սենյակում։

Նա մտածում եր այսպես։

«Զինագործ Պրոսպերոն ազատ է։ Այժմ նա Թիբուլի հետ միասին չքավորներին բերում է պալատի վրա։ Նրանք ինձ կազատեն»։

Այն ժամանակ, յերբ Սուոկը մտածում եր այդ կերպ, դեպի պալատ եյին սլանում յերեք գվարդիականները, վորոնց մասին մենք խոսել ենք նախորդ գլխում։ Նրանցից մեկը, կապուտաչյան, ինչպես դուք գիտեք, տանում եր ինչվոր խորհրդավոր կապոց, վորից կախվել եյին վարդագույն կիսակոշիկներով վոտքերը, վորոնք վոսկե վարդեր ունեյին փակիչների փոխարեն։

Մոռենալով կամուրջին, վորտեղ կանգնած եր Յերեք հասալիկներին հավասարիմ մի գվարդիական, այդ գվարդիականները պոկեցին իրենց գլխարկների վրայից կարմիր նշանները։

Այդ կարևոր եր նրա համար, վորպեսզի պահակն իրենց ներս թողներ։

Ապա վոչ, յեթե պահակը տեսներ կարմիր նշանները, կկսեր կրակել այդ գվարդիականների վրա, վորովհետև նրանք հանդգնել եյին անցնել ժողովրդի կողմը։

Նրանք սուրացին պահակի մոտից, հազիվ դեռին չգլորելով պետին։

— Ինչպես յերևում է, վորևե շատ կարևոր լուր,— ասաց պետը, վերցնելով իր գլխարկը և փոշին թափ տալով համազգեստի վրայից։

Այդ բոպեյին Սուռոկի համար հասավ վերջին ժամը։ Պետական կանցլերը մտավ կորդեգարդիա։

Գվարդիականները ցատկեցին և զգաստ կանգնեցին, իրենց ահագին ձեռնոցները կողքերն ի վար բռնելով։

— Վո՞ր տեղ է փոքրիկ աղջիկը,— ասաց կանցլերը, ակնոցները բարձրացնելով։

— Յեկ այստեղ,— բղավեց ամենայերկարահասակ գվարդիականը։

Սուռոկը տակառի վրայից իջավ։

Գվարդիականը կոպտաբար բռնեց նրա մեջքից ու բարձրացրեց։

— Յերեք հաստլիկներն սպասում են դատի դահլիճում,— ասաց կանցլերը, ակնոցներն իջեցնելով։— Աղջկան բերեցեք իմ յետևից։

Այս խոսքերով, կանցլերը դուրս յեկավ կորդեգարդիայից։ Գվարդիականը քայլեց նրա յետևից, Սուռոկին իր մի ձեռքից կախ արած։

Ո՛, վոսկե վարդեր, ո՛, վարդագույն մետաքս,— այդ ամենը փչացավ անխիղճ ձեռքով։

Սուռոկը, վորը գվարդիականի սարսափելի ձեռքում կախ ընկած, ցավ էր զգում և անհարմար էր զգում, կսմթեց նրա թևը։

Նա ուժերը հավաքեց և կսմիթն ստացվեց բավական ուժեղ, չնայած համազգեստի հաստ թևնոցին։

— Սատանա,— հայհոյեց գվարդիականն ու աղջկան նետեց։

— Ի՞նչ,— յետ շրջվեց կանցլերը։

Յեվ այդտեղ, կանցլերն զգաց բոլորովին անսպասելի մի հարված իր ականջին։ Կանցլերն ընկավ։

Յեվ նրա յետևից, անմիջապես ընկավ գվարդիականը, վորի հետ Սուռոկը հենց նոր գործ ունեցավ։

Գվարդիականի ականջին ևս խփեցին։ Այն էլ ինչպես։ Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչպիսի ուժգին հարված պիտի լիներ, վորպեսզի անզգա գլորեր այդպիսի ահագին ու չար գվարդիականին։

Նախքան Սուռոկը կկարողանար շուրջը նայել և տեսնել պատճառը, վորը գլորել էր այդ յերկու մարդկանց, ինչվոր մեկի ձեռքերը նրան ևս հափշտակեցին ու տարան։

Դրանք ևս կոպիտ և ուժեղ ձեռքեր էին, բայց նրանք թվում էին բարի և նրանց մեջ Սուռոկն իրեն զգում էր ավելի հարմար, քան այն գվարդիականի ձեռքերի մեջ, վորը փռվել էր այժմ փայլուն հատակին։

— Մի վախենա,— շշնջաց նրան ինչվոր մեկի ձայնը։

Հաստլիկներն անհամբեր սպասում էին դատի դահլիճում։ Նրանք իրենք էին ուզում դատել խորամանկ տիկնիկին։ Նրանց շուրջը նստել էին պաշտոնյաներ, խորհրդականներ, դատավորներ ու քարտուղարներ։ Բազմագույն կեղծամները,— մորագույն, յերկնագույն, վառ-կանաչ, դեղին, սպիտակ ու վոսկեգույն,— բոցկլտում էին արևի ճառագայթների մեջ։ Բայց նույնիսկ արևի ուրախ ճառագայթը չէր կարող պճնազարդել այդ կեղծամների տակի փքված կերպարանքները։

Յերեք հասալիկներն առաջվա պես նեղվում էին շոդից։ Քրտինքը շաղ եր գալիս նրանցից սիսեռի նման և փչացնում եր նրանց առջև դրված թղթերի թերթերը։ Քարտուղարները յուրաքանչյուր րոպե փոխում էին թղթերը։

— Մեր կանցլերը հարկադրում է յերկար սպասել իրեն,— ասաց առաջին հասալիկը, շարժելով մատները, ինչպես խեղդվող։

Վերջապես, յերկար սպասվածները հայտնվեցին։

Յերեք գվարդիականները մատն դահլիճ։ Մեկը բռնել եր ձեռքի վրա աղջկան։ Ո՛, վորքան վշտահար եր նա յերևում։

Վարդագույն զգեստը, վոր նախորդ որը զարմացնում եր իր փայլով և ճաշակավոր ծալքերով, այժմ վերածվել եր թշվառ ցնցոտիների։ Թոռոմել էին վոսկե վարդերը, ցրվել էին մետաղազարդերը, տրորվել ու զզզվել եր մետաքսը։ Աղջկա գլուխը տխուր թեքվել եր գվարդիականի ուսի վրա։ Աղջիկը մահու չափ գունատ եր և նրա գեղեցիկ, մոխրագույն աչքերը մարել էին։

Թայտաբդետ հագուստներով հավաքվածները գլուխները բարձրացրին։

Յերեք հասալիկները ձեռները տրորեցին։

Քարտուղարները հանեցին յերկար գրիչներն իրենց վոչ պակաս յերկար ականջների յետևից։

— Այդպես,— ասաց առաջին հասալիկը։— Իսկ վո՞րտեղ է պետական կանցլերը։

Այն գվարդիականը, վոր բռնել եր աղջկան, կանգնեց հավաքույթի առջև ու զեկուցեց։ Նրա կապույտ աչքերն ուրախ փայլում էին։

— Ճանապարհին, պարոն պետական կանցլերի հետ, տեղի ունեցավ ստամոքսի խանգարում։

Այդ բացատրությունը բոլորին բավարարեց։

Դատն սկսվեց։

Գվարդիականը խեղճ աղջկան նստացրեց կոպիտ նստարանի վրա, դատավորների առջև։ Նա նստել եր, գլուխը խոնարհած։

Առաջին հասալիկն սկսեց հարցաքննությունը։

Բայց այդտեղ հանդիպեց միանգամայն կարևոր մի արգելք։— Սուոկը չեր ուզում վոչ մի հարցի պատասխանել։

— Շատ լավ,— բարկացավ հասալիկը։— Շատ լավ։ Ավելի վատ նրա համար։ Նա մեզ պատասխանի չի արժանեցնում,— լավ։։։ Նրա համար մենք ավելի սարսափելի պատիժ կմտածենք։։։

Սուոկը չեր շարժվում։

Յերեք գվարդիականները, կարծես քարացած, կանգնել էին զանազան կողմերում։

— Կանչել վկաներին,— կարգադրեց հասալիկը։

Վկան միայն մեկն եր։ Նրան ներս առաջնորդեցին։ Դա հարգելի կենդանաբանն եր,— գաղանանոցի հսկիչը։ Ամբողջ գիշերը նա ճյուղից կախ եր մնացել։ Նրան միայն այժմ էին իջեցրել։ Նա հենց այդպես էլ մտավ,— գունավոր խալաթով, շերտավոր սպիտակեղենով, գիշերային գլխանոցով։ Գլխանոցի ծոպը քաշ եր գալիս նրա յետևից գետնի վրայով, ինչպես աղիք։

Տեսնելով Սուոկին, վորը նստել եր նստարանի վրա, կենդանաբանը սարսափից որորվեց։ Նրան պահեցին։

— Պատմեցեք, ինչպես յեղավ գործը։

Կենդանաբանն սկսեց մանրամասն պատմել։ Նա հաղորդեց այն մասին, թե ինչպես, բարձրանալով ծառը, նա ճյուղերի միջև տեսել եր թագաժառանգ Տութթիի տիկնիկին։ Բանի վոր, նա յերբեք չեր տեսել կենդանի տիկնիկների և չեր յենթադրում, վոր տիկնիկները գիշերներով բարձրանում են ծառերի վրա, նա չափազանց վախեցել եր և ուշագնաց եր յեղել։

— Ի՞նչպես նա ազատեց զինագործ Պրոսպերոյին։

— Չգիտեմ։ Յես չեմ տեսել և չեմ լսել։ Իմ ուշագնացությունս չափազանց խորն եր։

— Կպատասխանե՞ս դու մեզ, զզվելի աղջիկ, այն մասին, թե ինչպես զինագործ Պրոսպերոն հայտնվեց ազատության մեջ։

Սուոկը լռում եր։

— Ցնցեցեք նրան։

— Լավ ցնցեցեք,— հրամայեցին հասալիկները։

Կապուտաչյա գվարդիականը ցնցեց աղջկա ուսերից։ Բացի դրանից, ցավագինորեն չբխկացրեց նրա ճակատին։ Սուոկը լուռ եր։

Հասալիկները ֆշշում եյին զայրույթից։ Բազմագույն գլուխները հանդիմանորեն որորվում եյին։

— Ըստ յերևույթին,— ասաց առաջին հասալիկը,— վոչ մի մանրամասնություն մեզ չի հաջողվի իմանալ։

Այդ խոսքերի հետ, կենդանաբանն իր ձեռքը ճակատին խփեց։

— Յես գիտեմ, թե ինչ պետք է անել։

Հավաքույթն ուշադրությունը լարեց։

— Գազանանոցում կան թութակների վանդակներ։ Այնտեղ հավաքված են ամենահազվագույտ տեսակի թութակներ։ Ձեզ իհարկե հայտնի յե, վոր թութակը գիտե հիշել և կրկնել մարդկային խոսքերը։ Շատ թութակներ ունեն հրաշալի լսողություն և հիանալի հիշողություն։։։ Յես կարծում եմ, վոր նրանք մտքերն են պահել այն ամենը, ինչ վոր խոսվել է այս գիշեր գազանանոցում, այս աղջկա և զինագործ Պրոսպերոյի մեջ։։։ Դրա համար ել յես առաջարկում եմ դատի դահլիճ կանչել իմ զարմանալի թութակներից վորևե մեկին, իբրև վկա։

Խրախուսանքի աղմուկն անցավ հավաքույթով։

Կենդանաբանը գնաց գազանանոց և շուտով վերադարձավ։ Նրա ցուցամատի վրա նստել եր մեծ, ծեր մի թութակ, յերկար ու կարմիր մորուքով։

Հիշեցեք։— յերբ Սուոկը գիշերով շրջում եր գազանանոցով, նրան կասկածելի թվաց թութակներից մեկը։ Հիշեցեք։— նա տեսավ, թե ինչպես թութակը նայում եր նրան և ինչպես քնած ձևանալով, ժպտում եր իր յերկար կարմիր մորուքի մեջ։

Յեվ այժմ, կենդանաբանի մատի վրա, նույնքան հարմար, վորքան և իր արծաթե թառի վրա, նստել եր հենց այդ կարմրամորուք թութակը։

Այժմ նա ժպտում եր բոլորովին անյերկմիտ, ուրախ, վոր մատնելու յե խեղճ Սուոկին։

Կենդանաբանը խոսեց նրա հետ գերմաներեն։ Թութակին ցույց տվեցին աղջկան։

Այն ժամանակ, նա թափահարեց թևերը և ճչաց։

— Սուոկ, Սուոկ։

Նրա ձայնը նման եր ճռճռոցին այն հին դռնակի, վորին քամին պոկում է իր ժանգոտված փականներից։

Հավաքույթը լռում եր։

Կենդանաբանը հաղթ ժպտում էր։

Իսկ թութակը շարունակում էր հաղորդել իր մատնությունը։ Նա հաղորդեց իսկապես այն, ինչվոր լսել էր գիշերով։ Այնպես վոր, յեթե ձեզ հետաքրքրում է զինագործ Պրոսպերոյի ազատվելու ամբողջ պատմությունը, ապա լսեցեք այն ամենը, ինչ վոր պիտի ճչա թութակը։

Ո, այդ իսկապես վոր, հազվադյուտ ցեղի թութակ էր։ Զխոսելով արդեն գեղեցիկ, կարմիր մորուքի մասին, վորը պատիվ կարող էր բերել ամեն մի զորավարի, թութակն ամենահմուտ կերպով վերարտադրում էր մարդկային խոսքերը։

— Ո՞վ ես դու,— ճրճրթաց նա ադամարդկային ձայնով։

Յեվ հենց այդտեղ էլ, չափազանց նուրբ, նմանեցրեց աղջկա ձայնը։

— Յես — Սուսոկն եմ։

— Սուսոկ։

— Ինձ ուղարկել է Թիբուլը։ Յես տիկնիկ չեմ։ Յես կենդանի աղջիկ եմ։ Յես յեկել եմ քեզ ազատելու։ Դու ինձ չտեսաք, յերբ մտա գազանանոց։

— Վոչ։ Յես, կարծեմ, քնած եյի։ Յես այսոր քնեցի առաջին անգամ։

— Յես քեզ եմ փնտրում գազանանոցում։ Յես այստեղ տեսա մի հրեշի, վորը խոսում էր մարդկային ձայնով։ Յես կարծում եյի, վոր այդ դու յես։ Հրեշը մեռավ։

— Դա Թուքն էր։ Նշանակում է, նա մեռավ։

— Մեռավ։ Յես վախեցա և բղավեցի։ Յեկան գվարդիականները և յես թաղնվեցի ծառի վրա։ Յես այնքան ուրախ եմ, վոր դու կենդանի յես։ Յես յեկել եմ քեզ ազատելու։



— Իմ վանդակս ամուր փակված է։

— Ինձ մոտ գտնվում է քո վանդակի բանալին...

Յերբ թութակը ճղճղաց վերջին նախադասությունը, ընդհանուր զայրույթը տիրեց բոլորին։

— Ախ, ստոր աղջիկ, — վորոտացին հասալիկները։ — Այժմ ամեն ինչ հասկանալի յե։ Նա հափշտակել է բանալին թագաժառանգ Տութթիից և բաց է թողել զինագործին։ Զինագործը փշրել է իր շղթան, ջարդել է հովազի վանդակը և բռնել է գազանին, վոր ազատ անցնի պալատով։

— Այո։

— Այո։

— Այո։

Իսկ Սուոկը լռում եր։

Թութակը դրականորեն ցնցեց մորուքը և յերեք անգամ թևերը թափահարեց։ Դատը վերջացավ։

Դատավճիռն այսպես եր։—

«Կարծեցյալ տիկնիկը խաբել է թագաժառանգ Տութթիին։ Նա բաց է թողել ամենամեծ խռովարար և Յերեք հասալիկների թշնամի զինագործ Պրոսպերոյին։ Նրա պատճառով վոչնչացավ ամենալավ հովազը։ Դրա համար, ստախոսը դատապարտվում է մահվան։ Նրան պիտի գիշատեն գազանները»։

Յեվ, պատկերացրեք ձեզ, յերբ նույնիսկ դատավճիռը կարդացվեց, Սուոկը վոչ մի շարժում չարավ։

Վողջ հավաքույթը շարժվեց դեպի գազանանոց։ Գազանների վոռնոցը, կլանչոցն ու սուլոցը վողջունեց յերթին։ Ամենից շատ հուզվում եր կենդանաբանը։ Ախր նա գազանանոցի հսկիչն եր։

Յերեք հասալիկները, խորհրդականները, պաշտոնյաները ու մյուս պալատականները տեղավորվեցին տրիբունայի վրա։ Տրիբունան պաշտպանված եր ճաղացանցով։

Ախ, ինչքան քնքուշ լուսավորում եր արևը, ախ, ինչպես կապույտ եր յերկինքը, ինչպես փայլում եյին թութակների թիկնոցները, ինչպես ֆռռում եյին կապիկները, ինչպես թռչկոտում եր կանաչավուն փիղը։

Խեղճ Սուոկ, նա չեր հիանում դրանցով։ Յերևի, սաբսափով լի աչքերով նա նայում եր այն կեղտոտ վանդակին, ուր վազվզում եյին վագրերը։ Նրանք նման եյին բոռերի՝ — համենայն դեպս ունեյին նույն յերանգը՝ — դեղին՝ սրճագույն շերտերով։

Նրանք հոնքերի տակից նայում եյին մարդկանց։ Յերբեմն նրանք անաղմուկ բաց եյին անում կարմիր յերախները, վորոնցից հում մսի հոտ եր գալիս։

Խեղճ Սուոկ։

Մնաք բարև, կրկես, հրապարակներ, Ավգուստ, վանդակում նստած աղվես, սիրելի, մեծ, համարձակ Թիբուլ։

Կապուտաչյա գվարդիականը բերեց աղջկան գաղանանոցի կենտրոնը և դրեց փայլուն, տաք խիճի վրա։

— Թույլ տվեք, — ասաց հանկարծ խորհրդականներից մեկը։ — Իսկ թագաժառանգ Տութթին։ Ախր յեթե նա իմանա, վոր իր տիկնիկը վոչնչացել է վագրերի թաթերում, նա արցունքներից կմեռնի։

— Սաս՛։։ — շշնջաց նրան դրկիցը։ — Սաս՛։։ Թագաժառանգ Տութթին քնացրել են։ Նա քնելու յե անսթափ քնով յերեք որ, իսկ կարող է պատահել, վոր ավելի շատ՛։։

Բոլոր հայացքներն ուղղվեցին խղճուկ վարդագույն խուրձիկին, վոր պառկել եր վանդակների միջև։

Այդ ժամանակ ներս մտավ սանձահարողը, մտրակը շաչելով և ատրճանակը փայլեցնելով։ Յերաժիշտները նվագեցին քայլերգ։ Այդպես Սուոկը վերջին անգամ յելույթ ունեցավ հասարակության առջև։

— Ալե, — բղավեց սանձահարողը։ Վանդակի յերկաթե դուռը դղրդաց։ Վանդակից, ծանր ու անաղմուկ դնելով թաթերը, դուրս վազեցին վագրերը։

Հասալիկները քրքջացին։ Խորհրդականները ծիծաղեցին և ցնցեցին կեղծամները։ Շաչեց մտրակը։

Յերեք վագրեր վազեցին դեպի Սուոկը։

Նա պառկել եր անշարժ, իր անշարժ, մոխրագույն աչքերով նայելով յերկնքին։ Բոլորը տեղերից բարձրացան։ Բոլորը պատրաստ եյին բղավել հաճույքից, տեսնելով գաղանների գործը ժողովրդի փոքրիկ բարեկամի հետ՛։։

Բայց՛։։ Վագրերը մոտեցան, մեկը կռացրեց լայնաճակատ գլուխը, հոտհոտեց, մյուսն իր կատվային թաթով կամ գլուխը, հոտհոտեց, մյուսն իր կատվային թաթով ցնցեց աղջկան, յերրորդը նույնիսկ ուշադրություն չդարձնելով, վազեց նրա մոտով և, կանգնելով տրիբունայի մոտ, սկսեց մռնչալ հասալիկների վրա։

Այդ ժամանակ բոլորը տեսան, վոր դա կենդանի աղջիկ չեր, այլ տիկնիկ, պատառոտված, հին, բոլորովին անպետք տիկնիկ։

Սկանդալը լիակատար եր։ Կենդանաբանը հուսախաբությունից կծեց իր լեզվի կեսը։ Սանձահարողը գաղանների ին յետ վռնդեց վանդակները և, արհամարանքով վոտքով շուռ տալով մեռած տիկնիկին, գնաց հանելու իր կապույտ, վոսկե թելերով զարդարված տոնական զգեստը։

Հասարակությունը լռեց հինգ րոպե։

Յեվ լռությունը խզվեց ամենաանսպասելի կերպով— գաղանանոցի վրա, կապույտ յերկնքում պայթեց ռումբը։

Բոլոր հանդիսականների քթերը կպան տրիբունայի տախտակե հատակին։ Բոլոր գաղանները կանգնեցին յետևի թաթերի վրա։ Անմիջապես պայթեց յերկրորդ ռումբը։ Յերկինքը լցվեց սպիտակ, կլոր ծխով։

— Ի՞նչ է սա, ի՞նչ է սա, ի՞նչ է սա,— թռչում էին կանչերը։

— Ժողովուրդը գրոհում է։

— Ժողովուրդը թնդանոթներ ունի։

— Գվարդիականները դավաճանել են։

— Ո՛։ Ա՛։ Ո՛։։։

Ծառաստանը լցվեց աղմուկով, կանչերով, կրակոցներով։ Խռովարարները խուժել էին ծառաստանը։ — այդ պարզ եր։

Ամբողջ խումբը սկսեց փախչել գաղանանոցից։ Մինիստրները սուսերները մերկացրին։ Հասարակները սարսափելի ճղավում էին։

Ծառաստանում նրանք տեսան հետևյալը։

Ամեն կողմերից գրոհում էին մարդիկ։ Նրանք բազմաթիվ էին։ Մերկ գլուխներ, արյունոտված ճակատներ, պատառոտված շապիկներ, յերջանիկ դեմքեր։ Այդ դալիս եր ժողովուրդը, վոր այդ որը հաղթել եր։ Գվարդիականները խառնվել էին նրանց հետ։ Կարմիր նշանները փայլում էին նրանց գլխարկների վրա։ Բանվորները նույնպես զինված էին։ Զքավորները սրճադույն հագուստներով, փայտե կոշիկներով, մի ամբողջ բանակով առաջ էին շարժվում։ Ծառերը ճկվում էին նրանց ճնշման տակ, թփերը ճարճատում էին։

— Մենք հաղթեցինք,— բղավում եր ժողովուրդը։

Յերեք հասարակները տեսան, վոր փրկություն չկա։

— Վոչ,— վոռնաց նրանցից մեկը։— Ճիշտ չե, գվարդիականներ, կրակեցեք նրանց վրա։

Բայց գվարդիականները կանգնել էին չքավորների հետ միևնույն շարքերում։ Յեվ այդ ժամանակ վորոտաց մի ձայն, վոր ծածկեց վողջ ամբոխի աղմուկը։ Այդ խոսում եր գինագործ Պրոսպերոն։

— Անձնատուր յեղեք, ժողովուրդը հաղթել է։ Վերջացավ հարուստների ու վորկրամոլների թագավորությունը։ Վողջ քաղաքը ժողովրդի ձեռքումն է։ Բոլոր հասարակները գերի յեն վերցված։

Խիտ, խայտաբղետ, ալեկոծվող ամբոխը մոտեցավ հասարակներին։

Մարդիկ ճոճում էին կարմիր դրոշակները, սուսերները, շարժում էին բռունցքները։ Յեվ այդտեղ, սկսվեց յերգը։

Թիբուլն իր կանաչ թիկնոցով, կապված գլխով, վորի կապից արյուն եր կաթում, կանգնել եր Պրոսպերոյի կողքին։

— Այս.յերաշ է,— բղավեց հասարակներից մեկը, ձեռքերով աչքերը փակելով։

Թիբուլն ու Պրոսպերոն յերգեցին։ Հազարավոր մարդիկ խլեցին յերգը։ Նա թռչում եր ամբողջ վիթխարի ծառաստանով, անցնում եր ջրանցքներից ու կամուրջներից։ Ժողովուրդը, վոր քաղաքի դարբասներից գալիս եր դեպի պալատը, լսեց այդ և նույնպես սկսեց յերգել։ Յերգը, ինչպես ծովային ալիք, լողում եր մի ամբոխից մյուսը, ճանապարհով, դարբասների միջով, քաղաքով, բոլոր փո-

ղոցներով, վորտեղ վոտք եյին դնում բանվորներն ու չքավորները։ Յեվ այժմ յերգում եր այդ յերգը վողջ քաղաքը։ Այդ ժողովրդի յերգն եր, վորը հաղթել եր իրեն տանջողներին։

Վոչ միայն իրենց մինիստրների հետ միասին պալատում հանկարծակի բռնված Յերեք հաստլիկներն եյին խեղճացել, կծկվել և մի վողորմելի նախիրի նման հավաքվել այդ յերգի հնչյուններից, այլև բոլոր ֆրանտները քաղաքում, հաստ խանութպանները, վորկրամոլները, վաճառականները, անվանի կանայք, ճաղատ զորավարները,— փախչում եյին սարսափած ու իրար խառնված, կարծես դրանք յերգի բառեր չեյին, այլ կրակոցներ ու կրակ։

Նրանք մի տեղ եյին փնտրում, վորպեսզի թաղնվեն, ականջներն եյին փակում, գլուխները ծածկում եյին թանգագին, ասեղնագործ բարձերով։

Վերջացավ նրանով, վոր հարուստների ահագին ամբոխը փախավ նավահանգիստ, վորպեսզի նստի նավերն ու հեռանա այն յերկրից, վորտեղ նա կորցրել եր ամեն ինչ,— իր իշխանությունը, իր փողերն ու իր քմահաճ, ծույլ կյանքը։

Բայց այստեղ, նրանց շրջապատեցին նավաստիները։ Հարուստները ձերբակալվեցին։ Նրանք թողություն եյին խնդրում։ Նրանք ասում եյին.

— Մեզ ձեռք մի՛ տա։ Մենք ձեզ այլևս չենք հարկադրի, աշխատել մեզ համար...

Բայց ժողովուրդը նրանց չեր հավատում, վորովհետև հարուստները շատ անգամ եյին խաբել չքավորներին ու բանվորներին։

Արևը բարձր կանգնած եր քաղաքի վրա։ Կապույտին եր տալիս մաքուր յերկինքը։ Կարելի յեր մտածել, վոր տոնում են մի մեծ չտեսնված տոն։

Ամեն ինչ ժողովրդի ձեռքումն եր.— զինանոցները, զորանոցները, պալատները, հացի պահեստները, մագազինները։

Ամեն տեղ կանգնել եյին գլխարկների վրա կարմիր նշաններ ունեցող գվարդիական պահակները։

Փողոցների հանգույցակետերում ծածանվում եյին կարմիր դրոշակները, հետևյալ մակագրություններով.

«Այն ամենը, ինչ վոր ստեղծված է չքավորների ձեռքերով, պատկանում է չքավորներին»։

«Կեցցե ժողովուրդը»։

«Կորչեն ծույլերն ու վորկրամոլները»։

Բայց ինչ յեղան Յերեք հաստլիկները։

Նրանց բերեցին պալատի գլխավոր դահլիճը, վորպեսզի ցույց տան ժողովրդին։ Բանվորները կանաչ ծալվածքներ ունեցող մոխրագույն շապիկներով, հրացանները ձեռքերին բռնած, կազմում եյին պահակախումբը։ Դահլիճը փայլում եր արևի հազարավոր բծերով։ Ինչքա՜ն մարդիկ կային այդտեղ։ Բայց ինչքա՜ն տարբերվում եր այդ հավաքույթն այն հավաքույթից, վորի առջև յերգում եր փոքրիկ Սուրոկը, թագաժառանգ Տուլթիի հետ ծանոթանալու որը։ Այստեղ եյին բոլոր այն հանդիսականները, վորոնք ծափահարում եյին նրան հրապարակներում և շուկաներում։

Բայց այժմ նրանց դեմքերն ուրախ եյին և յերջանիկ։ Մարդիկ խռնվել եյին, թռչում եյին մեկ-մեկու մեջքի վրա, ծիծաղում եյին, կատակում։ Վոմանք լալիս եյին

յերջանկությունից, արցունքներն աշխատանքից կեղտոտված ձեռքերով սրբելով։

Յերբեք այդպիսի հյուրեր չեյին տեսել պալատի տոնական դահլիճները։ Յեվ յերբեք դեռ այդքան պայծառ չեր լուսավորել արևը նրանց։

— Սսս։։։

— Լռություն։։։

— Լռություն։։։

Սանդուղքների բարձրում յերևաց գերիների խումբը։ Յերեք հաստլիկները նայում եյին գետնին։ Առջևից գալիս եր Պրոսպերոն և նրա հետ՝ Թիբուլը։

Սյունները շարժվեցին վոգեվորված կանչերից, իսկ Յերեք հաստլիկները խլացան։ Նրանց անցկացրին սանդուղքով, վորպեսզի ժողովուրդը նրանց տեսնի մոտիկից և հավատա, վոր այդ սարսափելի հաստլիկներն իր գերիներն են։

— Ահա, — ասաց Պրոսպերոն, կանգնելով սյան մոտ։ Նրա շեկ գլուխն արևի փայլի տակ վառվում եր անասելի բոցով։ — Ահա, — ասաց նա, — ահա Յերեք հաստլիկները։ Նրանք ճզմում եյին խեղճ ժողովրդին։ Նրանք հարկադրում եյին մեզ՝ աշխատել մինչև արյունալի քրտինքը և ամեն ինչ խլում եյին մեզանից։ Տեսեք, թե ինչպես են նրանք ճարպակալել։ Մենք հաղթեցինք նրանց։ Այժմ մենք կաշխատենք մեզ համար, մենք բոլորս կլինենք հավասար։ Մեզ մոտ չեն լինի վոչ հարուստներ, վոչ ծույլեր, վոչ վորկրամոլներ։ Յեթե մեզ համար լավ լինի, մենք բոլորս կլինենք կուշտ և հարուստ։ Յեթե վատ լինի, — ապա թող գիտենանք, վոր չկա վորևե մեկը, վորը ճարպակալում է այն ժամանակ, յերբ մենք սոված ենք։։։

— Ուռա՜... Ուռա՜... — տարածվեցին կանչերը։

Յերեք հասալիկները փնչում էյին։

— Այսոր մեր հաղթանակի որն է։ Նայեցեք, թե ինչպես է փայլում արևը։ Լսեցեք, թե ինչպես են յերգում թռչունները։ Տեսեք, թե ինչպես են բուրում ծաղիկները։

— Հիշեցեք այս որը, հիշեցեք այս ժամը։

Յեվ յերբ հնչեց «ժամը» բառը, բոլոր գլուխները շուռ յեկան այն կողմը, ուր ժամացույցն եր։

Ժամացույցը կախվել եր յերկու այուների միջև, վորմախորշի մեջ։ Դա մի ահագին կաղնեփայտի արկղ եր, փորագիր և եմալե զարդարանքներով։ Կենտրոնում սևին եր տալիս սկավառակը՝ թվերով։

«Ժամի քանիսն է», — մտածեց յուրաքանչյուրը։ Յեվ հանկարծ... (Սա արդեն, վերջին «հանկարծ»-ն է մեր վեպում)...

Հանկարծ կաղնեփայտյա արկղի դուռը բացվեց։ Ներսում վոչ մի մեխանիզմ չկար։ Ժամացույցի վողջ մեքենան ջարդված եր։ Յեվ պղնձե շրջանակների ու զսպանակների փոխարեն, այդ պահարանում նստել եր վարդագույն, փայլող ու պսպղացող Սուոկը։

— Սուոկ, — շունչ առավ դահլիճը։

— Սուոկ, — աղմկեցին յերեխաները։

— Սուոկ, Սուոկ, Սուոկ, — վորոտացին ծափահարությունները։

Կապուտաչյա գվարդիականն աղջկան պահարանից դուրս հանեց։ Դա նույն կապուտաչյա գվարդիականն եր, վորը պարերի դասատու Մինյերկույեռի կարտոնե տուփից հափշտակել եր թագաժառանգ Տուբթիի տիկնիկը։ Նա յեր բերել նրան պալատ, նա յեր բռունցքի հարվա-

ծով դեպին գլորել պետական կանցլերին ու գվարդիակա-
նին, վորը տանում եր կենդանի, խեղճ Սուոկին։ Նա յեր
թագցրել Սուոկին ժամացույցի պահարանում և նրան փո-
խարինել մեռած, գզգզված տիկնիկով։ Հիշեցեք, թե ինչ-
պես դատի դահլիճում նա ցնցեց այդ խրավիլակի ուսե-
րից և ինչպես նա նրան տվեց գազաններին հոշոտելու...

Աղջկան ձեռքից ձեռք տվեցին։ Մարդիկ, վորոնք ան-
վանում եյին նրան աշխարհի ամենալավ պարուհի, մար-
դիկ, վորոնք նրա գորգի վրա եյին նետում իրենց վերջին
դրամները,—նրան վերցնում եյին իրենց գիրկը, շշնջում
եյին «Սուոկ», համբուրում եյին, սեղմում եյին իրենց
պատառոտված կրծքին։ Այնտեղ, կոպիտ շապիկների տակ,
ծածկված մրով ու ձյութով, թակում եյին տանջահար,
մեծ, քնքշությամբ լիքը սրտեր։

Սուոկը ծիծաղում եր, խառնում եր նրանց խառնի-
փնթոր մազերը, փոքրիկ ձեռքերով մաքրում եր թարմ
արյունը նրանց դեմքերից, քաշքշում եր յերեխաներին
և դեմքն եր ծամածռում նրանց դեմ, լալիս եր և ինչվոր
անհասկանալի բան եր թոթովում։

— Տվեք նարն այստեղ,—ասաց զինագործ Պրոսպե-
ռոն դողացող ձայնով։ Շատերին թվաց, վոր նրա աչքերում
փայլում են արցունքներ։—Նա իմ ազատարարուհին է։

— Այստեղ, այստեղ,—բղավեց Թիբուլը, թափահա-
ռելով կանաչ թիկնոցը, ինչպես մի ուռուցիկ, ահագին
թերթ։—Նա իմ փոքրիկ ընկերուհիս է։ Յեկ այստեղ, Սուոկ։

Իսկ հեռվից, ամբոխը ճեղքելով, շտապում եր փոքրիկ,
ժպտուն դոկտոր Գասպարը...

Յերեք հաստլիկներին նստեցրին հենց նույն վանդակը,
ուր նստել եր զինագործ Պրոսպերոն։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մի տարի անց, աղմկոտ և ուրախ տոն եր։ Ժողո-
վուրդը տոնում եր Յերեք հաստլիկների իշխանության տա-
կից ազատագրվելու առաջին տարեդարձը։

Աստղի հրապարակում ներկայացում եր կազմակերպ-
ված յերեխաների համար։

Աֆիշաների վրա նկարված եյին հետևյալ մակագրու-
թյունները.—

«Սուոկ։ Սուոկ։ Սուոկ»։

Հազարավոր յերեխաներ սպասում եյին սիրելի դերա-
սանուհու հայտնվելուն։ Յեվ այդ տոնական որը նա ներ-
կայացում եր տալիս վոչ մենակ.—մի փոքրիկ տղա, մի
քիչ նման իրեն, միայն թե վոսկե մազերով, նրա հետ միա-
սին բարձրացավ բեմի վրա։

Այդ նրա յեղբայրն եր։ Իսկ առաջ, նա թագաժառանգ
Տութթին եր։

Քաղաքն աղմկում եր, փողփողում եյին դրոշակները,
բաց վարդերը շաղ եյին գալիս ծաղկավաճառուհիների ծաղ-
կանոթներից, թռչկոտում եյին բազմագույն փետուրներով
զարդարված ձիերը, պտտվում եյին կարուսելները, իսկ
Աստղի հրապարակում, փոքրիկ հանդիսատեսները շուն-
չերը պահած, հետևում եյին ներկայացմանը։

Հետո Սուոկն ու Տութթին ծածկվեցին դեպի նրանց նետված ծաղիկների տակ։ Յերեխաները շրջապատեցին նրանց։

Սուոկն իր նոր զգեստի գրպանից հանեց մի փոքրիկ տախտակ և ինչ վոր բան կարդաց յերեխաներին։

Մեր ընթերցողները կհիշեն այդ տախտակը։ Մի սարսափելի դիշեր, մեռնող խորհրդավոր մարդը, վոր նման եր գայլի, գաղանանոցի տխուր վանդակից այդ տախտակը հանձնեց նրան։։։

Ահա ինչ եր գրված նրա վրա։

«Դուք յերկուսն եյիք, քույր ու յեղբայր, — Սուոկ և Տութթի։ Յերբ դուք դարձաք չորս տարեկան, Յերեք հաստելիկների գվարդիականները ձեզ հափշտակեցին հարազատներից։ Յես, — Թուբա, գիտնական եմ։ Ինձ բերեցին պալատ։ Ինձ ցույց տվեցին փոքրիկ Սուոկին և Տութթիին։ Յերեք հաստելիկներն ասեցին այսպես։ — ահա տեսնում ես աղջկան։ Սարքիր մի տիկնիկ, վորը չտարբերվի այս աղջկանից։ Յես չգիտեյի թե ինչու համար է այդ հարկավոր։ Յես սարքեցի այդ տիկնիկը։ Յես մեծ գիտնական եյի։ Տիկնիկը պետք է աճեր, ինչպես կենդանի աղջիկ։ Սուոկը հինգ տարեկան, տիկնիկը նույնպես։ Սուոկը կդառնար չափահաս, լավ և վշտոտ աղջիկ, տիկնիկը նույնպես կլիներ այդպիսին։ Յես սարքեցի այդ տիկնիկը։ Այդ ժամանակ ձեզ անջատեցին։ Տութթին մնաց պալատում տիկնիկի հետ, իսկ Սուոկին տվեցին շրջիկ կրկեսին, փոխարինելով նրան հազվագյուտ տեսակի մի թութակի հետ, յերկար կարմիր մորուքով։ Յերեք հաստելիկները հրամայեցին ինձ։ — հանիր աղայի սիրտը և սարքիր նրա համար յերկաթե սիրտ։ Յես հրաժարվեցի։ Յես ասեցի, վոր չի

կարելի մարդուն գրկել իր մարդկային սրտից, որ վոչ մի սիրտ, — վոչ յերկաթե, վոչ-սառուցե, վոչ վոսկե, չի կարելի տալ մարդուն հասարակ, իսկական, մարդկային սրտի փոխարեն։ Ինձ նատեցրին վանդակ և այն ժամանակից սկսեցին տղային թելադրել, թե նրա սիրտը յերկաթից է։ Նա պետք է հավատար դրան և լիներ խիստ ու դաժան։ Յես նատեցի դաղանների միջև ուլթը տարի։ Յես ծածկվեցի բրդով և իմ տատմներս դարձան յերկար ու դեղին, բայց յես չմոռացա ձեզ։ Յես ձեզանից ներողություն եմ խնդրում։ Մենք բոլորս անտերունչ եյինք դարձել Յերեք հատ-լիկների կողմից, ճնշվել հարուստների և ագահ վորկրամոլների կողմից։ Ներիր ինձ, Տուլթի, վոր անտերունչների լեզվով նշանակում է «անջատված»։ Ներիր ինձ, Սուսի, վոր նշանակում է՝ «ամբողջ կյանք»։։։

Перевел с русского **М. Армен**
Технический редактор **И. Карамян**
Обложка **Л. Генча**

ЮРИЙ ОЛЕША

ТРИ ТОЛСТЯКА

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва. Армянский переулок, 2. Заказ 391.
Главлит № В—41898. Т. 3100. Сд. в наб. 10/III-35 г.
Подп. к печ. 20/V-35 г. Печ. л. 16¹/₈. В п. л. 26000 з.

ՀՀ Ազգային գրադարան
NL0390799

5582
Нарн.
Н3-1219а